

ՄԱՍԻՍ

ՇԱԲԱԹԱԹԵՐԹ

34րդ. ՏԱՐԻ ԹԻԻ 48-49 (1698-99) ՇԱԲԱԹ, ՅՈՒՆՈՒՄՐ 3, 2015
VOLUME 34, NO. 48-49 (1698-99) SATURDAY, JANUARY 3, 2015



Պաշտօնաթերթ
Ս. Դ. Հնչակեան Կուսակցության
Արևմտեան Ամերիկայի

MASSIS Weekly
1060 N. Allen Ave. Suite 101
Pasadena, California 91104



ՔԱՆՆԵՐՈՒ ՀԱԿՏՔՈՎ
ՔԱՆ ՀԱԶԱՐՆԵՐՈՎ



1915-2015
Centennial of the
Armenian Genocide

ՅԻՉՈՒՄ ԵՄ ԵՒ ՊԱՀԱՆՋՈՒՄ
I remember and Demand

ՄԱՍԻՍ - 2015

ԽՄԲԱԳՐԱԿԱՆ

ՄԵՐ ԱՆՄՆԱՑՈՐԴ ՄԱՂԹԱՆՔՆ Է, ՈՐ ԱՇԽԱՐՀ ԿԵՐԱԳՏՆԷ ԻՐ ԵՐԲԵՄՆԻ ԽԱՂԱՂՈՒԹԻՒՆԸ

Դիմաւորեցիմ 2015 թուագրեալ Նոր Տարին: Նոր Տարուայ տօնական օրերու նախօրէին, աշխարհով մէկ մարդիկ, ուրախութեամբ, խանդավառութեամբ եւ լաւատեսութեամբ կը դիմաւորեն զայն: Այդ առիթով, անոնք կաղանդեան աւանդութիւններով տօնածառ կը շտկեն իրենց տուններէն ներս: Լուսեղէն եւ գունագեղ զարդարանքներով կը պանունեն իրենց խանութները, շուկաներուն գլխաւոր փողոցները, որոնք իրենց տօնածառի խալտարէտ լոյս ու զարդարանքի գեղեցկութեամբ կը հմայեն ամէն անցորդ, այցելու կամ յանախորդ:

Տիրող խանդավառութիւնը իր բացատրութիւնը կրնայ գտնել աւանդական բնոյթի այն լաւատես դատողութեան կամ նեղատեսութեան մէջ, որ Ամանորը կու գայ՝ նախորդէն ժառանգ մնացած չարիքը՝ բարութեամբ, ձախողութիւնները՝ յաջողութիւններով, անարդարութիւնները՝ արդարամտութեամբ, պատերազմները՝ խաղաղութեամբ եւ բռնատիրութիւնը՝ ժողովրդավարութեամբ քարեփոխելու առաքելութեամբ: Վերանորոգուած արդարացի ակնկալութիւններ՝ որոնք իրենց արտայայտութիւնը կը գտնեն շերմացած՝ ոգեւորութեամբ արտասանուած մեղր ու կարագ բուրոյղ ամանորեայ մաղթանքներու մէջ: Մաղթանքներ, որոնք կը շոյալուին բոլորին:

Ամանորը, հրաշալի առիթ կը հանդիսանայ ամէն մարդ արարածի, ընկերային, ազգային ու քաղաքական մէն մի կառոյցին, կատարելու համապարփակ հաշուեկշռային քննարկումը անցնող միամեայ ժամանակահատուածի դրական եւ ժխտական գործընթացներուն՝ կարենալ զգուշանալու համար անցնող տարուան տեսողութեան գործուած սխալներու կրկնութիւններէն եւ կարենալ նոր ուղղութիւն տալու համար իրենց նախնականութիւններուն, հասնելու համար ցանկացուած դրական արդիւնքներուն:

Ափսոս սակայն. կեանքը տակաւ կը թունաւորուի, կը բարդանայ հատուածական շահերու, անիրաւութիւններու, անպատեւելիութեան, իրերամերժ տրամադրութիւններու եւ թշնամութիւններու առաւել սաստկացումով: Օրինակներ՝ շատ: Թունեմ միայն մի քանիսն:

Հայոց դէմ գործադրուած քրքարային ճեղքապատմութիւնը, այսօր, իր հարիւրամեայ տարելիցին, տակաւին կ'ուրացուի ցեղասպան Օսմանեան Կայսրութեան ժառանգորդ՝ արդի թուրք իշխանութիւններու կողմէ, գիտակցաբար լողը՝ ինքզինքնին աշխարհի խաղաղութեան պահպանման, բարոյական եւ ժողովրդավարական սկզբունքներու երաշխաւոր դաւանող գերգոր պետութիւններու շահադիտական մեղսակցութեամբ: Ոչ միայն ուրացող, ընդհակառակը՝ հայութիւնը իբրեւ ցեղասպան ամբաստանող Թուրքիոյ անպատեւելիութիւնը քաջալերութիւն հանդիսացաւ նոր ցեղասպանութիւններու իրագործման, աշխարհի չորս ծագերուն, «ն՞վ կը յիշէ այսօր հայոց ճեղքասպանութիւնը» ընդհանուր լուրջ խոսքով:

Այսօր, աւելի քան հինգ տասնամեակներէ առիւթ, պաղեստինեան տագնապը միջազգայնօրէն կը շարունակուի, մարդասիրական ամէն սկզբունք մէկդի դրած նոյն այդ գերգոր պետութիւններու խտրական, շահադիտական եւ անպարկեշտ կողմնորոշումներուն պատճառաւ: Անոնց կիրարկած այս քաղաքական, դիւանագիտական եւ շահադիտական անպարկեշտ նախնականութիւններու հետեւանքը չէ՞ր միթէ Միջին Արեւելի այդ ափ մը տարածութեամբ ասպնջական արաբական ցամաքամասերու անվերջանալի վերիվայրումները, որոնք նիւթուեցան, վարկաւորուեցան եւ հրահրուեցան միջին օրս, եւ տակաւին կը շարունակուին, առանց տալու մօտաւոր կամ հեռաւոր վախճանական դոյզն նախանշանի: Անորոշութիւնն է անոնց վարկանիշը...:

Արիւնաբար դարձաւ Իրաք, Եգիպտոսը, տարիներ զատապարտուելով ամէնօրեայ տուայտանքի, խափանարարական միջոցառումներու, հաւաքական սպանդի եւ կործանարար անբախկումներու, որոնք տակաւ կը շարունակուին սաստկացող սրութեամբ:

Մօտ երեք տարուայ սեղմ կեանքում նեղ «Արաբական Գարնան» ային երիտասարդական շարժումներու արեւելումը ասպնջական սուրիական հայրենիքէն ներս, որ ներքնապէս շուտափոյթ ընդունելի կարելի լուծումի մը սահմաններէ դուրս մնալով, դարձաւ աշխարհի խաղաղութեան սպառնացող ներքին եւ արտաքին առնակատումներու: Հակապետական շարժումները մշտապէս պարենաւորուեցան, հրահրուեցան եւ ներքափանցեցին Միջին Արեւելեան ֆոյր երկիրներու սահմաններէն ներս, սպառնալիք դառնալով աշխարհի խաղաղութեան: Հրոյ ճարակ դարձաւ Լիպիան եւ խալտառակ ձեւով իր կորսնցուցած պետական ինքնութիւնը վերագտնելու անկարելիութեան դատապարտուեցաւ:

Ծնունդ առին, այսպէս կոչուած «Իսլամական Խալիֆայութեան» վերստեղծման հեռանկարով Իսլամական պետութեան մը հաստատման նկրտումներ, որոնք, այսօրուան դրուածքով, ահ ու մահու սպառնալիքի տակ կը պահեն Միջին Արեւելի երկիրներու շարքին նաեւ հեռաւոր գերգոր աշխարհատարածքներ:

Այս կործանարար երեւոյթներու տակաւ սանձարձակ սրումը, տարակոյս չկայ, իր լուրջաբան քաջալերանքը կը ստանայ ուսամէտ Խրիմի՝ Ուրանիայէն անջատման հետեւանքով ստեղծուած Ուրանական տագնապին հետ առնչուած աշխարհի երկու գերգոր ուժեր՝ Ամերիկայի Միացեալ Նահանգներու եւ Ռուսիոյ Դաշնութեան միջեւ տակաւ սրող պատժամիջոցներու սպառնալիքներու ցնցիչ առնակատումէն: ԱՄՆ պաշտպան կանգնելով Ուրանիոյ կայունութեան եւ հողային ամբողջականութեան, կոչ կ'ուղղէ Ռուսիոյ, վերջ տալ բռնագրաւումին եւ ստեղծել անջատողականներուն տուած օգնութիւնները, մինչ Ռուսիա, կը յորդորէ անոր, զգուշանալ իրեն դէմ ձեռնարկուած պատժամիջոցներէն, որոնք կը խոչընդոտեն տագնապի բարւոյ լուծումը...

2014թ. վիստեցուցիչ քաղաքական երեւոյթներու շարքը կրնայ շատ երկարիլ եթէ պիտի անդրադառնանք անոնց մասին եւս: Եկող 2015թ. տարուան ուսերուն կը դառնան ծանրակշիռ խնդիրներ, որոնց դրական լուծում կ'ակնկալուի: Այդպէս է եղած միշտ, որ Մարդիկ ակնկալութիւններով կը դիմաւորեն եւ Ամանորը, անոր մէջ տեսնելով իրենց երջանկութեան ապաւէնը: Այդ ապաւէնը արտայայտութիւն գտած է իրենց մէն մի բարեմաղթութեան մէջ: Մարդիկ երջանկութիւն, քաջաճողութիւն եւ երջանկութիւն կը ցանկան իրենց հարագտներուն, հայրենիքին եւ ընդհանուր մարդկութեան: Իրենց ազգին եւ հայրենիքին՝ ֆիզիկական ապահովութիւն, համբարաշխ կեանքի եւ ազգային ձգտումներուն նուիրագործում: Աշխարհին՝ խաղաղութիւն, որ գրաւականը կը հանդիսանայ ապահով կեանքի, տնտեսական զարգացման, պետական կառոյցներու զօրացման եւ ժողովրդական կեանքի եւ երջանկութեան:

Մեր անմնացորդ բարեմաղթութիւնն է, որ Ամանորեան այդ մաղթանքները դառնան իրականութիւն, որ մարդկութիւնը ապրի խաղաղութեան եւ բարօր կեանքի մէջ:

Այս հասկացողութեամբ եւ ակնկալութիւններով կը դիմաւորենք եւ կը շնորհաւորենք մեր հայրենի եւ աշխարհով մէկ տարածուած մեր համայն ժողովուրդի, անոր Առաքելական, Աւետարանական եւ Կաթողիկէ նուիրապետական, ազգային քաղաքական, կրթական մշակութային եւ մարզական կառոյցներուն Նոր Տարին եւ Սրբ. Ծնունդը, բոլորին մաղթելով բարգաւաճ, երջանիկ, համբարաշխ կեանքի եւ իրենց դարաւոր պահանջատիրական իղձերուն նուիրագործում: Այդ ակնկալութիւններով կը շնորհաւորենք, մեր գոյգ հերոսական հայրենիքներ՝ Հայաստանի Հանրապետութեան եւ Արցախի աշխարհին Նոր Տարին եւ Սրբ. Ծնունդը, մաղթելով անոնց խաղաղութիւն, պետական կառոյցներուն հզօրացում, տնտեսական բարգաւաճութիւն, անսասանութիւն եւ ամենայն բարիք՝ պետութիւն-ժողովուրդ անխորտակելի միասնութեան բարեբեր հովանիին ներքին:

Թող բարին ու բարեբեր ըլլայ Գալուստը Նոր Տարուան ու Սրբ. Ծննդեան:

ՄԱՍԻՍ ՇԱԲԱԹԱԹԵՐԹ
ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԵԱՆ ԿՏՐՕՆ
Yes, I wish to subscribe to Massis Weekly
Enclosed a check for (one year)
* \$50,00 for USA
* \$60,00 (second class), \$ 75,00 (Air Mail) for Canada.
* \$85,00 (second class), \$ 125,00 (Air Mail) Overseas.
Name: -----
Address: -----
City: ----- State:----- Zip Code:-----
Country: -----
Tel :----- Fax : -----

ՄԱՍԻՍ
ՇԱԲԱԹԱԹԵՐԹ
ՄԱՍԻՍ ՇԱԲԱԹԱԹԵՐԹ
ՊԱՇՏՕՆԱԹԵՐԹ
ՍՈՑԻԱԼ ԴԵՄՈԿՐԱՏ ԶՆՁԱԿԵԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹԵԱՆ
Արեւմտեան Ամերիկայի Շրջանի
ԽՄԲԱԳԻՐ՝ ՏՕՔԹ. ԱՐՇԱԿ ԳԱԶԱՆՃԵԱՆ
ՎԱՐՉԱՎԱՆ ԲԱԺԻՆ՝ ԼԵՆԱ ՄԱՆՈՒԿԵԱՆ
Ֆեռ. (626) 797-7680 Ֆաքս. (626) 797- 6863
E-Mail: massis2@earthlink.net http://www.massisweekly.com
MASSIS Weekly
Organ of Social Democratic Hunchakian Party of Western USA
1060 N. Allen Ave. Pasadena, CA 91104
Phone: (626) 797-7680 Fax: (626) 797-6863
(USPS 667-310) (ISSN 0744-334X)
Published Weekly Except Two Weeks in August
ANNUAL SUBSCRIPTION RATES:
USA \$50.00, Canada \$80 (Second Class), \$125.00 (Air Mail)
Overseas, \$250.00 (Air Mail).
All payments must be made in US funds & Drawn on US banks.
Periodicals Postage Paid at Pasadena CA.



ԱՄԱՆՈՐԵԱՅ ՈՒՂԵՐՁ

Սիրելի հայրենակիցներ,

Արդեն աւարտին կը մօտենայ 2014 թուականը եւ շուտով պատմութեան անսխալ ժամացոյցին աշխոյժ զանգակները կ'աւետեն նոր՝ 2015 թուականին սկիզբը: Իւրաքանչիւր նոր տարի նախորդին տրամաբանական շարունակութիւնն է, եւ բարեմաղթութիւններու հետ մէկտեղ՝ այդ օրերուն ամեն ոք նաեւ անցած տարուան աշխատանքներուն ամփոփ հաշուետուութիւնը կը կատարէ: Իր 127-ամեայ գործունեութեան ընթացքին Սոցիալ Դեմոկրատ Հնչակեան Կուսակցութիւնը միշտ եղաւ հայ ժողովուրդի ազգային-ազատագրական պայքարի յառաջամարտիկներու շարքին մէջ եւ անոր բարգաւաճման, ազատ ու արժանապատիւ կեանքին երաշխաւորը:

Այսօր ալ, հաւատարիմ մնալով իր մեծ նախորդներու հայրենանուէր պատգամներուն՝ ժողովուրդին անմնացորդ ծառայելու Հնչակեան հրամայականին՝ ՍԴՀԿ-ը նոյն նուիրումով եւ բարձր պատասխանատուութեամբ պատրաստ է պաշտպանել հայոց արդար պահանջատիրութիւնը եւ իր նշանակալի ներդրումը բերել հայ ժողովուրդի համար վճռորոշ՝ 2015 թուականին նախատեսուած մեծ ու փոքր բոլոր ազգանպաստ ձեռնարկներուն՝ ի Հայրենիք, յԱրցախ եւ ի Սփիւռս աշխարհի:

Սիրելի հայրենակից, Սոցիալ Դեմոկրատ Հնչակեան Կուսակցութիւնը խորապէս համոզուած է, որ 2015-ը ոչ միայն Հայոց Ցեղասպանութեան անմեղ զոհերու յիշատակի ոգեկոչման հարիւրերորդ տարելիցը, այլեւ բեկումնային է մեր արդար պահանջատիրութեան սուրբ գործին համար: Արցախեան փառահեղ յաղթանակը, այնուհետեւ թուրք-ազերի պարբերաբար շարունակուող նենգ ոտնձգութիւններուն արժանի հակահարուածները միայն կը բազմապատկեն մեր հիմնաւորուած լաւատեսութիւնը:


2015-ը Հայրենիքի ազատագրութեան պայքարի զոհասեղանին իրենց հպարտ գլուխները դրած Հնչակեան պանծալի Զսաններուն նահատակութեան հարիւրամեայ տարելիցն է: Մեծն Փարամազ ու իր համախոհները չկրցան ընկճել ո՛չ թրքական դժնդակ բանտերը, ո՛չ ալ քսան կախաղաններու չարագոյժ օղակները: Չկրցան, որովհետեւ անոնք ոչ թէ դէպի մահ, այլ՝ դէպի անմահութիւն գացին: Պատմութիւնը ապացուցած է անոնց ընտրած պայքարի ուղիին ճշմարտացիութիւնը եւ Հնչակեան Կուսակցութեան հարիւր քսանեօթամեայ ընթացքը լաւագոյնս կը վկայէ, որ մեր ժողովուրդին համար ամենէն ճակատագրական օրերուն իսկ ՍԴՀԿ բնաւ չչեղեցաւ անոնց նախանշած ճշմարտութեան եւ արդարութեան ուղիէն:

Լաւատեսութիւնը կեանքի կոչելու համար իւրաքանչիւրէս պիտի պահանջուի ուժերու կեդրոնացում, ամուր կամք ու աննկուն ոգի, այսինքն այն, ինչ մեր մէջ անմնացորդ նուիրումի ու հերոսական զոհաբերութեան գիտով ներարկած են մեր Կուսակցութեան Մեծ Նահապետները:

Սիրելի հայ ժողովուրդ, սեր, հպարտութիւն, համերաշխութիւն, խաղաղութիւն, առողջութիւն եւ բարգաւաճում կը մաղթենք ձեզի եւ ձեր ընտանիքներուն: Թող այս տարին իւրաքանչիւրիդ համար անձնական եւ հաւաքական իղձերու իրականացման տարի ըլլայ: Հայ ժողովուրդը, որ անտրտունը հազարամեակներու ծանրածանր բեռը կրած է իր չծերացող ուսերուն, աւելի քան արժանի է ատոր:

Ս Դ ՀՆՉԱԿԵԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹԵԱՆ
ԿԵԴՐՈՆԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹԻՒՆ

Երեւան, 20 Դեկտեմբեր 2014



**Ս. Դ. Հնչակեան Կուսակցութեան
Արեւմտեան Ամերիկայի Վարիչ Մարմինը
կը շնորհաւորէ իր բոլոր ընկեր-ընկերուհիներուն,
հայ ժողովուրդի եւ իր գոյգ հանրապետութիւններուն՝
Հայաստանի եւ Արցախի
Նոր Տարին եւ Սուրբ Ծնունդը**

ՄԱՍԻՍ - 2015

Ն.Ս.Օ.Տ.Տ. ԳԱՐԵԳԻՆ Բ ԾԱՅՐԱԳՈՅՆ ՊԱՏՐԻԱՐԹ ԵՒ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ՍՐԲԱՏԱՌ ԿՈՆԴԱԿԸ ՀԱՅՈՑ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹԵԱՆ 100-ՐԴ ՏԱՐԵԼԻՑԻՆ ԱՌԻԹՈՎ

*ԳԱՐԵԳԻՆ Բ ԾԱՌԱՅ ՅԻՍՈՒՍԻ ՔՐԻՍՏՈՍԻ,
ՈՂՈՐՄՈՒԹԵԱՄԲՆ ԱՍՏՈՒԾՈՅ ԵՒ ԿԱՄՕՔՆ ԱԶԳԻՍ
ԵՊԻՍԿՈՊՈՍԱՊԵՏ ԵՒ ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ,
ԾԱՅՐԱԳՈՅՆ ՊԱՏՐԻԱՐԹ ՀԱՄԱԶԳԱԿԱՆ ՆԱԽԱՄԵԾԱՐ ԱԹՈՌՈՑ
ԱՐԱՐԱՏԵԱՆ ԱՌԱՔԵԼԱԿԱՆ ՄԱՅՐ ԵԿԵՂԵՑԻՈՑ
ՍՐԲՈՑ ԿԱԹՈՒՂԻԿԷ ԷԶՄԻԱԾՆԻ*

*ՔՐԻՍՏՈՍԱԻԱՆԻ ՍԻՐՈՑ ՈՂՋՈՑՆ ԵՒ ՕՐՀՆՈՒԹԻՒՆ
ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ՄԵԾԻ ՏԱՆՆ ԿԻԼԻԿԻՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍՈՒԹԵԱՆ,
ՊԱՏՐԻԱՐԹՈՒԹԵԱՆՑ ՀԱՅՈՑ
ՍՐԲՈՑ ԵՐՈՒՍԱՂԻՄԱՑ ԵՒ ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼԻՍՈՑ,
ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍԱՑ, ԵՊԻՍԿՈՊՈՍԱՑ, ՎԱՐԴԱՊԵՏԱՑ, ՔԱՀԱՆԱՅԻՑ
ԵՒ ՍԱՐԿԱԻԱԳԱՑ,
ԹԵՄԱԿԱՆ ԵՐԵՍՓՈՒԽԱՆԱԿԱՆ ԺՈՂՈՎՈՑ,
ԹԵՄԱԿԱՆ ԵՒ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԽՈՐՀՐԴՈՑ ԵՒ ՊԱՇՏՈՆԷԻՑ
ԵՒ ՍԻՐԵՑԵԱԼ ՀԱՄԱՅՆ ՀԱԻԱՏԱՑԵԱԼ ԺՈՂՈՎՐԴԵԱՆ ՀԱՅՈՑ*

«Ճանապարհի արդարոց որպէս լոյս ծագեն,
առաջնորդեն եւ լուսաւորեն, մինչեւ տիւն լուսաւորեսցէ»
(Առակ. Դ 18):



Հայոց Ցեղասպանութեան 100-ամեայ տարելիցի առջեւ եմք՝ մեր հոգիներում արդարութեան եւ նշմարտութեան անլուրի, գորեղ պահանջով:

2015 թուականի իրաքանչիւր օր մեր ժողովրդի համար ոգեկոչման եւ խնկարկման օր է, հոգեւոր երթ դէպի Հայրենիքում եւ Սփիւռքում վեր յառնած նահատակաց յուշարձաններ՝ ծնրադիր խոնարհումով աղօթք բարձրացնելու անշրիթ մնացած մեր անմեղ զոհերի հոգիների համար, ովքեր մահն ընդունեցին՝ մերժելով հաւատարմութիւնը եւ ազգութեանը: Յիրաւի, Արդարների մանապարհները նման են ծագող լոյսի, որն առաջնորդում է լուսաւորում է նրանց, մինչեւ որ օրը լրիւ լուսաւորի:

1915 թուականին եւ հետագայ տարիներին օսմանեան Թուրքիայի կողմից իրագործուեց Ցեղասպանութիւն մեր ժողովրդի նկատմամբ: Արեւմտեան Հայաստանում՝ բնօրրան մեր Հայրենիքում եւ Թուրքիայի հայաշատ բնակավայրերում կազմակերպուած ջարդերին, սովին ու հիւանդութիւններին, որ իշխում էին բռնազաղթի մանապարհներին, զոհ գնացին ազգիս մէկ եւ կէս միլիոն զաւակներ: Թալանուեց դարերով ստեղծուածը, արդար վաստակը մեր ժողովրդի: Խոնարհութեան ու անբուժելի հազարաւոր մեր վանքերն ու եկեղեցիները, ազգային հաստատութիւնները, դպրոցները, ոչնչացուեցին եւ կորստեան մատնուեցին մեր հոգեւոր ու մշակութային արժէքները: Հայաթափուեց Արեւմտեան Հայաստանը, որտեղ մեր ժողովուրդը հազարամեակներ՝ Նոյեան դարից ի վեր, ապրել, արարել եւ իր պատմութիւնն ու մշակոյթն է կերտել:

Մէկ դար առաջ, երբ հայրենագրկուած հայութեան քնկորները սփռուում էին ողջ աշխարհով, երբ Արեւելեան Հայաստանը կենաց եւ մահու գոյամարտ էր մղում թուրքական զաւթչների դէմ, դժուար էր հաւատալ հայ ժողովրդի ապագային: Բայց այն մտազեց: Մեր ժողովուրդը Տիրոջ շնորհով յառնեց մահուանից: Հայրենիքի փրկուած հողակտորի վրայ վերականգնեց պետականութիւնը, անբակներին ու խեղճներին վերակերտեց հայրենի երկիրը, դարձրեց գիտութեան, կրթութեան, մշակոյթի, լոյսի եւ յոյսի Հայրենիք: Տարագիր հայութիւնը տարբեր երկրներում իր տունը կառուցեց, հայրենի ծուխը ծխեցրեց, ապրեցրեց ու բարձրացրեց իր հոգեւոր ու ազգային կեանքը: Որտեղ էլ ապրեցին մեր ժողովրդի զաւակները, հասան յաջողութիւնների, արժանացան յարգանքի, վստահութեան, մանաչուեցին բարեխիղճ աշխատանքով, գիտութեանը, արուեստին, հասարակութեան բարօրութեանը բերած աւանդով: Այսպիսին է վերջին հարիւրամեակի պատմութիւնը մեր ժողովրդի՝ պատմութիւն մահաբուժի եւ վերածննդի: Այսօր, հակառակ բոլոր դժուարութիւնների՝ մեր ժողովուրդը ամրապնդում է իր անկախ պետականութիւնը, կերտում իր ազատ նոր կեանքը եւ ազգային վերագարթօնի յոյսերով, լուսաւորութեամբ ու վստահութեամբ նայում զայլիքին:

Փառք Քեզ, բիր փառք Քեզ, Տէր, Քո սպառազինութեամբ պաշտպանեցիր մեզ (Սաղ. Ե 13): Քո յոյսով, Տէր, մեր ժողովուրդը պայծառացաւ ու զօրացաւ: Քո լոյսով փայլեց մեր հոգու հանճարը, Քո զօրութեամբ ծնունդ առան մեր յաղթանակները: Ստեղծեցինք, երբ մեր ստեղծածը անբեցին, ապրեցինք, երբ ուզեցին կորստեան մատնել մեզ: Դու, Տէր Աստուած մեր, կամեցար, որ ապրի ու բարձրանայ եղեռնագործ ծրագրով մահուան դատապարտուած մեր ժողովուրդը եւ մարդկութեան խղճի եւ միջազգային իրաւունքի առջեւ բարձրացնի ու պաշտպանի իր արդար դատը՝ ընդդէմ պիղատոսեան անտարբերութեան եւ Թուրքիոյ ոնրագործ ժխտողականութեան:

Արդարութեան համար՝ մինչեւ մեր դատի յաղթանակ, միասնաբար՝ եկեղեցի, Ազգ եւ Պետութիւն, անմահանջ պիտի շարունակենք մեր պայքարը: Արդարութիւն է պահանջում մեր անմեղ զոհերի արիւնը, մեր ժողովրդի կրած տառապանքը, արդարութիւն են պահանջում մեր անբակուած սրբութիւնները, մեր ժողովրդի ոտնահարուած իրաւունքները, նաեւ՝ կեղծուող եւ խեղաթիւրուող պատմութիւնը մեր ժողովրդի: Ցեղասպանութիւն

վերապրած մեր ժողովուրդը հաւատացել եւ հաւատում է, որ տասնեակ երկրների, պետական, հասարակական կազմակերպութիւնների ու անհատների կողմից, ովքեր մանաչել են Հայոց Ցեղասպանութիւնը, պիտի կանգնեն նորերը, համոզումով, որ արդարութեան հաստատումը պայմանն ու երաշխիքն է բշմամանքից եւ բռնութիւնից գերծ խաղաղ աշխարհի:

Մէկ եւ կէս միլիոն մեր նահատակների յիշատակի առջեւ Մեմֆ երախտագիտութեան Մեր խօսքն ենք վերստին ուղղում այն պետութիւններին, կազմակերպութիւններին եւ անձանց, ովքեր մանաչել եւ դատապարտել են Հայոց Ցեղասպանութիւնը: Երախտագիտութիւն ենք յայտնում մեր ժողովրդի զաւակներին եղբայրաբար ընդունած երկրներին ու նրանց բարեսէր ժողովուրդներին: Մարդկութեան պատմութեան լուսաւոր էջեր են արդարութեան եւ մարդասիրութեան այսօրինակ դրսեւորումները, որ սերունդներից միշտ պիտի յիշուեն եւ միշտ գնահատուեն ու նպաստեն աշխարհի խաղաղ, անվտանգ, համերաշխ կեանքին:

Հայոց Հայրապետիս համար հոգեւոր միթքարութիւն է ի լուր մեր ժողովրդեան ծանուցել, որ 2015 թ. ապրիլի 23-ին մեր Սուրբ Եկեղեցին՝ յընթացս սրբազան պատարագի, յատուկ արարողակարգով սրբերի շարքում է դասելու Վասն հաւատոյ եւ վասն հայրենեաց նահատակութեան պսակն ընդունած իր զաւակներին՝ Ցեղասպանութեան նահատակ սրբերի յիշատակի օր հռչակելով ապրիլի 24-ը:

Շնորհընկալ ժողովուրդ հայոց, ազգ նահատակ, ազգ յարուցեալ. խրոխտ ապրիր, վստահ քայլիր, հայեացող տապանակիր Արարատին՝ աներկմիտ սրտով մեծ պահիր յոյս: Քեզ է ուղղուած մեր Տիրոջ խրախոյսն ու պատգամը. «Եւ եւ քո զօրութիւն ունես, բայց պահեցիր իմ խօսքերը եւ չուրացար իմ անունը: Ապահիր ինչ որ ունես, որպէսզի ոչ ոք չառնի քո պսակը» (Յայտն. Գ 8-11): Արդ, պահպանեմք մեր ընթացքը Աստուծոյ առաջ արդար ու նշմարիտ, հաւատքի հաստատուն ուղիներում, որ ծագող այգաբացի պէս ցրում է խաւարը եւ պարզում յոյսի հորիզոնները: Աստուծոյ հետ է մեր մանապարհը, եւ հաւատքի կեանքը՝ մեր յաղթութիւնը: 100-րդ տարելիցը արդիւնաւորեմք մեր ժողովրդի մէկզարեայ մահաբուժի եւ վերածննդի ուղին արժեւորելով, որպէսզի մեր զաւակները մանաչելով իրենց պապերի եւ հայրերի ապրելու եւ ստեղծելու հերոսական կամքը, յանուն ազգի եւ Հայրենիքի ստանձնած յանձնարարութիւնները՝ կերտեն նոր պայծառ օրը հայրենի մեր երկրի ու աշխարհասփիւռ ժողովրդի: Մեր նահատակների յիշատակի ոգեկոչումը դարձնենք ուժ եւ զօրութիւն հոգեւոր, ազգային, հայրենական մեր կեանքին եւ Աստուծոյ ու մարդկանց առաջ արդար ընթացքով լուսաւորեմք մեր մանապարհը դէպի մեր իրաւունքների, մեր նուիրական իդձերի իրականացման հանգրուան:

Քրիստոսակառոյց նուիրական հոգեւոր կենտրոնում ազգիս, Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի Իջման Սուրբ Սեղանի առջեւ աղօթում ենք առ Աստուած՝ հայեցելով խաղաղութիւն, ապահովութիւն եւ բարօրութիւն մեր Հայրենիքին, սիրեցեալ մեր ժողովրդին ի սփիւռս աշխարհի եւ անմայրամուտ լոյս ու հանգստութիւն՝ Ցեղասպանութեան մեր անմեղ նահատակների հոգիներին: Թող մարդկութեան կեանքում թագաւորեն սէրն ու եղբայրութիւնը, արդարութիւնն ու նշմարտութիւնը, եւ արդարների մանապարհները որպէս լոյս ծագեն, առաջնորդեն ու լուսաւորեն, մինչեւ լուսաւորուի նոր օրը խաղաղ ու երջանիկ աշխարհի:


Շնորհ, սէր եւ խաղաղութիւն Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի եղիցին ընդ մեզ եւ ընդ ամենեւեան. ամէն:
Օրհնութեամբ՝
ԳԱՐԵԳԻՆ Բ
ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ
Տուաւ Կոնդակս ի 28-ն Դեկտեմբերի
յամի Տեառն 2014 - ի թուին հայոց ՌՆԿԳ
ի մայրավանս Սրբոյ Էջմիածնի
ընդ համարաւ 886

ԻՆՔՆԱԽԱԲԵՌՈՒԹԻՒՆԷ ԻՆՔՆԱՃԱՆԱԶՈՒԹԻՒՆ ԵՒ ԱՆԴԻՆ ՅԱՐՈՒԹ ՏԵՐ ԴԱԻԹԵԱՆ

Մեր պատանեկութեան տարիներէն սկսեալ, մեր անձնական երազներու հետապնդման կողքին, մեր մտածումներուն մէջ կարեւոր տեղ կը գրաւէր նաեւ «Մեծ Երազ»ը՝ միջազգայնօրէն ճանչցուած ազատ ու անկախ հայրենի պետականութեան, մեր պատմական գրաւեալ հողերու ազատագրման եւ մեր երկիր վերադարձի երազը: Այդպէ՛ս կը դաստիարակուէինք ու կը հաւատայինք: Եկաւ այն սպասուած պատմական պահը, երբ մեր «Մեծ Երազ»ը իրականացնելու առիթները պարզուեցան մեր առջեւ: Հարիւր հազարներու միասնական կանչերն ու երթերը պողոտայէ պողոտայ ազատ ու անկախ Հայաստանի Հանրապետութեան հռչակումով ու Միացեալ Ազգերու Կազմակերպութեան անդամակցումով: Հազարաւոր հայորդիներու պայքարով ու կեանքերու զոհաբերումով ազատագրուեցաւ Արցախը: Աշխարհացրիւ հայութեան կիզակէտը դարձաւ Հայաստան աշխարհը: Բայց ... սկզբնական շրջանի այս խանդավառութիւնէն ետք սկսանք ականատես դառնալ այնպիսի երեւոյթներու, որոնք անյարիր էին մինչ այդ պահը ընդունուած մտայնութեան եւ աւանդուած ուսմունքներուն: Սկսանք հարց տալ թէ ինչպէ՞ս կրնայ ըլլալ, որ ազգի համար բախտորոշ պահին, հայրենի հողի ազատագրման ճակատագրական կոչին այդքան սակաւաթիւ սփիւռքահայեր արձագանքեցին: Ինչպէ՞ս կրնայ ըլլալ, որ կողք կողքի թշնամիին դէմ պատերազմի ելած ընկերներ, հասարակաց թշնամիէն աւելի սկսին զիրար առել, զիրար չէզոքացնելու աստիճան: Ինչպէ՞ս կրնայ ըլլալ, որ իր կեանքը վտանգելու գնով պատերազմի մեկնած հայրենասէրը, տուն վերադարձին դառնայ այնքան անձնասէր, որ չտատամսի յօգուտ իր գրպանին կողոպտելու հարենիքը: Ինչպէ՞ս կրնայ ըլլալ, որ բազում հազարաւորներ ոտքի հանող վեհ գաղափարներ մէկ օրէն միւսը լքուին ու արհամարհուին: Ինչպէ՞ս կրնայ ըլլալ, որ ամբողջ ազգ մը գերին դառնայ պատեհապաշտ խմբակի մը: Արդեօ՞ք մինչ այդ ընդունուած հասարակաց ըմբռնումներն ու արտասանուած խօսքերը պարզապէս շղարշ էին, որ կը ծածկէին իրականութիւնը: Արդեօ՞ք մարդիկ չէին հաւատար իրենց արտասանած խօսքերուն, բայց եւ այն-

պէս կ'արտասանէին պարզապէս խաբելու համար իրենց շրջապատը: Արդեօ՞ք Յովհաննէս Թումանեանի ու Աւետիք Իսահակեանի, Եղիշէ Չարենցի ու Պարոյր Սեւակի, Յովհաննէս Շիրազի ու Սիլվա Կապուտիկեանի, Համօ Սահեանի ու Վահագն Դաւթեանի պատգամները պարզապէս վայրկեանական զոհացման համար էին եւ ոչ թէ կեանքի ուղեցոյց: Արդեօ՞ք քաղաքակրթութեան օրրան համարուող, հազարամեակներու ճանապարհ կտրած ու պատմութեան հարուստ փորձ կուտակած նոյն ազգն ենք մենք: Արդեօ՞ք հակառակ մեր մեծաշունթ հայրենասիրական խօսքերուն, ափրիկեան Պոթոսուանայի, Ղանայի կամ Սենեկայի չափ ալ չկա՞նք, որ տէր կանգնինք մեր երկրին ու ժողովուրդին: Արդեօ՞ք ինքնախաբէութիւն էր այդ բոլորը, որ յօդս ցնդեցաւ իրականութեան հետ առաջին բախումէն իսկ: Ո՞րն է ելքը մեր ապրած այս յուսախաբութիւններուն: Պատասխանը տուած էր Խորենացին աւելի քան 1500 տարիներ առաջ իր «Հայոց Պատմութիւն»ով, ցոյց տալով «փոքր ածու»է մեծ ազգ դառնալու ճանապարհը: Պատասխանը Հայկ Նահապետի նման «քաջ, արդար ու անիրաւութեանց դիմադրող» առաջնորդ ունենալու մէջ կը կայանայ: Պատասխանը Արամ Թագաւորի նման «աշխատասէր ու հայրենասէր» առաջնորդ ունենալու մէջ կը կայանայ, որ «կը նախընտրէր հայրենիքի համար մեռնիլ, քան թէ տեսնել թէ ինչպէս օտարը ոտնակոխ կ'ընէր իր հայրենիքը»: Պատասխանը Տիգրան Երուանդեան Թագաւորի նման «արդարադատ ու հաւատասէր, լաւագոյններուն չնախանձող իսկ նուաստներուն չարհամարհող» առաջնորդ ունենալու մէջ կը կայանայ: Պատասխանը այդպիսի առաջնորդներուն նմանիլ փափաքող ու անոնց օրինակին հետեւող ժողովուրդի մէջ կը կայանայ: Պատասխանը տուած էր նաեւ Ռաֆֆին մօտ 150 տարիներ առաջ: Կարդացէ՛ք մեր այս յօդուածի աւարտին զետեղուած ու մեր խորհրդածութեանց ներշնչում հանդիսացած հատուածները Ռաֆֆիին: Ըստ իրեն, պատասխանը ինքնաճանաչութիւնն է: Սովորաբար «Ծանի՛ր զքեզ»ը: Նախ ճանչնալ ինքզինք ու ապա ազգը: Ճանչնալ մասնիկը ու ապա ամբողջը: Ու ըստ այնմ

ապրիլ եւ ստեղծագործել: Ըստ Ռաֆֆիի, ինքնաճանաչութեան հայրը (բարի) նախանձն է, իսկ մայրը՝ դժգոհութիւնը: Ամէն մէկ հայ պէտք է բարձրաձայն հարց տայ. «այ՞ս էր իմ Մեծ Երազը»: Դժբախտաբար հայութեան ջախջախիչ մեծամասնութիւնը բացասական պատասխան պիտի տայ այս հարցին, Եղեռնի հետեւանքով պայենական հողէն տարագրուած հայէն մինչեւ վերջին տարիներուն Հայաստանէն արտագաղթած հայը: Ուրեմն բոլորս պարտինք բարձրաձայնել մեր դժգոհութիւնը այն բոլոր առատաւոր երեւոյթներու եւ առատաւոր մարդկանց դէմ, մանաւանդ ղեկավար դիրքերու վրայ գտնուողներուն, որոնք պատճառ կը դառնան համազգային յուսախաբութեանց: Չի՛ բաւեր ինքնաճանաչման միջոցաւ պատուել ինքնախաբէութեան շղարշը, այլ պէտք է անցնիլ անկէ անդին: Վերելի խորագրի «Անդին»ը այդ ուղղութեամբ գործնական քայլեր առնելու կոչ է: Կոչ ընդվզման՝ փոքրամասնութեան մը դէմ, որ օտարին գործիք ծառայելով կը գողոցանայ սեփական ժողովուրդին վրայ: Կոչ ընդվզման՝ բռնատիրական իշխանութեան մը դէմ, որ կը քայքայէ մեր նորանկախ պետականութեան հիմքերը: Կոչ ընդվզման՝ հայրենի երկիրը կողոպտող վերնախաւի մը դէմ, որ պատճառ կը դառնայ ժողովուրդի արտագաղթին: Կոչ ընդվզման՝ աշխարհիկ թէ հոգեւոր արժէքներ պղծող ու արհամարհող աշխարհական թէ կրօնական խայտառակ վերնախաւին դէմ: Կոչ ընդվզման՝ սփիւռքի հայաշատ համայնքները այցելող պատեհապաշտ ու երկերեւանի ղեկավարներու դէմ, որոնք սուտ խոստումներով մեր հայրենասիրական զգացումները կը շահագործեն: Կոչ ընդվզման՝ սփիւռքահայ ղեկավարներու դէմ, որոնք անարդարութեանց ու կեղծիքներու ակնատես ըլլալով հանդերձ, կը շարունակեն խնկարկել Հայաստանը կործանումի տանող վերնախաւին: Երբ սրտցաւ անձաւորութիւններու հետ կը քննարկենք Հայաստանի ու հայութեան ներկայիս պարզած վիճակը, բոլորն ալ մտահոգ կը գտնենք: Դժբախտաբար հարցը հոն չի վերջանար: Աւելի վտանգաւորը անոնց ապրած յուսախաբութիւնն է, ի տես կատար-



ուած իրողութեան եւ այս անելէն դուրս գալու անյուսութեան: Ինչպէ՞ս չմտահոգուիլ ի տես երկրէն ներս տիրող համատարած անարդարութեան ու եղծումին: Ինչպէ՞ս չմտահոգուիլ ի տես պետութեան անազնացող արտաքին պարտքին, երբ միաժամանակ միլիառաւոր սոլլարներու հարստութիւն դուրս կը բերուի երկիրը կողոպտող օլիկարխներու կողմէ: Ինչպէ՞ս չմտահոգուիլ երկրի ընդերքը անխնայ շահագործողներու յառաջացուցած բնապահպանական ու առողջապահական սպառնալիքներով: Ինչպէ՞ս չմտահոգուիլ ի տես Հիւսիսային պողոտայի հարիւրաւոր հազարներ արժած դատարկ բնակարաններուն, երբ երկրաշարժէն 26 տարիներ ետք հազարաւոր ընտանիքներ տակաւին անմարդավայել պայմաններու տակ կ'ապրին: Ինչպէ՞ս չմտահոգուիլ մանաւանդ, հայրենի երկրէն ժողովուրդի մեծաքանակ արտագաղթով ու երկրի կիսով դատարկմամբ: Ինչպէ՞ս չմտահոգուիլ ի տես հայ ժողովուրդի երեքքառորդին սփիւռքացմամբ եւ օտար ափերու վրայ հասակ առնող նորահաս սերունդներուն անազնացող այլասերմամբ: Ժամանակը եկած չէ՞ լրջօրէն վերանայելու մեր ազգային առաջնահերթութիւնները Հայաստանի թէ Սփիւռքի տարածքին, ի տես մեր պետական այրերու թէ սփիւռքի ղեկավարներու վարած ձախող քաղաքականութեան կործանիչ արդիւնքներուն: Ո՞ր օրուան եւ ի՞նչի կը սպասենք: Ինչո՞ւ համար մենք մեզ կը տանինք անելանելի վիճակի, սպասե-

Շար.ը էջ 34

ՇՆՈՐՀԱՒՈՐ ՆՈՐ ՏԱՐԻ ԵՒ ՍՈՒՐԲ ԾՆՈՒՆԴ



ՏԷՐ ԵՒ ՏԻԿ. ԽԱԶԻԿ ԵՒ ԺԵՆԻԱ ՔԷՇԻՇԵԱՆ

ՄԱՍԻՍ - 2015

ՆՈՐ ՏԱՐՈՒԱՆ ՍԵՄԻՆ ՀԱՐԻՒՐԱՄԵԱԿԻՆ ԸՆԴԱՌԱՋ

ԴՈԿՏ. ԶԱԲԵՆ Ա. ՔՅՆՅ. ԱՐՁՈՒՄԱՆԵԱՆ

2015 Նոր Տարուան Երջանկաբեր սեմին հայաշխարհը մտադրաւ կը դիմաւորէ Հայոց Յեղասպանութեան Հարիւրամեակը եւս, քաղաքական անհորիզոն եւ անապահով փոթորիկներուն պատճառած ամպերուն ներքեւ: Կոտորածն ու գաղթը, Արեւմտեան Հայաստանի հայութեան բնաջնջումի Օսմանեան Թուրքիոյ վատ ծրագրով, ջլատեցին հայուն տունն ու տեղը, եկեղեցին ու մշակոյթը՝ սկսելով մեր սրբազան հաստատութիւններէն եւ բարձրորակ մտաւորականներէն: Հարիւր տարիներ եթէ բազմահազար ջահեր մարեցան, լուսատու վանքերն ու մշակոյթի վառարանները մոխիրի վերածուեցան, մեր վերապրած անմիջական ծնողներու եւ մեծ ծնողներու մորթին վրայ սպիացած բազմահազար վերքեր բուժուեցան, «կեանք ընդ մահու փոխարկեցին», Ս. Ներսէս Շնորհալի Հայրապետի տեսիլքով: Մահը կեանքի վերածեցինք ու հայաշխարհը գերազանցապէս յաղթական դուրս եկաւ:

Երբ շուտով կը բաղինք դռները Նոր Տարուայն, մեր Փրկչին Սուրբ Ծննդեան խաղաղութեան աւետիսով, հարիւրամեակին ընդառաջ բիւրիցս կ'օրհնենք յիշատակը մեր նահատակներուն, որոնք սրբացուցած պիտի ըլլանք իրենց տարելիցին՝ յառաջիկայ Ապրիլի 23-ին: Եթէ բնաջնջումի համար ծրագրուած ազգ մը այսօր պետութեամբ, եկեղեցիով եւ հարազատ մշակոյթով, իր բազմերես քաղաքական, կրօնական, մշակութային եւ ընկերային հարուստ երթով կը քայլէ ու կը շարժէ աշխարհն ամբողջ, թէ իսկ փոքրիկ եւ սակայն հնաւանդ ու քաղաքակիրթ, արթուն եւ քաջարի, հարիւրերորդ դասն է որ կուտայ վատ եւ դրկից թշնամիին՝ անկախ պետականութեամբ եւ Ծիծեռնակաբերդով, բարձր մտաւորականներով, գիտնականներով եւ քաղաքական գործիչներով:


Նոր Տարին բախտորոշ պիտի ըլլար եթէ ներքին եւ արտաքին անկայուն պատահարներ չմատնէին ճակատագիրը հայուն: Արդարեւ մատնուեցանք յուժմպետս եւ ուրիշին հաշտոյն: Գաղթեցին ու վերապրեցան մեր անմիջական նախնիք, յատկապէս Սուրիա եւ Լիբանան, կերտելով ամէն ինչ, որոնց շնորհընկալները եղանք մենք՝ մեր սերունդը: Սակայն այսօր, վերապ-

րած հայութիւնը անօրինակ եւ բռնադատեալ քաղաքական ամենադաժան խառնակշուքեան զոհ դառնալ սկսաւ ճիշդ հոն ուր հարիւր տարի առաջ ապաստան գտած էին: Մերձաւոր Արեւելքի այսօրուան դժինք կացութիւնը եղաւ հայաշխարհի օրական մտահոգութիւնն ու մղձաւանջը:

Յեղասպանութեան առաջին զոհերը եղան Կ. Պոլսոյ Պատրիարքութիւնն ու Սիսի Հայոց Կաթողիկոսութիւնը՝ գլխաւորութեամբ Զաւէն Պատրիարք Տ. Եղիայեանի, եւ Սահակ Բ. Խապայեան Կիլիկիոյ Կաթողիկոսին: Արմաշու Դպրեւանքն ու շնորհալի հոգեւորականներէն հոյլ մը՝ իրենց պաշտօնին վրայ նահատակուեցան երիտասարդ տարիքին: Դէմքեր՝ Սմբատ եպիսկոպոս Կարնոյ, Խոսրով եպիսկոպոս Կեսարիոյ, Ներսէս եպիսկոպոս Ատանայի, Խորէն եպիսկոպոս Կիւրինի, Մկրտիչ վարդապետ Տիարաբերդի, Սահակ վարդապետ Երզնկայի, Արտաւազդ վարդապետ Եղեւսիոյ, Պարգեւ Ծ. վարդապետ Պրուսայի, Պսակ վարդապետ Խարբերդի, Շաւարշ վարդապետ Եւզոկիոյ, Սուրէն Ծ. վարդապետ Բաղէշի, Գեղամ վարդապետ Քղիի, Համազասպ վարդապետ Ճանիկի, եւ Անատոլուի բազմաթիւ այլ յականէ անուանէ ծանօթ հայ հոգեւորականներ, ինչպէս նաեւ Հայ Կաթողիկէ եւ Աւետարանական համայնքներէն:

Ի պատիւ վերապրող հոգեւորականներուն, Օրմանեան, Դուրեան, Կիւլէսէրեան, Յովակիմեան, Փերտահճեան, Գուշակեան, Նարոյեան, Գասպարեան, Սարաճեան, Կարոյեան, Աջապահեան, Մելքոնեան, Սիրունեան եպիսկոպոսներուն եւ այլոց, կը խոնարհինք իրենց յիշատակին առջեւ, որոնք Հայ Եկեղեցւոյ վերընձիւղումը իրագործեցին ամենէն ճգնաժամային տարիներուն՝ Երուսաղէմի Պատրիարքութեան վերականգնումին եւ Կիլիկիոյ Կաթողիկոսութեան նորահաստատ կայքին մէջ:

Արմաշի ուսուցչապետը Օրմանեան Պատրիարք ապրեցաւ տեսնելու առաջին պատերազմի զինարարը եւ ողջունելու Հայաստանի Հանրապետութիւնը երբ վախճանեցաւ իր ծննդավայր Կ. Պոլսոյ մէջ 1918 թուին: Դուրեան Պատրիարք Երուսաղէմի եւ Խապայեան Կաթողիկոս Կիլիկիոյ, գլուխն անցան նահատակ Հայ Եկեղեցւոյ եւ



հասան բեկեալ այդ նաւը ալեկոծ փոթորիկներէն փրկելու, որբախնամի պարտքն ալ ուսերուն, եւ յաջողեցան որպէս ճշմարիտ հերոսներ: Երուսաղէմը վտարանդի Սահակ Հայրապետին օգնութեան հասաւ Եղիշէ Դուրեան պատրիարքի շնորհիւ, Կիլիկիոյ Կաթողիկոսութեան տրամադրելով Լիբանանի եւ Սուրիոյ իր եկեղեցական եւ երուսաղիմապատկան վիճակները՝ օրհնութեամբ Տ.Տ. Գէորգ Ե. Վշտալի Ամենայն Հայոց Կաթողիկոսին:

Բաբգէն Ա. Աթոռակից Կաթողիկոսը Սահակ Հայրապետի կողքին ամրացուց թեմերը, բացաւ Անթիլիասի Դպրեւանքը 1930 թուին, հրաւիրեց Շահէ Գասպարեան ընտիր Արմաշակները եւ զինք եպիսկոպոս ձեռնադրելով վերատեսուչ նշանակեց դպրեւանքին: Երուսաղէմ եւ Անթիլիաս հարազատ հաստատութիւնները եղան փոխան նահատակ Արմաշի, որուն գլխաւորները եղան ուսվիրանները զոյգ հաստատութեանց՝ տակաւին քանամեակ մը չանցած ցեղասպանութեան արհաւիրքէն:

Նուազ վերապրողներ եղան հայ տաղանդաւոր մտաւորականներէն որոնց լաւագոյն եւ մեծագոյն մասը ցեղասպանութեան զոհ գացին, կացինահարելով արեւմտահայ գրականութեան ամենէն պտղատու կաղնին, որուն արգասիքը եղան ի միջի բազմաց վարուժան եւ Սրմաքէշխանյեան, Զարդարեան եւ Զոհրապ, Սեւակ եւ Սիամանթօ, Քէլէկեղան եւ Տաղաւարեան, Մեծն Կոմիտաս եւ Սմբատ Բիւրատ, Թլկատիցին ու Բարսեղեան: Յեղասպանութեան զոհ գացին ո՛չ միայն հին վանքերն ու դպրանոցները իրենց աշակերտութեամբ,

այլ նաեւ հազարաւոր ձեռագիր մատենաները, վկայ անոնց հրատարակելու ցուցակները, որոնց մնացորդացը ի պահ կը մնան այսօր ի վկայութիւն հայ գրչագրութեան եւ նկարչութեան անգերազանցելի արուեստին:

Նոր Տարին հայ ժողովուրդին համար Ծնունդն է նաեւ Փրկչին՝ Խաղաղութեան Իշխանին, որուն այնքան կարիքը ունի համայն աշխարհը այսօր: Սուրբ Ծնունդը մեր ժողովուրդին վերածնունդն է եղած ամէն տարի ճիշդ Ամանորին: Երկուքին բերկրանքը լիապէս կը հրճուեցնէ մեր երախաներն ու պատանիները, ինչպէս մենք հրճուեցանք հեռաւոր անցեալին: Տարիներու թաւալումը շատ բան խլեց մեր իրաւունքէն, եւ սակայն առաւելագոյն շնորհեց մեզի բարձրորակ առաքինութիւններ՝ հիմնուած բարերար պատեհութիւններու վրայ, ուր բարձր կանգնեցանք, պատիւ բերինք մեր անցեալին, եւ ներկայի դիմադրականութեամբ մեր ապագան երաշխաւորեցինք: Որբանոցները Մելքոնեան եւ այլ Հաստատութիւններու վերածեցինք, գաղթաշխարհը կերտեցինք եւ Սփիւռքը որպէս հարազատ նեցուկ հաստատեցինք Հայրենիքի կողքին՝ թէ՛ դժուար եւ թէ՛ փորձերով լի տանամեակներու ընդմէջէն:

Հարիւրամեակը կ'անցնի, եւ մեր նահատակ սերունդի թողած աւանդը չի խամրիր երբեք, պայմանաւ որ պատուաւոր պահապաններն ու գործադիրները ըլլանք մեր հոգեւոր եւ ազգային արժէքներուն՝ ներքնապէս համերաշխ եւ արտաքնապէս պատուաբեր: Շնորհաւոր Նոր Տարի եւ Սուրբ Ծնունդ բոլորիս:

ԻՆՉ Է ՏԱԼՈՒ ԴԱՅԱՍՏԱՆԻՆ «ԵՏՄ»-Ը (ԵԻՐՈ-ԱՄԻԱԿԱՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՄԻՈՒԹԻՒՆ) ԿԱՍ ՄԻ ՔԱՅԼ ԱՌԱՋ ԵՐԿՈՒ ՔԱՅԼ ՅԵՏ ՍՈՒՐԵՆ ԽՈՒԴԱՆԵԱՆ

Հարցը ըստ էության զգալի նշանակություն ձեռք բերեց, թե տարածաշրջանային, թե գլոբալ զարգացումների ֆոնի վրայ: Այն աստիճանի, որ Հայաստանի քաղաքական դաշտում հալածարար կենսունակ ընդհմոթեան ձեռառոման ընթացքը խարխափեց, եւ մօտեցրեց տարանջատման ու տրոհման: Պատգամաւորների մի զգալի մասը, այն համոզման են, որ արդէն «ԵՏՄ»-ին (Եւրո-Ասիական Տնտեսական Միութիւն) միանալու գործընթացը անշրջելի է, իշխանական թեւը ոգեւորուած է դրական ակնկալիքներով, իսկ մի փոքր մասն էլ այն համարում են պետական դաւաճանութիւն: Եթէ վերջին զարգացումների զգացմունքային մասերը տարանջատենք եւ իրատեսական հայեացքով դիտարկենք, այստեղ իշխանատենչ մոլորակներ, սեփական շահերի հետապնդման զգվրտոցի ականատեսը կը լինենք:

Այլեւս «Ժողովուրդական» հասկացութիւնն յետին պլան է մղուած: Հայաստանը իր տառապեալ բայց մաքառող ժողովուրդով դարձեալ հերթական պատմական ճամբաբաժանների առջեւ է կանգնած:

Չասենք Եւրոպականը դրախտային է, իսկ Եւրասիականը դժոխային: Յետագայ զարգացումների առաւել ճշգրիտ պատկերը ժամանակը ցոյց կը տայ:

Գործընթացների ուղղութիւնները, անգամ անգէն աչքերով թոյլ տալիս են, տեսնել, որ թմբկահարուող թուով 170 միլիոնանոց շուկայում տիրում է նոյն օլիգարխիկ համակարգը: Նոյն քաղաքական «գողական» օրէնքներով:

Դիտարկումների արդիւնքում, տեսնում ենք ներկայ զարգացումներից բխող սպասուելիք երկու հետեւանքներ:

Առաջինը: Տեղի է ունենալու մի քայլ առաջ: Այսինքն նոր բացուող շուկայի ֆոնին, որոշակի ներդրումների հաշուին աշխատատեղեր կը ստեղծուեն եւ շարքաշ աշխատողների որոշ մասը կը փրկուի աղքատութեան ճիրաններից: Եւ ներքին Սփիւռքի եւ հայրենիքի միգրացիոն պատկերը մի փոքր կը փոխուի յօգուտ ներգաղթի):

Յաջորդը՝ դա է, որ երկու

քայլ հետ ենք գնալու, եթէ չասենք «շարտուելու»: Նախ նոր շուկայի առաւելութիւնները դառնալու է իշխող օլիգարխիկ վերնախաւի մենաշնորհը: Միութեան անդամ երկրների օլիգարխիան վաղուց ի վեր հիւսուած են իրար: Այս համակարգում տնտեսական զարգացման խթանը դա այն ախորժակն է լինելու որ ժողովրդական խօսքով ասած «բացուած է ուտելուց»:

Բռնապետական երկրների քաղաքական էլիտան, օլիգարխիների էլիտայի հետ, ոչ միայն շղկապուած են, այլ միահիւստիած:

Ուստի թելադրողները լինելու են նրանց շահերը սպասարկող հլու հնազանդ ուժերը: Այս ուժերը իրենց կենսակերպով ըստ էութեամբ որդեգրած են լինում ժողովրդի շահերին չհամապատասխանող վարքագիծ: Արդիւնքում անջրպետը իշխողների եւ ժողովրդի միջեւ օր-օրի խորանալու է: Անդունդի վերածելով անջրպետը երկրի անվտանգութիւնը եւ ինքնիշխանութիւնն է դրուելու հարցականի տակ:

Երկրորդ քայլը, որ վստահօրէն յետընթաց կարելի է անուանել, դա այն է ինչ ժողովրդական գործընթացներից հեռանալ է կոչուած: Մտաբերենք այս միութեան երեք, վարչակարգերի բռնապետական էութիւնը: Նրանց լաւագոյն ներդաշնակեցումից անգամ բռնապետութեանը ձօնուած բռնագբօսիկ հնթիւններ կը լսեն: Այս ֆոնի վրայ ժողովրդավարացման գործընթացների կանգառ, սառեցում եւ յետադարձ է տեղի ունենալու, մի գործընթաց, որը այսօր օդի եւ ջրի նման մեզ հարկաւոր է:

Մարդու իրաւունքների մասին կարգախօսը լոկ ձեւական մի դրուազ է մնալու սահմանադրութեան տեքստում: Մարդը անկախ իր հաւատքից, սեռից ու գոյնից, որ պէտք է լիներ ուշադրութեան եւ հոգատարութիւն կենտրոնում էլ աւելի է ձեռք բերելու քաղաքացի-ճորտ կարգավիճակը: Եւրոիտեգրման ժամանակ, գոնէ յոյս ունէինք, որ հակառակ պրոցեսը տեղի պիտի ունենար, արդար եւ թափանցիկ ընտրութիւններով իշխանութիւն կը ձեւաւորուէր եւ արդարութիւն կը տիրէր արդարադատութեան համակարգում: Անկախ ու արդար դատաւորների



գոյութեան փաստը հաւատք կը ներշնչէր, եւ վերջապէս մեծ ու համատարած ներդրումների համար գրաւիչ միջավայր կը ստեղծուէր, եւ արդիւնքում բարգաւաճող եւ օր-օրի զարգացող երկրի ականատեսը կը լինէինք: Արտագաղթը կանգ կ'առնէր եւ ներգաղթի բաղձալի ժամանակները կը սկսուէր:

Եթէ «ԵՏՄ»-ին միանալը անխուսափելի փաստ է, ապա Եւրոիտեգրումը հրամայական պահանջ է: Մեծ հաշուով տնտեսականը քաղաքականի աճանցեալն է: Արդարադատութեան կենսունակ համակարգը պէտք է լիբաւ անջատուած լինի կառավարութիւնից: Արդար ու անկախ դատարանը պէտք է խիստ ընդգծումներով հաւատք ներշնչող լինի:

Հայաստանի քաղաքացին անկախ հաւատքից, համոզմունքից պէտք է լինի ուշադրութեան կենտրոնում եւ պետական հոգածութեան ներքոյ:

Պետական հայեցակարգերը պէտք է լինեն մարդասիրական եւ ազգային: Յանցագործութիւն կատարած մարդուն պէտք է բուժել եւ ոչ թէ պատժել:

Ի վերջոյ այս հայեցակարգա-

լին մօտեցումները բխում են մեր պատմական-աւանդական ակունքներից:

Այսուհանդերձ աւելացնենք մտահոգող այն կարծրատիպի մասին, որ խիստ զգացում է ժողովրդի շարքաշ գանգուածի մօտ, որը երկրի ծանր հոգսերը ուսին առած անտրտունջ տանում է եւ եկող գնացող իշխանութիւններից յուսաւքուած : «Ուժեղ բռունցք» կոչուած առաջնորդ ունենալու կարոտախտով է տառապում: «Ուժեղ բռունցք» թերեւս օրինաչափ եւ ընդունելի է: Բայց երբ որ նրա պատկերացրած առաջնորդի կերպարում ընդգծուած բռնապետի շղկախն է երեւում, ակամայից ժողովրդական իշխանութեան բաղձալի ապագան մշուշապատուած է եւ փրկարար փարոսի լոյսը խամրում:

Վերջում լաւատեսօրէն եզրափակելու համար, յոյս ունենանք որ ինչպէս Եւրոպայի այնպէս էլ առաջադիմական երկրների դոնները չի փակուի մեր առջեւ եւ հայրենասէր ու խորաթափանց առաջնորդների հմուտ ղեկավարութեան շնորհիւ: Հայրենի նաւը անվնաս դուրս կը գալ փոթորկալից վայրիվերումներից:

massisweekly.com
updated every Friday

ՇՆՈՐՀԱՒՈՐ ՆՈՐ ՏԱՐԻ ԵՒ ՍՈՒՐԲ ԾՆՈՒՆԴ

ՏԵՐ ԵՒ ՏԻԿԻՆ ԿԱՐՕ ԵՒ ԱՆԻ ՊԷՔԱՐԵԱՆ

ԱՐԱԲԱԿԱՆ ԱՇԽԱՐՀ - 2014

9. ՄՈՒՆՅԵԱՆ

ԵԳԻՊՏՈՍ

Արաբական աշխարհի հզորագույն պետություններէն Եգիպտոս տարին բոլորեց համեմատաբար նուազ խռովայոյզ վիճակի մէջ: Երկիրը յուզող գլխաւոր հարցերն էին ներքին ապահովութեան եւ կայունութեան վերահաստատումը, ինչպէս նաեւ տնտեսական անկեայ դրութեան սանձահարումը: Իսկ քաղաքական գետնի վրայ չի կրցաւ վերատիրանալ իր երբեմնի հեղինակաւոր եւ առաջնորդողի դիրքին որ ունէր մասնաւորաբար Արաբական Լիկայէն ներս:

2011 թուականին հրաժարած նախագահ Հուսնի Մուպարաբի յաջորդողները՝ Մուհամմատ Հուսնի թանթաուին եւ Ատլի Մանսուր չի կրցան արդարացնել իրենց վրայ դրուած յոյսերը եւ ի վերջոյ զիրենք փոխարինեց «Ազատութիւն Արդարութիւն Կուսակցութեան» ներկայացուցիչ Մուհամմատ Մորսին: Այս վերջինի օրով իսլամ եղբայրներու կողմէ եղած կողմնակալ եւ հակադեմոկրատական միջամտութիւնները պատճառ դարձան զանգուածային ցոյցերու եւ բիրտ միջամտութիւններու, որոնց գոհ գացին տասնեակ մը անմեղներ եւ հարիւրաւոր վիրաւորներ:

Ներկայիս, 8 Յունիս 2014էն ի վեր երկրի ղեկն ստանձնած է համեմատաբար «անկախ» յորջորջուող Ապտէլ Ֆաթթահ էլ Միսին: Նոր նախագահի առաջին գործերէն մին եղաւ զսպել մահմետական եղբայրներու գործունէութիւններն ու բիրտ արարքները: Եգիպտոսի ամենամեծ քաղաքական շարժումը ներկայիս ապօրէն հռչակուելով կը դասուի ահաբեկչական կազմակերպութիւններու շարքին Մահմետական Եղբայրներու անդամներէն եւ համակիրներէն ցարդ ձերբակալուած են 16000 հոգի եւ ոստիկանութեան հետ ունեցած բախումներէն մահացածներ եւ վիրաւորներու թիւը կը հասնի հարիւրաւորներու:

Եգիպտոսի քաղաքական կեանքի վերջին անակնկալը՝ երբեմնի նախագահ Հուսնի Մուպարաբի ազատ արձակումն էր: Ան բանտարկուած էր դրամական մեծ գումարներու իւրացումով, ընտանիքի անդամներուն տրուած շահագիտական առանձնաշնորհումներով եւ գործուած բազմաթիւ ոճիրներու մեղաւկցութեան համար:



Եգիպտոսի մեծագույն դժուարութիւնը տնտեսական ահաբեկչութիւնն է որ սկիզբ առած էր 2011 թուականին: Մեծ տագնապ մը կայ սննդամթերքի եւ քարիւղի համար: Երկրի բնակչութեան 45 առ հարիւրին օրական եկամուտը երկու տոլարէն նուազ է:

Միջին Արեւելքի ներկայ իրադրութեանց յոյսին տակ եգիպտոսի առջեւ ցցուած կը մնայ քաղաքական եւ տնտեսական ոչ փայլուն ապագայ մը:

ԼԻԲԱՆԱՆ

Երբեմնի «Արեւելքի Զուիցերիան» Լիբանան բոլորեց քաղաքական, տնտեսական եւ ընկերային դժուարին տարի մը: Արդարեւ օտար ազդեցութեանց տակ գործող քաղաքական կազմակերպութիւններ կը դժուարանան հասարակաց լեզու մը գտնել եւ իրար հասկացողութեամբ կառավարել երկիր մը, որուն գերիշխանութիւնն ու անկախութիւնը մեծապէս վտանգուած է ներկայիս:

1975-1990 Լիբանանի քաղաքացիական պատերազմէն ետք երկիրն ունեցաւ դիւրաբեկ անդորրութիւն մը, որուն ընթացքին տեղի ունեցաւ քրիստոնեաներու արտագաղթ եւ անոր հակասող սուրիահայատակներու ներխուժում: Ներկայիս մօտ մէկ միլիոն սուրիացի գաղթականներ տեղաւորուած են Լիբանանի տարբեր բնակավայրերու մէջ, ընկերային եւ տնտեսական մեծ տագնապ մը ստեղծելով այս գեղածիծաղ երկրին մէջ:

Տարեսկիզբին երկրի վարչապետ հրաժարած ըլլալով դուռ

բացուած է նոր խոչընդոտներու: Տաս ամիս տեւող բնակչութիւններէ ետք վերջապէս թամամ Սալամ կազմեց նոր դահլիճ մը Ապրիլին:

Մայիսին Հանրապետութեան նախագահ Միշէլ Սուլէյման հրաժարեցաւ, աւարտած ըլլալով իր պաշտօնավարութեան ժամանակաշրջանը: Ներկայիս աւելի քան վեց ամիս է երկիրը նախագահ չունի: Հակառակ տարբեր կողմերէ եղած միջամտութիւններու խորհրդարանի խմբաւորումները չի կրցան ընդհանուր եզր մը գտնել եւ մեծամասնութեան կողմէ ընդունելի նախագահ մը ընտրել:

Օգոստոսին սահմանամերձ Արսալի մէջ տեղի ունեցած հակադիր ոյժերու եւ ՏԱԷՇ ահաբեկչական կազմակերպութեան ներթափանցումներու պատճառով տեղի ունեցան ահաբեկի բախումներ, սպանութիւններ եւ առեւանգումներ, սարսափի ալիք մը ստեղծելով շրջանին մէջ: Յարգ առեւանգուած կը մնան 30 ոստիկաններ: Անոնք պատանդ պահուած են մահուան սպառնալիքի տակ, փոխարէնը կը պահանջեն սուրիացի ոճրագործ բանտարկեալներու ազատ արձակումը:

Սեպտեմբերին ՄԱԿ-ի ընդհանուր ժողովին վարչապետ Սալամ կոչ ուղղեց միջազգային ընտանիքին Լիբանանը ազատագրելու ահաբեկիչներէն եւ մարդասիրական օժանդակութիւններ կատարելու երկրէն ներս ապաստան գտած սուրիացի գաղթականներուն:

Միւս կողմէ Լիբանան մերժեց գինուորական օժանդակութեան

իրանի առաջարկը: Սակայն ողջունեց Մէուտական Արաբիոյ երեք միլիառ տոլարի յատկացումը լիբանանեան բնակի անմիջական կարիքներուն համար:

Երկրի քաղաքական շրջանակներու մնայուն մտահոգութիւնը հանրապետութեան նոր նախագահ մը ընտրութիւնն է, որուն պիտի յաջորդէ խորհրդարանական ընտրութեանց նոր օրինագիծի մը մշակումն ու վաւերացումը:

ՍՈՒՐԻԱ

2011 թուականի Մարտ ամիսէն ի վեր Սուրիա միւրճուած է քաղաքացիական պատերազմի ճիւղաններուն մէջ: Յարգ գոհ գացած են 150 հազարի հասնող քաղաքացիներ եւ գինուորականներ: Հակառակադարական ընդդիմադիր զօրքերուն առնթեր երեւան եկած «ՏԱԷՇ» ծայրայեղ իսլամական շարժումը, բռնագրաւելով շատ մը գորանոցներ եւ դրամատուներ՝ սկսած է աւերներ գործել թէ Սուրիոյ եւ թէ տարածաշրջանին կարգ մը երկիրներու մէջ: ՏԱԷՇի նպատակն է ստեղծել Միացեալ Իսլամական Խալիֆաութիւն մը գլխաւորաբար Իրաքի եւ Սուրիոյ մէջ եւ ապա տարածուիլ մերձակայ երկիրներու մէջ: Արդարեւ իրենց խաբանարարութիւններով եւ բռնի ոյժի գործածումով աւերներ սփռող այս կազմակերպութիւնը սկսած է մեծապէս մտահոգել Արեւմուտքի երկիրները: Անոնք եւս սկսան ուժեղ պայքար մղել եւ գործնական քայլեր առնել, ոչնչացնելու այս ահաբեկիչները:

Թուրքիոյ զօրակցութիւնը վաղէկ տաշականներ եւ երկրի ընդդիմադիր ոյժերը շարունակեցին աւերներ գործել Սուրիոյ տարբեր շրջաններուն մէջ: Ռուսիոյ եւ Իրանի կառավարութիւնները շարունակեցին իրենց անվերապահ աջակցութիւնն ու զօրակցութիւնը յայտնել երկրի նախագահ Պաշար Ասատի իշխանութեան: Այս զօրակցութիւնը հաճելի չէր Իսրայէլի եւ իր հերթին ռմբակոծիչ սաւառնակներով հարուածեց Դամասկոսի օդակայանը:

Միւս կողմէ մարդասիրական օժանդակութիւնները կը շարունակուին հասնիլ Սուրիոյ մէջ տեղահանուած գաղթականներուն, որոնց իրավիճակը հետզհետէ աւելի կը

Շարք էջ 34

**ՇՆՈՐՀԱՒՈՐ
ՆՈՐ ՏԱՐԻ
ԵՒ ՍՈՒՐԲ ԾՆՈՒՆԴ**

ՏԷՐ ԵՒ ՏԻԿ. ԺԻՐԱՅՐ ԵՒ ՍԻՄԱ ԿԻՐԱԿՈՍԵԱՆ

ՉԱՐԱԲԱՍՏԻԿ ՏԱՐԻՆ ԵՒ ԱՇԽԱՏԱՆՔԻ ՆՈՐ ԹԱՓ

Ռ. ԿՈՐԻԻՆ

Տարին իր աւարտին է հասնում, չարաբաստիկ տարի, արիւնահեղութեանց, աւեր ու աւերածութեան Միջին Արեւելեան եւ այլ երկրների ժողովուրդների կեանքում, անմասն չմնացին մեր սուրիահայերը՝ տնաքանդութիւն, կորուստներ, ահ ու սարսափի մղձաւանջային կեանք դեռեւս շարունակւող թրքապաշտպան Դահիշ կոչեցեալ մոլեռանդ իսլամ խմբակցութեան միջոցով: Նաեւ մեր հայրենիքի սահմանային գոտիում զինծառայողների, խոցուած ուղղաթիռի օդաչուների նահատակներ եւ կորուստներ թուրք ատրէձջանցիների հրադադարը շարունակ խախտող զնդակոծումներից եւ յարձակումներից առաջացած:

Ահա փոթորկոտ հին տարին մեր ետին թողած նորն ենք սկսում, նորի լաւին սպասող, խաղաղ ու անվրդով կեանք ցանկացող, հայոց սրտերը ուրախացնող ազգային յարթական ակնկալիքներով, այն յոյսով որ բոլորիս միասնական աշխատանքով՝ մէկ ընտանիքի գիտակցութեամբ, հայրենիք եւ Սփիւռք միատեղ սրտցաւութեամբ, բոլոր կուսակցութիւնների եւ կազմակերպութիւնների՝ եկեղեցական ու աշխարհական, դէպի մէկ նպատակ, ազգային եւ հայրենասիրական արժէքներով եւ նպատակներով առաջնորդող քաղաքականութիւն:

Ձախողութիւնների շարան է անցեալը մեր եւ հպարտանքի աղօտ ցոլանքներ, սակայն անհաւատալի սիրագործութիւնների եւ ոգորումների հրաշք գոյատեւում, արդիւնքում՝ անկախ պետականութեան կերտում: Ուրախացանք մեր անկախութեամբ համոզուելով վերջ կը տրուի մեր տառապանքներին, հայահաւաք կը կատարուի, կը պաշտպանուի եւ կը ծաղկի մեր մշակույթը, գիրն ու գրականութիւնը, կ'ամոքուեն ու կը բուժուեն անցեալի վէրքերը՝ սակայն հայը կը լքի իր երկիրը, թուրք իշխանաւորները աստիճանաբար կը հիւժեն մեր երկիրն ու ժողովուրդը փակ պահելով կենսատու ճանապարհները չաչս մեծ պետութիւնների ոչ դատապարտելի:

Օտարից օգնութիւն մի՛ սպասիր հայ մարդ, օտարը շողոքորթ իր ջրաղացին է ջուր լցնում, ձեռքը դիր քո անդաւաճան ծնկին

եւ բարձրացիր, արիւնակիցներից օգնութեամբ ուժ ստացիր եւ քաջ ու արի առաջ շարժուիր իդեալներ իրականացման ճամբին հայրենիքը հզօրացնել եւ այդ ճամբին սիրագործութիւններով ապրել ու արարել:

Հայաստանցի հայ, հայրենիքը դժուարութիւնների պատճառով լքելով մտային եւ հոգեկան խաղաղութեան չես հասնի արտերկրում, շարունակ պիտի ապրես ճնշուած ու զլխահակ որպէս գաղթական ու եկտր փոր կշտացնելու համար օտարի ողորմածութեան ենթակայ: Իմ հասկացողութեամբ՝ լքելը միակ ճամբան է, այլ համբերութեամբ եւ աշխատանքով նախանձախնդիր մեր ազգային եւ հայրենասիրական արժէքներին ջանալ դժուարութիւնները վերացնել, որով թէ՛ հայրենիքի եւ ժողովրդի ծառայած կը լինես եւ թէ՛ փայլուն ապագայ կառուցած կը լինես զաւակներիդ համար: Հայրենիք լքողը անորոշութեան մատնելով իր կեանքը վտանգում է նաեւ հայրենաբնակ հայի կեանքը պաշտպանողական տեսակետից: Մեր արժանաւոր բանաստեղծներից Ռոմանոս Սահակեանը խորհուրդ է տալիս հային գրելով՝

Դու տուց մի՛ շինիք օտարի հողում,
 Ձեւ հասկանայ վաղն ինչ է բերելու,
 Օտարի շուկայն է հոգիդ գերելու,
 Դու տուց մի՛ շինիք օտարի հողում,
 Քանի դեռ ուշ է՝ ջեռ կեանքն է շողում,
 Մարդիկ պատրաստ են մեղիդ ներելու,
 Դու տուց մի՛ շինիք օտարի հողում,
 Ձեւ հասկանայ վաղն ինչ է բերելու:

Յեղասպանութեան հարիւրամեակի տարին ենք թեւակոխում, 2015 թիւ, հարիւր տարիներ, անցած տարիներ, բայց թարմ ու անժամանցելի տարիներ, դեռ անդադրում ու անկտրում ողջ հայութեամբ միատեղ շարունակուելու է կենդանի ու անմոռանալի պահելու չիշտակն ու պահանջատիրութիւնը հայ ժողովրդի մէկ ու կէս միլիոնից աւելի մեր քոյր ու եղբայրների, ար-

դար ու անմեղ, հաւատարիմ ու Աստուածավախ, աշխատասէր ու գործունեաց զաւակների հայրենի տնից ու օրրարանից տեղահանութիւնը, կոտորածն ու ջարդը պետականօրէն կազմակերպուած, ծրագրուած ու հրահրուած մի ողջ ազգի ու ժողովրդի ցեղասպանութիւն:

Ինչի համար այս հասարատու մարդասպանութիւնը, հայասպանութիւնը ո՞ր մեղքի համար, ո՞ր յանցանքի համար, ոչ մեղք կար ոչ յանցանք, այլ անմարդկային նպատակներ, քրիստոնեաց հայերին վերացնել երկրի երեսից, նրա ունեցուածքը թալանել, կերտածն ու կառուցածը սեփականացնել, կոթողները աւերել, տունն ու երկիրը բռնագրաւել փանթուրքիստ կառուցելու, ծաւալուելու դէպի միջին ասիական թրքախօս ու մուսուլման երկրները կայսերական նկրտումներով ու նպատակներով:

Յօդս ցնդեցին իթիհադատականների, թուրք մոլեռանդ իշխանաւորների երազանքները, հայը մնաց, ծիլեր արձակեց, ծիլերը սարմերի վերածուեցին, սարմերը հաստաբեւ բուների, որոնք ի լուր աշխարհին պայքարի ու պահանջատիրութեան բուռնցքները սեղմած ոչ թէ ի մահ թուրք ժողովրդի, այլ մարդասիրութեան նպատակներով պահանջուած է արդարութեան գործադրում, ցեղասպանութեան ընդունում, հատուցում եւ բռնագրաւում հողերի վերադարձ, շատ մարդկային, շատ արդարադատելի եւ շատ տրամաբանելի:

Հարիւր տարին մագապուրծ փրկուածների համար սկսուեց ողբ ու սուգով, ցաւով ու վշտով, տառապանքով ու շարժարանքով, նեղութիւններով ու մղձաւանջային օրերով: Տարիների թաւալումով հայը գոյատեւման անկտրում կամքով ու աշխատանքով վերագտաւ իրեն, հասկացաւ ողբերգութեան ահաւորութիւնը, երիտասարդներ դիմեցին վրէժխնդրութեան, աղաչանքով ու խնդրանքով դիմումներ կատարուեցին մեծ պետութեանց վերահասու լինել հայ ժողովրդի դատին ու պահանջին, սակայն մնացին անպատասխան դիմումներ:

Պայքարը թափով շարունակուեց, կատարուեց աշխարհացունց ահաբեկումներ ի լուր աշխարհին

տեղեկացնելու Ապրիլեան նահատակների եւ ողջ հայութեան ցաւը, դատը, պահանջը: Շնորհիւ սփիւռքահայ կազմակերպութիւնների պողպատէ կամքին ու աշխատանքին Լատին Ամերիկայի Ուրուգուէ երկրից սկսուեց հայոց ցեղասպանութեան ճանաչումը եւ հետզհետէ աճումը, որով այսօր պատկառելի թիւ են կազմում դատը ճանաչողները:

Պայքարի ոգեպնդիչ արդիւնքները լուրջ պարզ ու յստակ արձագանգները թուրքիայից, թուրք ժողովրդի մտաւորական դասի, հայոց ցեղասպանութիւնը ճանաչող մարդասէր ու հայասէր կազմակերպութիւնների մեզ մղում են առաւել աշխուժացնել եւ թափ տալ պահանջատիրութեան աշխատանքները պետականօրէն եւ ժողովրդականօրէն: Մեր դատը արդար է, անհերքելի ու անուրանալի:

Գալով հայրենի ներքին սոցիալական կեանքին նկատելի են ցաւալի դէպքեր եւ աղէտներ, որը ինքնաշարժի վթարներով, որը կրակոցներով, որը խուլիզանական վարքերով մարդուս մտածել են տալիս, թէ ո՞վ է այս վիճակի պատասխանատուն՝ անկասկած անտարբեր վերաբերմունքը, արդարութեան պակասը եւ անպատեւելութեան հետեւանքը: Ոճրագործին մահակախաղան, արդարին պաշտպանութիւն, չարագործին եւ օրինազանցին խստագոյնս պատիժ, ապա կը տեսնես խաղաղ եւ օրինաւոր կեանք արտասահմանեան ներդրումների համար:

Ակնկալում էինք հայ մշակույթի եւ հայ լեզուի տիրապետութիւն բոլոր բնագաւառներում, բայց արի ու տես՝ ուսուսելու բառերի տարածման մէջ եւս սուկի պէս աճում են՝ տարբեր լեզուների բառակապակցութիւնների գործածութիւնը առօրեայի խօսակցական լեզուում եւ հաղորդումներում: Դէմ չենք օտար լեզուների ուսուցման եւ իւրացման: Յարաբերութիւնը, շփումը փոխադարձ սիրոյ եւ յարգանքի առումով ժողովուրդներին իրար է մօտեցնում միջազգային խաղաղութիւնը ամրապնդելու համար, բայց դէմ ենք ի վնաս մեր մշակույթի եւ ոսկեղնիկ լեզուի աղաւաղման որոշ գլեհիկ ֆիլմերի, ներկայացումների եւ թոյլտուութիւնների հետ:

Շաբ.ը էջ 10

**ՇՆՈՐՀԱՒՈՐ
 ՆՈՐ ՏԱՐԻ
 ԵՒ ՍՈՒՐԲ ԾՆՈՒՆԴ**

ՏԵՐ ԵՒ ՏԻԿ. ԳԷՈՐԳ ԵՒ ԼՈՒՍԻՆ ԳԱԼՈՒՍՏԵԱՆ

ՄԱՍԻՍ - 2015

ՉԱՐԱԲԱՍՏԻԿ ՏԱՐԻՆ ԵՒ ԱՇԽԱՏԱՆՔԻ ՆՈՐ ԹԱՓ

Մարտնակուած էջ 9-էն

Անցնող տարում Արցախը կրկին մնաց լրատուական թէժ դաշտում յարձակումների, դիպուկահարների եւ ուղղաթիռի խոցման պատճառով: Հերոսական դիմադրութիւններն ու փոխադարձ պատասխանները ապացուցեցին մեր զինուորների եւ բանակայինների հզօրութիւնը, կազմակերպուածութիւնը եւ կուռ հաւատքը հայրենի սահմանները պաշտպանելու եւ խաղաղութիւն հաստատելու համար, հաւատում ենք այն ասացուածքին, թէ՛ ով խաղաղութիւն է ուզում, պէտք է ուժեղ լինի:

Արցախի նկատմամբ Ատրպէյճանի պահանջները անհիմն են ու անընդունելի, Արցախը հայկական տարածք է դարերի խորքից փաստագրուած, հազարաւոր նահատակների արեամբ ազատագրուած հողերը պապենական են եւ ոչ վերադարձելիք: Արցախ եւ Հայաստան մէկ է՝ պապենական երկիր եւ հայրենիք, մէկը միւսին լրացնող, մէկը միւսին պաշտպան, որեւէ այլ մտածում հաւասար է հայ ժողովրդի կորստեան: Որեւէ զիջում ազատագրուած տարածքներից մեր իշխանաւորների խեղճութիւնը, անհեռատես քաղաքականութիւնն է ապացուցելու, որը կ'օգտագործուի հայահալած թշնամուկողմից եւ հետագային կը դառնայ հայութեան համար փորձանք:

Ըստ աւանդույթի այս տարի եւս տեղի ունեցաւ Հայաստան Համահայկական Հիմնադրամի թելեթոնը ԱՄՆ-ի գոհաբանութեան օրը հեռուստամարաթոնային խանդավառ եւ ոգեւորիչ ծրագրով

Payaslian suggested that more context and use of existing literature would be helpful in Giorgi’s work. He agreed with Hovannisian’s views on current Armenian Genocide denial. He pointed out for Watenpaugh that the origins of modern international human rights began with slavery and the abolitionist movement, and the post-World War I League of Nations efforts were contributions to the development of international human rights. Finally, he wondered whether the disintegration of Armenian communities in places like Worcester, Mass. could be connected to the transfer of trauma resulting from the Armenian Genocide.

The panelists then defended their approaches and answered further questions from the audience, after which Barlow Der Mugrdchian, Treasurer of the SAS, thanked all organizers, participants and audience members and closed the conference. He said that Armenologists did not have the opportunity to interact in this open manner in many other places, so this conference was a useful contribution to the furtherance of Armenian Studies.

Pontifical Encyclical on the Occasion of the 100th Anniversary of Armenian Genocide

Continued from page 1

O, Armenian people, graced from on high – a nation martyred; a nation resurrected – live boldly, advance surely, with your gaze toward Ark-bearing Ararat, and with an unwavering heart, keep your hope great. The Lord’s encouragement and message are addressed to you: “Though you are not mighty, you were faithful to my word and you did not betray my name... Hold fast what you have so that no one will take away your crown of victory.” (Revelations 3:8-11). Thus, let us stay on course before God, righteous and true, on the steadfast paths of faith, which like the morning light dispels the darkness and makes the horizons of hope visible. Our way is with God; and the life of faith is our victory. Let us make fruitful the centennial anniversary by valuing our peoples’ 100-year-long path of travails and rebirth, so that our children, recognizing the heroic will of their grandparents and parents to live and create, and their commissions undertaken for the sake of nation and

homeland, create the bright day of our native land and our people dispersed throughout the world. Let us transform the remembrance of our martyrs into energy and strength in our spiritual and national life, and before God and all people, illuminate the path by our righteous course to guide our way toward the realization of justice and our sacred aspirations.

From our nation’s Christ-built and cherished spiritual center, before the Mother See of Holy Etchmiadzin’s Holy Altar of Descent of the Only Begotten, let us pray to God for peace, safety and the welfare of our Homeland, our beloved people throughout the world, and especially, for everlasting light and peace for the innocent souls of the holy martyrs of genocide. May love and brotherhood, justice and truth reign over humankind, and may the ways of the righteous radiate, guide and spread the light until the dawn of a new day brings peace and happiness to all the world.

May the grace, love and peace of our Lord Jesus the Christ be with you and with us all. Amen.

ԱՄՍՏՐԱԼԻԱՅԻ ՑՈՒՑԱԲԵՐԱԾ ՄԱՐԴԱՍԻՐԱԿԱՆ ՕԳՆՈՒԹԻՒՆԸ ՀԱՅ ԳԱՂԹԱԿԱՆՆԵՐԻՆ ԵՒ ՈՐԲԵՐԻՆ 1915-30 ԹԹ.

ԼՈՒՍԻՆԵ ԱՐԱՐԱՄԵԱՆ

Առաջին աշխարհամարտի տարիներին Օսմանեան կայսրութիւնում հայերի եւ քրիստոնեայ այլ ժողովուրդների տեղահանութեան ու կոտորածների մասին լուրերը մեծ արձագանք գտան ԱՄՆ-ում եւ եւրոպական պետութիւններում, ինչպէս նաեւ հեռավոր Աւստրալիայում: Հայերի կոտորածների մասին լուրերն Աւստրալիա էին հասնում Մերձաւոր Արեւելքում գտնուող ԱՆՁԱԿ-ի (1) գինուորների, պատերազմական թղթակիցների հեռագրերի, ինչպէս նաեւ մամուլի միջոցով: Մերձաւոր Արեւելքի միլիոնաւոր կարիքաւորներին օգնելու նպատակով Աւստրալիայում սկիզբ առաւ աննախադէպ մարդասիրական շարժում, որը տարածուեց գրեթէ բոլոր նահանգներում՝ ընդունելով համազգային բնույթ:

1915թ. Դեկտեմբերին Մելբուռնում կազմաւորուեց Հայկական նպաստամատոց հիմնադրամը (Armenian Relief Fund), որի գործունէութեանը մեծապէս աջակցեցին Վիկտորիա նահանգի կառավարութիւնը, եկեղեցական առաջնորդները, մի շարք առաջադէմ գործիչներ եւ գործարարներ: Հիմնադրամի քարտուղարն էր օրիորդ Մ. Ե. Սըրլը: 1915թ. Դեկտեմբերի 9-ին «The Argus» թերթի միջոցով վերջինս կոչ արեց Աւստրալիայի ժողովրդին հետեւել Ամերիկայի օրինակին եւ անել հնարաւոր ամէն բան հայերին օգնելու համար: Իր կոչում օրիորդ Սըրլը նշում էր, որ «թուրքական կառավարութիւնն աներեւակայելի դաժանութեամբ ոչնչացնում է մի ամբողջ ժողովուրդ» եւ «ահագնացող առաջընթաց է գրանցել այդ ուղղութեամբ» (2): Օրիորդ Սըրլի կոչն արձագանք գտաւ Մելբուռնում գործող մի շարք բարեգործական կազմակերպութիւնների կողմից (Աւստրալական կարմիր խաչը, Աւստրալիայի հայրենասիրական հիմնադրամը, Սերբական նպաստամատոց հիմնադրամը եւ այլն), որի արդիւնքում հաւաքուեց շուրջ 300 ֆունտ սթեռլինգ (3) եւ ուղարկվեց Լոնդոն «Հայ փախստականների հիմնադրամ» (4): Հայկական նպաստամատոց հիմնադրամի մարդասիրական գործունէութեանը մեծապէս նպաստեց 1917թ. սկզբին

Մելբուռնում ձեւաւորուած «Հայաստանի բարեկամներ» կազմակերպութիւնը (Friends of Armenia), որի հիմնադիրներն էին Ալեքսանդր Լիւիսերը (Մելբուռնի համալսարանի Թրինիթի քոլեջի դեկանը), Ուիլիամ Հ. Էդգարը (Օրէնսդիր խորհրդի անդամ) եւ Պատուելի Ջէյմս Ե. Թոմասը (Վիկտորիա նահանգի եկեղեցական խորհրդի նախագահ): Մարդասիրական օգնութեան գործում Աւստրալիայի քաղաքացիների մասնակցութիւնը կազմակերպելու նպատակով Հայկական նպաստամատոց հիմնադրամի եւ «Հայաստանի բարեկամներ» կազմակերպութեան անդամները քարոզչական լայն գործունէութիւն ծաւալեցին Աւստրալիայի ողջ տարածքում: Հանգանակութիւններ կազմակերպելու նպատակով տեղեկատուութիւն էր տարածում հասարակութեան բոլոր շերտերի շրջանում: Դա արւում էր հիմնականում հանրութեանն ուղղուած առանձին անհատների ելոյթների եւ կոչերի, թերթերի, քարոզչական բրոշուրների, կրթականների ու շարժանկարների միջոցով:

Հանգանակութիւնների կազմակերպման իրենց աջակցութիւնը ցուցաբերեցին նաեւ որոշ պաշտօնեաներ, ովքեր յատուկ կոչերով խրախուսում էին հանգանակութիւններ կազմակերպելու նպատակով տարբեր միջոցառումների իրականացումը: Նման մի քայլ էր Մելբուռնի քաղաքապետ Դեւիդ Հենեսիի, Վիկտորիա նահանգի եկեղեցական խորհրդի եւ «Հայաստանի բարեկամներ» կազմակերպութեան համատեղ նախաձեռնութիւնը (5): 1917թ. Ապրիլի 20-ին Մելբուռնի քաղաքապետարանում իր ելոյթում քաղաքապետն առաջարկեց Ապրիլի 22-ը յատարարել «Հայերի Կիրակի» յատուկ օր հայ գաղթականների եւ որբերի օգտին դրամահաւաք իրականացնելու համար: Այս նախաձեռնութիւնը մեծ յաջողութիւն ունեցաւ, եւ նման միջոցառումներ կազմակերպվեցին նաեւ յաջորդ տարիներին (6): Հանգանակութիւններին մասնակցեցին տեղական եւ քաղաքային խորհուրդները, եկեղեցիները, կիրակնօրեայ դպրոցները, ինչպէս նաեւ գործարարներն ու հասարակ



On Tuesday, September 5th, the Archbishop took part in an unique ceremony on Prince's Pier, Port Melbourne. At the invitation of the Armenian Relief Fund Committee he blessed the consignment of flour and other produce which was shipped for Constantinople. There was a large gathering of representative citizens. The prayers used on this occasion are on page 442.

Մելբուռնի «Prince's» նաւահանգստում միջոցառում կատարեցին արքեպիսկոպոս Հերինգթոն Լիւիս օրհնում էր ցեղասպանութիւնը վերապրածների համար Կոստանդնուպոլիս ուղարկուող մարդասիրական օգնութիւնը: The Church of England Messenger, Սեպտեմբերի 12, 1922 թ.

մարդիկ: Հանգանակութիւններից եւ նուիրատուութիւնից ստացուած գումարն ուղարկուած էր Լոնտոն՝ «Հայ փախստականների հիմնադրամ», իսկ հանգանակուած իրերի համար Աւստրալական կարմիր խաչի տարբեր մասնաճիւղեր տրամադրուած էին իրենց պահեստները (7): Հայկական նպաստամատոց հիմնադրամն ակտիւօրէն համագործակցում էր թերթերի եւ պարբերականների հետ: Աւստրալական բոլոր յայտնի թերթերը մանրամասն կերպով լուսաբանում էին Մերձաւոր Արեւելքում տիրող իրավիճակը: Մելբուռնում լոյս տեսնող «The Age» թերթում միայն 1915թ. տպագրուեց հայերի կոտորածները լուսաբանող աւելի քան 40 յօդուած (8): «The Argus», «The Herald», «The Register», «Adelaide», «The Sydney morning Herald», «Sunday Times» եւ այլ յայտնի թերթերում յաճախ էին յօդուածներ լոյս տեսնում այնպիսի

խորագրերով, ինչպիսիք էին «Միլիոնաւոր հայեր աքսորուել են» «Հազարաւոր հայեր մորթուել են», «Հայերի կոտորածները շարունակուած են. Թուրքիայում կանայք բացառապէս վաճառուած են» եւ այլն: Բոլոր յօդուածներում շեշտուած էին ողբերգութեան հակադէմք մասշտաբները եւ անյապաղ մարդասիրական օգնութեան անհրաժեշտութիւնը: Պատերազմի առաջին տարիներին թերթերի համար որպէս տեղեկատուութեան հիմնական աղբիւր մամուլը: Յետագայում յօդուածներում յաճախ ներառուած էին նաեւ տարածաշրջանից վերադարձած նպաստամատոցի աշխատակիցների հեռագրերն ու զեկոյցները, ինչպէս նաեւ ռազմագերիների վկայութիւնները: Հայերի օգտին հանգանակութիւններ կազմակերպելու մի եղանակ

Շաբ.ք էջ 24

**ՇՆՈՐՀԱՒՈՐ
ՆՈՐ ՏԱՐԻ
ԵՒ ՍՈՒՐԲ ԾՆՈՒՆԳ**

ՏԷՐ ԵՒ ՏԻԿԻՆ ԹՈՐԳՈՄ ՓՕՍԹԱՃԵԱՆ

ՄԱՍԻՍ - 2015

ԱՄՍՏՐԱԼԻԱՅԻ ՑՈՒՑԱԲԵՐԱԾ ՄԱՐԴԱՍԻՐԱԿԱՆ ՕԳՆՈՒԹԻՒՆԸ ՀԱՅ ԳԱՂԹԱԿԱՆՆԵՐԻՆ

Շարունակում էք 23 էջ

էր նաև կրծքանշանների թողարկումը: Առաջին աշխարհամարտի տարիներին նման կրծքանշաններ վաճառում էին զնացքներում, երկաթուղային կայարաններում, հալաքոյթների ժամանակ, եւ վաճառքից ստացուած հասոյթը փոխանցում էր ի նպաստ հայ գաղթականների: 1917թ. կրծքանշաններ արտադրող «Commonwealth Button Fund» ընկերութեան թողարկած կրծքանշաններից մէկի վրայ պատկերուած էր Մերձաւոր Արեւելքի մի տեսարան, սպիտակ աշտարակներով քաղաք եւ երեք արաբ՝ ուղտերի վրայ նստած: Կրծքանշանի վրայ գրուած էր «Սերբիա-Սիրիա-Հայաստան»: Այն թողարկուել էր հայ գաղթականներին եւ Բալկանեան պատերազմից տուժած սերբերին օգնելու նպատակով հանգանակութիւն իրականացնելու համար (9): Մէկ այլ կրծքանշան թողարկեց «Atkinson & CO» ընկերութիւնը Ադելաիդում 1922-23թթ. Աւստրալիայի Հայկական նպաստամատոյց հիմնադրամի նախաձեռնութեամբ: Կապույտ կրծքանշանի վրայ պատկերուած էր սպիտակ Դաշնային աստղը (10):

Իր կազմակերպած քարոզարշաւի ընթացքում Հայկական նպաստամատոյց հիմնադրամը թողարկում էր նաև գրքոյկներ: Դրանցից մէկը վերնագրուած էր «Ս.Օ.Ս. Գալիփոլից այն կողմ»: Դրանում լուսանկարների միջոցով ներկայացուած էր հայերի ծանր վիճակը եւ մէջբերուած էր 1915թ. Թալեաթ փաշայի՝ նահանգային կառավարիչներին յղուած հեռագրից մի հատուած, որում հրամայում էր սպանել Օսմանեան կայսրութեան տարածքում բնակւող բոլոր հայերին՝ առանց խնայելու անգամ կանանց, երեխաներին եւ ծերերին (11):

Մէկ այլ գրքոյկ կրում էր «Վիրաւոր հայերն օգնութեան խնդրանքով դիմում են Աւստրալացիներին» խորագիրը: Գրքոյկում, մասնաւորապէս, ասուած էր. «Ինչպէ՞ս կարող էք օգնել հալածուած հայերին, տարեկան 10 ֆունտ սթեռլինգը կը կերակրի, կը հագցնի եւ կը կրթի մէկ երեխայի», իսկ ներքեւի հատուածում նշուած էին այն հասցէները, որտեղ քաղաքացիները կարող էին հանգանակութիւններ կատարել (12):

Ուշագրաւ է նաև 1919թ. Հայկական նպաստամատոյց հիմնադրամի կողմից թողարկուած «Հայաստանի բարեկամներ» վերնագրով գրքոյկը (13): Նպատակն էր կազմակերպել դրամահաւաք՝ Աւստրալացիներին ներկայացնելով Հայաստանի եւ հայ ժողովրդի հարուստ անցեալը եւ ներկայիս ողբերգութիւնը: Նրանում ներկայացուած էր հայերի ծագումը, քրիստոնէութեան ընդունումը որպէս պետական կրօն, պաշարը քրիստոնէական հաւատի պահպանման համար, դարեր շարունակ կրկնուող կրօնական հալածանքներն ու կոտորածները, Արեւմտեան Հայաստանի տարբեր քաղաքների, ինչպէս նաև Ատանայի ջարդերը պատկերող լուսանկարներ: Վերջին էջում նշուած էր այն հասցէն, որտեղ պէտք է ուղարկուէին հանգանակութիւնները:

1922թ. Մայիսին, տեղում հայանպաստ աշխատանքները համակարգելու, հայկական նպաստամատոյց հիմնադրամի նոր մասնաճիւղեր հիմնելու եւ դրանք Մերձաւոր Արեւելքի նպաստամատոյցին միացնելու նպատակով Աւստրալիա ժամանեց Մերձաւոր Արեւելքի նպաստամատոյց կազմակերպութեան միջազգային յանձնակատար Լինքոլն Լ. Ուիլթը (14): Մինչ Աւստրալիա ժամանելը՝ նա Մերձաւոր Արեւելքի նպաստամատոյցի կոմիտէները էր հիմնել Հաւաքական կղզիներում, Ճապոնիայում, Չինաստանում, Քորիայում եւ Ֆիլիպիններում: 1922թ. Յուլիսի 8-ին եւ Օգոստոսի 9-ին Մելբուռնի եւ Սիդնեյի քաղաքապետարաններում նա հանդիպում ունեցաւ Վիկտորիա նահանգի քաղաքային եւ հոգեւոր առաջնորդների հետ, ներկայացրեց հայերի ծանր վիճակը, ծայրայեղ կարիքները՝ ընդգծելով, որ «մի ամբողջ ազգի կէսից ասելին ոչնչացուել է» (15): Ուիլթըն առաջարկեց Աւստրալիայի ժողովրդի կողմից հանգանակութիւններով լի մի նաւ ուղարկել Մերձաւոր Արեւելք: Այդ առաջարկը հաւանութեան արժանացաւ, եւ 1922 թ. Սեպտեմբերի 5-ին Դաշնային կառավարութեան ռոգենակերի (Commonwealth Government steamers) միջոցով Մերձաւոր Արեւելք ուղարկուեց առաջին օգնութիւնը, որն իր մէջ ներառում էր 100 տոննա ալիւր, խտացրած կաթ, հազուստ, կաշուէ եւ բամբակեայ իրեր: Մելբուռնի արքեպիսկոպոս

Հերինգթոն Լիւիսն այլ հոգեւորականների հետ Մելբուռնի նաւահանգստում օրհնեց փոխադրուող բեռը: Նաւի վրայ փակցուած էր մեծ դրօշ, որի վրայ գրուած էր՝ «Աւստրալական ալիւր սովեալ հայ երեխաների համար»: Աւստրալիայի վարչապետ Ուիլիամ Հիւրի խոստման համաձայն՝ բեռնափոխադրումն իրականացուեց անվճար (16):

Առաջին աշխարհամարտի աւարտը պայմաններ ստեղծեց առաւել արդիւնաւէտ դրամահաւաքի համար: Այն հարաւորութիւն ընձեռեց Աւստրալիայի հասարակութեան լայն շերտերին լուսանկարների եւ շարժական պատկերների միջոցով առաւել յստակ ընկալելու Մերձաւոր Արեւելքի ողբերգութեան ծաւալները: Օգտագործելով պատկերի զգայական ներգործութիւնը եւ գիտակցելով հայ գաղթականների ու որբերի ծանր վիճակը ներկայացնող լուսանկարների ազդեցութիւնը հասարակութեան վրայ՝ Աւստրալիայի տարբեր քաղաքներում կազմակերպուեցին վաւերագրական եւ գեղարուեստական ֆիլմերի ցուցադրութիւններ: Որպէս «տեղեկատուական գովազդ»՝ կինոթատրոններում յաճախ կազմակերպուեցին նաև ֆիլմերի ու լուսանկարների ցուցադրութիւններ, ինչի շնորհիւ թեման հասանելի էր դառնում հասարակութեան լայն շերտերին: 1920թ. Փետրուարի 28-ին «The Princess Theatre» թատրոնում՝ Սիւնիյի եւ Մելբուռնի հայկական նպաստամատոյց կոմիտէների նախաձեռնութեամբ տեղի ունեցաւ «Յօշոտուած Հայաստան» կամ «Հոգիների աճուրդ» ֆիլմի ցուցադրումը բարեգործական նպատակներով (17), իսկ 1919թ. Դեկտեմբերի 28-ից սկսած Աւստրալական «Sunday Times» շաբաթաթերթին իր իւրաքանչիւր համարում ֆիլմի ցուցադրութեան գովազդի հետ մէկտեղ մէկ էջի սահմաններում ներկայացնում էր ցեղասպանութիւնը վերապրած 15 տարեկան Աւրորա Մարդիգանեանի «Յօշոտուած Հայաստան» գրքից հատուածները (18):

Մերձաւոր Արեւելքի նպաստամատոյց կազմակերպութեան նախաձեռնութեամբ եւ Աւստրալիայի ու Նոր Զելանդիայի Հայկական նպաստամատոյց յանձնախմբերի ջանքերով 1922թ. Նոյեմբերին

Անթիլիասում՝ ներկայիս Մեծի Տանն Կիլիկիոյ կաթողիկոսութեան վայրում, հիմնուեց Աւստրալասիական որբանոցը (19), որն իր յարկի տակ առաւ շուրջ 1200 որբերի եւ գործեց մինչեւ 1929թ.: Որբանոցը, որն ունէր շուրջ 40 ուսուցիչ եւ նոյնքան էլ դաստիարակ, զբաղում էր որբերի խնամքով եւ մասնագիտական կրթութեամբ: Այստեղ որբերին սովորեցնում էին թուով 14 արհեստներ: Որբանոցից դուրս գալուց յետոյ նրանք պէտք է պատրաստ լինէին իրենց օթեւանած երկրի լիիրաւ անդամ դառնալու: Տնօրէնները նշանակուեցին ԱՆՉԱԿ-ի վետերան Զոն Նուդսենը եւ նրա կինը:

Որբանոցի ստեղծման, գործունէութեան, ինչպէս նաև նպաստամատոյց աշխատանքների կազմակերպման գործում նշանակալի դեր ունէր յատկապէս Պատուելի Զէյմա Քրեստելը: Իբրեւ Հայկական նպաստամատոյց հիմնադրամի գործադիր քարտուղար, նա 1923թ. այցելեց Աւստրալասիական որբանոց: Վերադառնալով Աւստրալիա՝ Քրեստելը մանրամասն զեկույց կազմեց եւ լուսանկարների միջոցով ներկայացրեց հայ գաղթականների եւ որբերի դրութիւնը, թէ ինչպէս էին Աւստրալասիական որբանոցում հայ տղաները Աւստրալիայից ուղարկուած կաշուից կօշիկ կարում եւ ինչպէս էին հաց թխում Աւստրալական ալիւրով (20):

Լ. Ուիլթը ժամանումն Աւստրալիա նոր թափ հարդրեց նպաստամատոյց աշխատանքների իրականացմանը: Որոշակիօրէն փոխուեցին եւ աւելացան հանգանակութիւններ կազմակերպելու միջոցները: Եթէ 1917-20թթ. դրամահաւաքներ կազմակերպուեցին հիմնականում եկեղեցիներում, իսկ նուիրատուութիւններն ու դրամահաւաքներից ստացուած գումարն ուղարկում էր Լոնտոն՝ «Հայ փախստականների հիմնադրամ», ապա Լ. Ուիլթը ժամանումից յետոյ հանգանակուած միջոցներն օգտագործւում էին Հայկական նպաստամատոյց կոմիտէների կողմից՝ ալիւր, կաթ եւ այլ անդամթերք գնելու համար, որն ուղարկում էր Աւստրալասիական որբանոց: Միայն 1927թ. Նոր Հարաւային Ուելսի Հայկական նպաստամատոյց կոմիտէն որբանոց

Շարք էք 25



**ՇՆՈՐՀԱՒՈՐ
ՆՈՐ ՏԱՐԻ
ԵՒ ՍՈՒՐԲ ԾՆՈՒՆԴ**

ՀԱՃՆՈՅ ՀԱՅՐԵՆԱԿՑԱԿԱՆ ՄԻՈՒԹԻՒՆ

ԱՄՍՏՐԱԼԻԱՅԻ ՑՈՒՑԱԲԵՐԱԾ ՄԱՐԴԱՍԻՐԱԿԱՆ ՕԳՆՈՒԹԻՒՆԸ ՀԱՅ ԳԱՂԹԱԿԱՆՆԵՐԻՆ

Շարունակում էք 24-էն

ուղարկեց հին հագուստների, խտացրած կաթի, պահածոյացուած մրգերի եւ բրդի չորս մեծ կապոց(21):

Բոլոր այն քաղաքներում, որտեղ գործում էին Հայկական նպաստամատուց հիմնադրամի կոմիտեները, հանգանակութիւններ կազմակերպում էին ոչ միայն դրամահաւաքի, այլ նաեւ հին հագուստների հաւաքման միջոցով, որը կազմակերպում էր հիմնականում դպրոցների ու գրադարանների շրջակայքում, ապա՝ տեղափոխում նպաստամատուցի գրասենեակներ: Հին հագուստների հաւաքման եւ հայ գաղթականների փոխանցելու նպատակով յայտարարութիւններ էին տարածում թերթերում: Նման յայտարարութիւններում ներկայացում էր հայ լքեալների գոյութեան ծանր պայմանները եւ նշում էին այն հասցէները, որտեղ պէտք է ուղարկուէին հանգանակութիւնները հագուստի եւ գումարի տեսքով(22):

Դրամահաւաք կազմակերպելու նպատակով Աւստրալիայի տարբեր քաղաքներում կազմակերպում էին նաեւ արեւելեան տօնավաճառներ: Սիտնիյում նման միջոցառումներից մէկի ժամանակ վաճառահաններն ու տաղաւարները կրում էին Արեւմտյան Հայաստանի քաղաքների անունները, իսկ վաճառողները հայկական աւանդական տարազներով էին (23):

Աւստրալիայում քարոզարշաւի իրականացման իրենց աջակցութիւնը ցուցաբերեցին նաեւ ժամանակի յայտնի հասարակական գործիչները, դերասաններն ու երգիչները: 1919թ. Յունիսի 28-ին Հայկական նպաստամատուց հիմնադրամը կազմակերպեց «Ivanhoe Strollers» արական երգչախմբի համերգը, որից ստացուած ողջ հասոյթն ուղարկուեց Լոնտոն՝ «Հայ փախստականների հիմնադրամ»(24):

1919թ. Վերջին Աւստրալացի երգչուհի Սեսիլիա Ջոնը Մելբուրնում հիմնեց «Երեխաների փրկութեան հիմնադրամ» կազմա-

կերպութիւնը, որն ակտիւորէն համագործակցեց Հայկական նպաստամատուց հիմնադրամի հետ: Յետագայում Հայկական նպաստամատուց հիմնադրամի բոլոր կոմիտեները միացան «Երեխաների փրկութեան հիմնադրամ»-ին(25):

Աւստրալիայում մարդասիրական շարժման կազմակերպման իրենց ակտիւ մասնակցութիւնն ունեցան նաեւ մի շարք առաջադէմ կանայք: Նրանցից շատերն անգամ մասնակցեցին Մերձաւոր Արեւելքում նպաստամատուց աշխատանքների իրականացմանը: Նրանց թւում էին նաեւ Հիլդա Քինգը, ով 1923թ. Ջեյմս Քրեստուելի հետ այցելեց Աւստրալասիական որբանոց եւ մասնակցեց որբախնամ աշխատանքներին, Մելբուրնի համալսարանի գիտնական, 1923թ. Ազգերի լիգայի պատուիրակ Ջեսի Ուեբը, 1922-26 թուականների ընթացքում Հայկական նպաստամատուց հիմնադրամի քարտուղար Էդիթ Գլանվիլը(26): Այսպիսով, 1915թ. Վիկտորիա

նահանգում սկիզբ առած նպաստամատուց շարժումը կարճ ժամանակում տարածուեց եւ ընդգրկեց Աւստրալիայի գրեթէ բոլոր նահանգները: Շարժման իրենց մասնակցութիւնը բերեցին մի շարք քաղաքական, հասարակական եւ հոգեւոր առաջնորդներ, իսկ որոշ աւստրալացի կամաւորներ էլ ներգրաւուեցին Մերձաւոր Արեւելքում ցեղասպանութիւնը վերապրածների շրջանում նպաստամատուց աշխատանքների իրականացմանը:

Աւստրալական նպաստամատուց կոմիտեները իրենց գործունէութիւնը շարունակեցին մինչեւ 1930-ականները: Նրանց գործունէութեան արդիւնքում անխուսափելի ոչնչացումից, սովից ու հիւանդութիւններից փրկուեցին հազարաւոր հայեր եւ Օսմանեան կայսրութիւնում բնակուող այլ քրիստոնեաներ:

Հայոց ցեղասպանութեան քանդարան-ինստիտուտ (ՀՅԹԻ) Ցեղասպանագիտական հանդէս, 2 (1), Երեւան, 2014թ.

1-ANZAC - Australian and New Zealand Army Corps Աւստրալիայի եւ Նոր Զելանդիայի բանակային զորամիաւորում): 1915թ. Ապրիլի 25-ին Աւստրալիայի եւ Նոր Զելանդիայի բանակային զորամիաւորումները Ուիւսթոն Զերչիլի ծրագրի համաձայն՝ բրիտանական հրամանատարութեան ներքոյ ափ իջան Գալիպոլի թերակղզում դէպի Սեւ ծով մանապարհ բացելու եւ Կ.Պոլիսը գրաւելու նպատակով: Գալիպոլիի մարտերը սկսուեցին 1915թ. Ապրիլի 25-ին՝ հայ մտաւորականների ձերբակալութիւնից մէկ օր անց, եւ աւարտուեցին 1916թ. Յունուարի 9-ին: Այդ ժամանակահատուածում Գալիպոլում գոհուեց 8709 աւստրալացի եւ 2721 նորզելանդացի: Ապրիլի 25-ը՝ «ԱՆԶԱԿ-ի օրը», Աւստրալիայում յիշատակի ազգային օր է: Այդ օրն Աւստրալիան նշում է իր մարտական մկրտութեան օրը:

- Այդ մասին աւելի մանրամասն տե՛ս http://web.archive.org/web/20130313050857/http://www.dva.gov.au/news_archive/Documents/The%20Gallipoli%20Campaign.pdf.
- 2-«The Argus», 1915, Դեկտեմբերի 9, էջ 5 (<http://trove.nla.gov.au/ndp/del/article/1584485>):
- 3-Նոյն տեղում, էջ 6:
- 4-1915 թ. Լոնտոնի Բալթիկալիսի նախաձեռնութեամբ ստեղծուեց «Հայ փախստականների հիմնադրամը», որը դրամահաւաք սկսեց օգնութեան կարիք ունեցող հայերի համար:
- 5-«The Argus», 1917, 21 Ապրիլի, էջ 16 (<http://trove.nla.gov.au/ndp/del/article/1612483>):
- 6-«The Argus», 1919, 29 Ապրիլի, էջ 7 (<http://trove.nla.gov.au/ndp/del/page/404630?zoomLevel=1>):
- 7-Babkenian V., "A Humanitarian Journey: the Reverend James Edwin Cresswell and the Armenian Relief Fund", Journal of the Historical Society of South Australia, number 37, 2009, p. 71.
- 8-Babkenian V. "An S.O.S. from beyond Gallipoli", Victoria and the

- Armenian Relief movement, Victorian Historian Journal, Vol 81, No. 2, November 2010, p.253.
- 9-Australian War Memorial, Heraldry Collection, Small fundraising badge "Serbia Syria Armenia", ID number REL 39129 (<http://www.awm.gov.au/collection/REL39129/>).
- 10-ՀՅԹԻ գիտական ֆոնդեր, բաժին 5, ֆ.հ. 69:
- 11-Babkenian V., "An S.O.S. from beyond Gallipoli...", pp.254-255.
- 12- Նոյն տեղում, էջ 263:
- 13-National Library of Australia, Digital Collections, Books and Serials, Call number FERG 2566, System number 2346165 (<http://nla.gov.au/nla.aus-vn1967551>).
- 14-,The Argus, 1922, 6 Յուլիսի, էջ 10 (<http://trove.nla.gov.au/ndp/del/article/1832557>):
- 15-«The Argus», 1922, 8 Յուլիսի, էջ 20 (<http://trove.nla.gov.au/ndp/del/article/1832858>):
- 16-«The Argus», 1922, 6 Սեպտեմբեր, էջ 19 (<http://trove.nla.gov.au/ndp/del/article/1842638>):
- 17-Babkenian V., "An S.O.S. from beyond Gallipoli"... p. 260.
- 18-«Sunday Times», 1919, 28 Դեկտեմբեր, էջ 13 Babkenian V., "An S.O.S. from beyond Gallipoli"... p. 260.
- 19-«Sunday Times», 1923, 4 մարտի, էջ 14:
- 20-«The Argus», 1923, 21 Ապրիլի, էջ 6 «The Argus», 1923, 7 օգոստոսի, էջ 13:
- 21-Babkenian V., "Edith May Glanville: Champion of the Armenian Relief Fund", Journal of the Ashfield & District Historical Society Inc., No. 17, 2008, p. 13.
- 22- National Library of Australia, Digitized newspapers and more.
- 23-Babkenian V., "Edith May Glanville ...", p. 11.
- 24-Babkenian V., "An S.O.S. from beyond Gallipoli"..., p. 260.
- 25-Նոյն տեղում, էջ 268:
- 26-Babkenian V., "Edith May Glanville", p. 9.

Հ.Մ.Մ. ՏԻԿՆԱՆՑ ՕԺԱՆԴԱԿ ՄԱՐՄԻՆԸ ԿԸ ՇՆՈՐՀԱԽՈՐԷ ԻՐ ԲՈԼՈՐ ԱՆԴԱՄՈՒՀԻՆԵՐՈՒՆ

ՆՈՐ ՏԱՐԻՆ ԵՒ Ս. ԾՆՈՒՆԴԸ



ՆՈՐ ՏԱՐԻՒԱՅ ԲԱՐԻ ԵՐԹԻ ԽՐԱՒԵԱՆՔ ՊՕՐՈՍ ԱՐՄԵՆԱԿ ԼԱԳԻՍԵԱՆ

Ձմեռ էր, հայկական լեռնաշխարհի խստաշունչ ձմեռ, ամիսն էր Դեկտեմբեր, տարին շնչահատ էր լինում: Մեռնում էր այն, ո՞չ, տարիները սահում են դէպի յաւիտեականութիւն, դառնում պատմութիւն, սիրոյ ու բերկրանքի անուշ յուշեր, յաղթանակների ու տիեզերական իմաստութեան լոյսի կրակով բոցավառուած հանճարների ծնունդի փառատօներ: Նաեւ վշտի ու տառապանքի տարիներ են եղել, որոնք անգոր էին մարելու ապրողաց կեանքի յուշերը, անգոր մարելու Արմին-Հայի ողբ բոցերը, անգոր մարելու նրա տաղանդի հրակէզ լոյսի ջահերը, անգոր մարելու արարչական այդ մարդկանց յարատեւելու կամքի հէքիաթը:

Յրտաշունչ Դեկտեմբերի առաջին տասնօրեակից յետոյ, բազմամարդ էին լինում մայր ոստան Երեւանի խանութները: Շուկաներում, կանայք ու տղամարդիկ ծանր պայուսակներով մի տեղամասից միւսն էին շտապում: Շուկաներ, նախկինում «Կոլխոզ Շուկայ» էին ասում: Դրսում ցուրտ ու մռայլ, կարծես արեւը խուլվել էր հայոց աշխարհից, իսկ ներսում արեւի լոյսով արբեցած, նրա հրաշք կրակի բոցերով վառուած, ռանչաբարի արդար քրտինքով ցողուած, Գեղամայ ծովակի լոյստու ջրերը ըմպած հայոց հողի բարիքներն էին: Հայ շինականները, իրենց ողու կորովի, հայրենի հողի շունչով, Մայր Անահիտի արարելու բերկրանքով մայրացած ծառերի ու հողի բարիքն էին բրգացրել վաճառատեղաններին: Նրանց կողքի լեռնակներին չորացրած մրգերի շարաններ, ընկոյզի կոյտեր, գնորդներին առինքնող կախաններին՝ սաթեայ, արեւի կրակի կարմիրով ժպտացող, Աստղիկի լոյսափայլ ոտքերից հոսած արեան կարմիրով վարդացած արեւահամ խաղողի ողկոյզներ: Ամպերի արցունքներով վարարած Ակնայ լճի լոյստու ջրերի նման վճիտ հողիներով հայոց շէնքերի մարդիկ նոր տարուայ բարի մաղթանքներ էին յղում գնորդներին: Ի՞նչու էին այդքան շտապում, Հայ շինականի արարած բարիքը Մոսկովին էլ կը հերիքէր: Հայոց հին աստուածները բերքի ու բարիքի առատութիւն էին հոսել հայոց աշխարհին, իրենց տիեզերական տաճարներից հազար-հազար բոյսեր բերել արարչական Արմին-Հայաստան լեռ-

նաշխարհ, արեւորդիներին երկրագործութեան իմաստութիւն բաշխել: Մայր ոստանի փողոցները, մայթերը թող սառուցցով պատած լինէին, թող ձիւն տեղար, թող բուք ոռնար, հոգ չէր, իրենց հոգիներն էին տաք շունչով լեցուն: Տարբեր խանութներ էին այցելում, իրենց սիրատուն մանչերին, ազգականներին ու բարեկամներին նուէրներ, խաղալիքներ, դպրոցական մանչերին գրքեր պիտի գնէին, այո գրքեր: Գիրք ընթերցելը աղօթքի խորհուրդի նման էր, իրենց նախնիները գրքեր էին պաշտել: Թուղթ չունէին, մագաղաթների վրայ գրեցին, վանքերի խուցերում սիրոյ ու ողբերգութեան մատաններ, Գողթան աշխարհի հոգեգմայլ երգեր, Վարդանների հերոսապատմամբներ, Հայկագունց ցեղի պատմութիւն, Մաշտոցի «Վարք» գրեցին, Յելլէն իմաստունների մտքի լոյսը բերին Արմին-Հայաստան: Այդ գարմանալու է, ո՞չ, իրենց հայկեան գարմի արարչական ցեղի ողու վսեմութեան, նախնիների Տիր աստուծոյ տիեզերական իմաստութեան ջահի հրաբորբ լոյսի առկայծումն էր:

Ոստանի բացատներում Դիլիջանի կուսական անտառների եղեւնիների կոյտերի շուրջն էին խմբուել: Մշտադալար եղեւնիները իրենց տները կանաչ լոյսով պիտի լցնէին, նրանց պիտի պնէին նորահարսի պէս, իրենց նախնիներին հոգիների լոյսը այնտեղ պիտի վառուէր: Իրենցից շատ հեռու գերմանների աւանդութիւնն էր հասել երկիր, հոգ չէ, ամբողջ աշխարհն էր այն որդեգրել:

Ինչու էին այդքան շտապում, իւրաքանչիւրի համար ինքնասիրութեան հարց էր, ետ չմնալ դրացիից, բարեկամից, ազգականից, անհրաժեշտ էր ժամանակից շուտ լցնել տունը: Մրցակցութիւն չէր, ընտանիքի պարծանքի ու հպարտ հայու ողու թեւածումն էր: Պարենային խանութները բազմամարդ էին, արկղներով ու կիրոգրամներով գնում էին՝ հանքային ջրեր, արեւից շիկնած, արեւի լոյսով արբեցած խաղողից քամուած աստուածների խմիչք՝ հայոց գինի, Ջանգեղուրի անտառների կաղնու փայտի տակուներում լեռների բոյրի համբոյրը ըմպած «Մարգար»ի կոնեակ, խմիչքներ պէս-պէս, «Արջուկ», «Սկիւռիկ» կոնֆէտներ:

Առաւօտեան սառնամանիքին, խանութների առաջ կրակ էին վառում, ինչու, իրենց նախնիների աստուածների մեհեանների առաջ Նաւասարդեան խրախճանքի հրավառութեան յուշերի կրակն էր իրենց խինդը ջերմացնելու, թէ՞, կանուխ հերթերի շարան կազմելու համար խանութներից հաւ, Հնդկաստանի հաւ, մսեղէն գնելու: Ի՞նչ գարմանահրաշ մարդիկ են Արմին-Հայերը, ամէն ինչ շատ-շատ, որ նոր տարին առատ լինէին սեղանները, թէկուզ ծանրութիւնից չոքէին: Այդ բոլորը «ճանօթ»-ով, իսկ երբեմն էլ նոյնիսկ...:

Շտապում էին նաեւ փափկասուն տիկնայք հայոց ոստանի, իրենց այրերի բերած բարիքից համարում ճաշեր, խորտիկներ, խմորից տեսակ-տեսակ ուտեստներ պիտի պատրաստէին: Այդ յոգնատանջ աշխատանքը խինդով ու հրճուանքով էին կատարում, իրենց շնորհքից էր կախուած տօնական սեղանի հմայքը, տեսքը, փայլը: Արմին-Հայերի վանատուր աստուծոյ ջերմ հիւրընկալութեան սիրով այցելուներին պիտի առաջարկէին ճաշակելու խորտիկները, որ նրանց գովքը շոյճը իրենց կանացի ինքնասիրութիւնը, դէմքերը փայլատակէին հպարտութեան լոյսի շողերով:

Վերջապէս, տարուայ աւարտի օրն էր արդէն, արարիչի վառած կանթեղը իր վերջին շողերն էր սփռում: Սակայն, մայր ոստանը վառում էր . . . լոյսի հեղեղով, շէնքերը կրակի շապիկներ հագել, մերկացած ծառերը լոյսի հրդեհով բռնկել, հրապարակներում բազմահարկը լոյսերի կանթեղներ հրավառում, որոնց կրակի բոցերը շատրուանում երկինք, խաւարը պատում, գնում հայոց աստուածների տաճարներ՝ աւետելու Արմին-Հայերի յարատեւման հէքիաթի խրախճանքը: Ոստանի լոյսի հրավառութիւնից հեռու-հեռու աստղերի աչուկներն էին փակուել: Մայր ոստան էին իջել բոցածին «Վահագն Յարթագողի ձանապարհ»-ի աստղերը, որ իրենց աստուածները Նաւասարդեան խառոցները հրավառէին, լոյսի կարմիր բոցերով վառուէր ոստանը... լոյսի տաճար էր մայր ոստանը:

Արմին-Հայերի ոստանի վարդակերտ հրապարակում վեր էր խոյացել նոր տարուայ տօնածառ՝ հսկայ եղեւնին: Տրդատ, Մանուէլ,

Մոմիկ ճարտարապետների արարման ողու լոյսով յորդած նոր դարերի Հայկեան հանճար՝ Թամանեանի մտքի թռիչքով էին բարձրացել հրապարակը- գրկած սիւնագարդ-կամարակապ շէնքերը: Հայոց Հայկ-Նալդի աստուծոյ Մուսասիրի մեհեանն է այն: Բաբելոնեան աշտարակից աւելի բարձր էր, վառում լոյսի հազար գոյներով, ծիածան գօտի կապել մէջքին, հէքիաթների պատմամբների դրուագներով նախազարդ բազում կրպակներ կանգնել նրա շուրջ բոլորը: Տասներեք օրեր գիշեր-ցերեկ պիտի վառուէր, փոքրերը նրա շուրջը իրենց մանկական հրճուանքի պարեր պիտի բռնէին, Ձմեռ Պապին գրկած պիտի լուսանկարուէին:

Հիւրասենեակների սեղաններն էին առատ, ինպէ՞ս չէին ընկողմանում այդ ծանր բեռի տակ: Ոստանի ամէն բնակարանի դիմաց Արարատն է՝ մարդկութեան վերածնունդի խորհրդանշը, Արմին-Հայերի բարէ սիրտը, ցեղի ողու պաշտամունքը, իրենց լեռների ու աշխարհի սրբազան գմբէթը: Արմին-Հայերի հոգիներից պոկուած «Լեռան Արեգածնէմ», սպիտակ լոյսով է ժպտում Արմին-Հայաստան աշխարհին, գիշերները անուշ լուսնեակն է այցի գալիս նրան, արեւն է ծագում նրա գագաթից: Սպիտակ պատմուճան է հագել, Արմին-Հայերի հետ Նոր Տարի-Նաւասարդ տօնախմբելու: Վաչկատուն մի ցեղ տիրել է նրան, երկրի նոր տէրերը այն պատնէշել են երկաթ փշերով: Իրենց նախնիների Արգիշտի-Արամայիս արքայի Արաստ որդու անունով Մայր Արաքան է վշտի խուլվից այլեկոծուած, անցնում քայլա-մոլոր: Միհր արեւ աստուծոյ մի լուսաբացին, Արագը կը գայ Արմինա աշխարհը գրկած, Արարատի լանջերին ժայթքած ձնծաղիկների բոցերով կը հրավառի հայոց անկախացած երկիրը, իրենց հին աստուածները կ'իջնեն նրա գագաթից հայոց ոստանում Նոր Տարի-Նաւասարդ տօնախմբելու: Երանի նրանց ովքեր մասնակիցը կը լինէին աստուածների այդ խնճոյքին:

Սեղանի կեղրոնում, խոշոր սկուտեղի վրայ բազմել էր խոզուկը, ականջներին ուլունքներ, բերանին կանաչ շիւղ, ակներին արեւի հուրով բոսորած խաղողի հատիկներ: Փռերում եփած համով-

Շաք.ը էջ 27



**Ս.Գ.Հ.Կ. ՄԱՊԱՀ ԳԻՒԼ
ՄԱՍՆԱԾԻՒԸ
ԿԸ ՇՆՈՐՀԱԴՈՐԷ ԲՈԼՈՐ
ԸՆԿԵՐ-ԸՆԿԵՐՈՒՅԻՆԵՐՈՒ ԵՒ
ՀԱՄԱՅՆ ՀԱՅ ԺՈՂՈՎՈՒՐԴԻ
ՆՈՐ ՏԱՐԻՆ ԵՒ Ս. ԾՆՈՒՆԳԸ
ՄԱՂԹԵԼՈՎ ԽԱՂԱՂՈՒԹԻՒՆ
ԵՒ ՆՈՐԱՆՈՐ
ՅԱԶՈՂՈՒԹԻՒՆՆԵՐ**

ՄԱՍԻՍ - 2015

ՆՈՐ ՏԱՐԻՒԱՅ ԲԱՐԻ ԵՐԹԻ ԽՐԱՆՃԱՆՔ

Մարումակուած էջ 26-էն

հոտով հաւեր ու Հնդուստանի հաւ էին խոզուկի կողքին: Աղանդերներ նրբահամ, խմորից պատրաստած անուշահամ ուտեստներ շարուած էին սեղանին: Տանտիկնոջ շնորհքն էր շողում աչնտեղ: Նրա վերջնամասում դրուած անօթներն էին տրաքում ծիածանափայլ պտուղներով, որոնց վրայից կախուել էին նախնիների պաշտած արեւի ու լոյսի համով ու ծիծաղով խաղողի ողիւզներ: Նրանց կողքին շարանշարան կոնեակի, օղու, գովացուցիչ ջրերի, կարմիր գինիի շէր: Այդ գիշեր խրախճանքի, բերկրանքի յոյգեր պիտի պայթէին իրենց հոգիներում:

Նոր տարին դիմաւորելու պատրաստ էին արդէն, բոլորը-բոլորը գուգուել գարդարուել էին սոնական հանդերձներով: Հեռուստատեսիլի դիմացի բազմոցներին էին, ոստանի բարձրադիր աշտարակը ալէասիւնում էր սոնական հանդէսի հաղորդումներ՝ գուարճալի բեմադրութիւններ, քաղցրահունչ երգեր, որոնք հրճուանքի բամբեր էին որոտում իրենց հոգիներում, ծիծաղ պայթում նայուած քներից: Մանրապատումների դերասաններ՝ Քոթանճեան Ռաֆայել, Երիցեան Կիմ, Մէլինէ Մոմճեան, Կարազօզեան Արամայիս, Աշոտ Ղազարեան, Խոստիկեան Արմէն, օ՛հ այդ դերասանը, նոյնիսկ առանց խօսքի, միայն դէմքի արտայայտութեան թուիչքը դիտողի հոգին գեղում էր գուարթութեամբ: Ոստանի երգիչները, երգի ու պարի համոյթները, բոլորը-բոլորը պիտի երգէին, պարէին, նուագէին իրենց նախնիների հորովելները, իրենց երգահանների մեղեդիները եւ ինչպէս թուեղ չէլնէին իրենց սրտերը, թօթափում էին հին տարուայ օրերի խոնջանքը, նոր աւիւն հաղողում մանուկ նոր տարուայ երանելի սպասումներին:

Մանչերը աւելի էին շտապում, նրանք հաւատում էին, որ Ձմեռ Պապը նուէրներով ու խաղալիքներով լիքը տոպրակը շալակին, հեռու ցուրտ երկիրներից կը ժամանէր իրենց ոստան եւ անպայման նաեւ իրենց տներ: Դուան գանգն էր հնչում, ուրախ աղաղակներով բոլորը վեր էին ցատկում, փոքրերը ուրախութիւնից թէ վախից մայրերի փէշերից էին կախուած, ծանր պարկը շալակին Ձմեռ Պապն էր

ներս գալիս: Հերթով հարցնում էր մանչերի անունները, հարցնում արդեօք հնազա՞նդ էին եղել հայրիկին ու մայրիկին: Պահանջում էր երգէին կամ մի ոտանաւոր արտասանէին, որպէսզի նուէրներ ստանային: Տան լոյսերը մարած էին լինում, որ յանկարծ չճանաչէին ծպտուած Ձմեռ Պապին: Տօնածառն էր վառուած հազար ու մի լապտերիկներով, շողում գոյնգոյն նախշերի խաղալիքներով, արդեօք այդտեղ չէի՞ն իջել նաեւ իրենց նախնիների ստուերները, եւ այդ լոյսերի մէջ չէին ժպտում աստղերի լոյսերով վառուած նրանց ա կները: Մանչերը արդէն սրտապնդուած, Ձմեռ Պապի հետ պար էին բռնում սոնածառի շուրջ բոլորը, միաբերան երգում սոնածառի գովքը.

Տօնածառ ջան, սոնածառ,
Այդ ինչքան լաւն ես ու պայծառ.

Կարծես հիմա նորից իմ մանչերի հետ, իմ հայրենի սրտակէզ օճախի սոնածառի լոյսերի մէջ պար եմ բռնում, արի ու մի արբենայ, թէ՛ իննթանայ . . . ինչո՞ւ այսպէս եղեւ:

Հեռուստատեսիլի պատառի վրայ ժամացույցի սլաքների վերջին պտոյտներն էին, կարմիրով լեցուն բաժակները որպէս ջահեր վեր պահած, ոտքի էին բոլորը: Հեռուստատեսիլի պատառը պայթում էր երգով՝

Սեղանն է առատ,
Դիմացն Արարատ,
Լցնենք ընկերներ,
Բաժակները լիքը,
Թող հայոց գինին,
Մեզ անուշ լինի:

Ջանգեր տասնըերկու անգամ՝ դամբ, դամբ... ալէհեր անցնող տարին սահակով սուրում էր պատմութեան բաւիղներ, մանուկ Նոր Տարին գուարթ ճախրանքով գալիս երկիր, իր հետ բերելով խինդ ու խաղաղութիւն: Օճախն էր յորդում տիեզերական սիրոյ ու խաղաղութեան համբոյրների շշնջիւնով, բաժակների զրնգուն ձայներով, նոր տարուայ բարի մաղթանքների կանչերով: Տան տիկնոջ բացուած սրտի նման առատ սեղանին էին, ճաշակում համեղ կերակուրները, համադամ խորտիկները, խմում ով ինչ ցանկար, հոգ չէ, նորի գալստեան արթնած երջանկութիւնից թէկուզ գինովնային... անշուշտ պիտի գինովնային նաեւ:

Մի ժամ յետոյ, բռնի խորհրդացնացած երկրներու մայրաքաղաք Մոսկովի նոր տարուայ գալուստն էլ պիտի դիմաւորէին: Հեռուստատեսիլի պատառի վրայ Աստանկինոյի աշտարակի համերգային սրահի Նոր Տարուայ խրախճանքի հէքիաթային «Օգանյոկ»-ի հանդէսն էին դիտելու: Աչնտեղ էին լինում երկրի բոլոր ստրկացուած ժողովուրդների արուեստների լաւագոյն դերակատարները: Արամի «Դիմակահանդէս»-ի «ՎԱԼՍ»-ը, սպիտակ կարապնների ճախրանքով էր փոթորկում սրահը, Հայուհի Գայանէի «ՍՈՒՍԷՐՆԵՐԻ ՊԱՐ»-ի արծաթափայլ հրավառութիւն էր, ամէն ինչ հրաշալի, դրսում բուք ու սառնամանիք, ներսում լոյսի ու արեւի խրախճանք: Մօտենում էր նրանց տասնըերկուսը, վերեւ պահած բիւրեղեայ բաժակները փրփրում էին Շամպայն գինու խոովքից, լուստտ փրփուրները մպելով նոր տարուայ գալուստն էին աւետում: Հրավառ լոյսերի հեղեղ էր հոսել Աստանկինոյի աշտարակին: Այդ գիշեր, ամէն դժսին մոռացած, նորի գալուստի հրճուանքի հէքիաթով պիտի արբենային, հոգին թուեղ անող խմիչքներով պիտի գինովնային, սոնահանդէսը շարունակուելու էր մինչեւ արեւազայ:

Արմէն-հայերը նոր տարուայ շնորհաւորանքները, բարի մաղթանքները պիտի յղէին նաեւ դրացիներին, բարեկամներին, ազգականներին: Տան բոլոր-բոլոր լոյսերը վառ պիտի պահէին, նոյնիսկ տան դռները առանց կողպելու: Այդ գիշեր, նորի լոյսը, գող մարդկանց հոգիներին խաղաղութիւն էր ցողում: Դռների գանգերն էին հնչում, դրացիներն էին գալիս, անպայման որեւէ խմիչքի նուէրով: Սեղան էին նստում, նոր տարուայ բարի մաղթանքների բաժակաճառեր ասում, հայր աշխարհում նրա ամենավարպետն ու ամենաճարտարն է: Իրենք էլ փոխադարձում էին նման նուէրներով ու գալիք տարուայ սրտայոյզ մաղթանքներով: Այդպէս էր ընդունուած, նոր տարուայ սեմին անպայման այցելել դրացիին, տուն մտնել լիքը ձեռքով, որ գալիք տարում աչնտեղ առատութիւն հոսէր: Իրենց նախնիների Միհր աստուծոյ լոյսով էին բոցավառուել բոլորի տները, այն պոռթկում էր պատուհաններից, շքամուտքերից, իրենց սրտերից:

Այդ գիշեր, ուշ, շատ ուշ պիտի քնանային, լոյսի ու նոր գալիքի արթնած հրճուանքից իրենց հոգիները գեղում էին խինդով, ջահել ու ահել ամուսինները այդ գիշեր իրար փարած պիտի քնէին, ամբողջ նոր տարին սիրոյ ջերմութեամբ իրար վայելելու համար:

Մակայն նոր տարուայ սոնախմբութիւնը միայն այդ գիշերուայ սոնակատարութեամբ չէր աւարտուելու: Լաւ էր, որ իշխանութիւնները աշխատանքային օրերը փոխանակում էին ոչ աշխատանքային օրերի հետ, երկարացնելով սոնախմբութիւնների ժամանակահատուածը: Նորէն ծիծաղով, տաք շնչով, իրենց նայուածքներից շողած արեւալոյս ժպիտներով էր յորդում ոստանը: Գնում էին ծնողներին, ազգականներին, բարեկամներին նոր տարուայ մաղթանքներ յղելու: Նորէն շտապում էին, չէ որ իրենց տներում էլ փոխադարձ շնորհաւորանքների էին սպասում, էլ ինչո՞ւ համար հայոց աշխարհի բարիքները լցրել էին իրենց սոնական սեղաններին:

Կարծում էիք վերջացա՞ւ նոր տարուայ սոնակատարութիւնը, ոչ, այն դեռ պիտի շարունակուէր աշխատավայրերում: Տարուայ առաջին օրը կորչէր աշխատանքը, տներից բերած խորտիկներով, խմիչքներով գրասեղանների վրայ «սեղան» էին բացում, խմում գալիք նոր տարուան իրենց արեւավառ առողջութեան կենացը, խմում իրենց ձեռնարկութիւնների բարգաւաճման կենացը, խմում «շառից ու փորձանքից» հեռու լինելու: Այդ մաղթանքը «միլիցիայից ու օրգաններից» հեռու լինելն էր . . . Աստուած հեռու պահէր: Վարդալոյս շնչերի հրապարակներում, դեռ տասնըերեք օրեր պիտի շարունակէր վառուել գերմանների երկրի սովորութեան սոնածառը:

Խորտակուած գաղափարախօսութեան ու փլած կայսրութեան տիրակալութեան ժամանակների գովքը չէր որ արեցի, սակայն, արդար կը լինէր նաեւ չմեղանչել պատմութեանը: Խաղաղութիւն եղաւ մի փշուր մնացած Արմինա-Հայաստան աշխարհում, շատ-շատ պանդուխտ հայեր երկիր վերադարձան, գիտութիւնների ու արուեստների, արարում եղեւ, աշխարհաճանաչ հանձարների ծնունդ

Մար. էջ 35



ՄԱՍԻՍ - 2015

ԵԳԻՊՏԱՑԻ ՅԱՅՏՆԻ ՀԱՂՈՐԴԱՎԱՐԸ ԿԸ ՊԱՏԳՍԷ ՀԱՅԱՍՏԱՆ ԱՅՑԻ ԻՐ ՏՊԱԻՈՐՈՒԹԻՒՆՆԵՐՈՒՆ ՄԱՍԻՆ (Արաբերէն Տեսանիւթ)

Օրեր առաջ, յատուկ առաքելութեամբ մը Հայաստան այցելեց արաբական "Ալ Եաուա" հեռուստաընկերութեան, " Ալա Ալ Հաուա" հաղորդման յայտնի հաղորդավար՝ Մարիամ Չաքի. մէկ շաբաթ տեւող աշխատանքային այցէն ետք, Մարիամ Եգիպտոս վերադարձին իր հաղորդումը նուիրած է Հայաստանին ու պատմած իր իրականացուցած աշխատանքներու եւ տպաւորութիւններու մասին:

"Մեր հաղորդումը արաբական աշխարհի մէջ առաջինն է, որ հրաւէր ստացաւ Հայաստան այցելելու, Հայաստան, որուն մասին հաւանաբար շատ քիչերը գիտեն, մենք գացինք ձեզի բերելու Հայաստանի պատմութիւններն ու հանդիպումները"- իր բանաւոր խօսքին մէջ հեռուստատեսութեամբ յայտնած է հաղորդավարը:

"Այստեղէն ձեզի պիտի ներկայացնենք երկրի հողին, պատմութիւնը եւ հանդիպումներ երկրի բարձրաստիճան պաշտօնեաներու հետ... միասնաբար պիտի երթաք Հայաստանի ձեր երեւակայած եւ չերեւակայած վայրերը, պիտի երթաք նախագահական պալատ եւ հանդիպինք նախագահի աշխատակազմի ղեկավար Վիգէն Սարգիսեանի հետ, Ամենայն Հայոց Կաթողիկոս Գարեգին Բ.-ի, Հայաստանի Արտաքին գործերու փոխնախարար Սերգէյ Մանասարեանի, Տնտեսութեան նախարար Կարէն Ճշմարիտեանի եւ ՀՀ սփիւռքի նախարար Հրանտշ Յակոբեանի հետ (հայերը սփիւռքի մէջ մեծ թիւ ունենալու պատճառով անոնց համար յատուկ նախարարութիւն ստեղծած են), որ ճանչցուած է իբրեւ երկաթեայ Տիկին, եւ երբ լսէք անոր հարցազրոյցը պիտի համոզուիք, որ ան իսկապէս երկաթեայ է"- ըսաւ Մարիամ Չաքի:

"Հանդիպեցանք նաեւ մարդոց հետ, որոնց հայրերն ու մեծ հայրերը ականատես եղած են Օսմանեան իշխանութեան կազմակերպած հայոց հաւաքական ցեղասպանութեան, ցեղասպանութիւն, որ 1,5 միլիոն հայ բռնագաղթի ենթարկեց, վտարեց իր հողերէն՝ Անատոլիայի շրջանէն, արեւելեան վեց նահանգներէն, 1,5 միլիոն բռնագաղթի ենթարկուեցաւ սուրիական սահմանի վրայ, 1,5 միլիոն առանց ուտելիքի, ջուրի, 1,5 միլիոն հայ գոհուեցաւ բռնագաղթի ճանապարհին, այն աստիճանին, որ երբ Սուրիոյ անապատի մէջ բլուրները կը փորեն, կը տեսնեն այս ժողովուրդի նահատակներու մնացորդները, որոնք կը վկայեն այդ ոճիրի մասին, ոճիր որ բոլոր սահմանները անցած է, ան նոյնիսկ Աստուծոյ դէմ է... այդ բոլոր պատմութիւնները հաւաքած ենք եւ մէկ շաբաթուան ընթացքին պիտի ներկայացնենք ձեզի "Ալա ալ Հաուա" հաղորդման ծիրէն ներս":

Մարիամ Չաքի իր խօսքին մէջ անդրադարձած է նաեւ Հայաստանի մասին իր տպաւորութիւններուն, առաւելաբար տպաւորութեամբ լաւ ընդունելութեամբ, " փառաւոր էր ընդունելութիւնը ժողովուրդի, որ շատ հիւրասէր է եւ առատաձեռն, Հայաստան հասնելէն անմիջապէս ետք այն տպաւորութիւնն է, որ արաբական երկրի մը մէջ ես կամ ուղղակի Եգիպտոսի մէջ, տարբերութիւն չկայ ոչ ար-

տաքինի, ոչ զգացումի, ոչ մարդոց յարաբերութեան մէջ, կը զգաս անոնց անկեղծ գոհունակութիւնը, որ կարտայայտեն տարբեր միջոցներով կամ բառերով, որպէսզի շնորհակալութիւն յայտնեն արաբ ժողովուրդին, ըսելով՝ շնորհակալութիւն, որ դուք ընդունեցիք հայերը եւ ընդգրկեցիք ձեր հասարակութեան մէջ, բոլորը՝ բարձրաստիճան պաշտօնեայ կամ սովորական քաղաքացիներ, որուն որ հանդիպեցանք ամենայն անկեղծութեամբ իրենց երախտագիտութիւնը յայտնեցին արաբ ժողովուրդին՝ հաւանաբար գլխաւորաբար Եգիպտոսին եւ Սուրիոյ: Պէտք է ըսել, որ մենք մեր կեանքի ընթացքին բնաւ հայերը օտար չենք զգացած, անոնք կարծես մեր հասարակութեան մէկ մասնիկն են, եւ անոնց կը նայէի զարմացած, յետոյ զգացի, որ ես իրենց անկեղծօրէն կ'ըսեմ պարտականութեան համար շնորհակալութիւն չեն յայտնել, մենք ինչ որ ըրինք շատ բնական էր, որովհետեւ մենք ժողովուրդ ենք, որ միշտ արիւնահեղութեան եւ անարդարութեան դէմ եղած ենք, եւ այն ինչ եղաւ հայերու հանդէպ՝ 1915-ին անարդարութիւն էր... Այսօր հարիւր տարի ետք կը յայտնենք, որ եղածը ոճրագործութիւն էր մարդկութեան դէմ եւ պատմութեան յիշողութիւնը չի ջնջուիր, որպէսզի ներման կամ հաշտութեան մասին խօսուի: Առայսօր մարդկութեան դէմ գործուած այս ոճիրը, որ իրագործուած է հայ ժողովուրդի հանդէպ, չէ ճանչցուած ոճրագործի՝ Թուրքիոյ կողմէն, եւ առայսօր բանթուրքի մը կամ օսմանական ծաւալումը իրականութիւն է այսօրուան հողի



վրայ՝ զայն մարմնաւորուած կը տեսնենք էրտողանով եւ իշխող կուսակցութեամբ, այն աստիճանին, որ էրտողանը 2009 թուականին բաւարարուեցաւ միայն ցաւակցութիւն յայտնելով՝ թողնիկներուն այն մարդոց, որոնք այդ ժամանակ դժուարութիւններու հանդիպեցան՝ երկրի մէջ տիրող պայմաններուն պատճառով, բաւարարուեցաւ միայն ցաւակցութիւն յայտնել՝ բռնագաղթի, մահուան դատապարտուող 1,5 միլիոն մարդու՝ մանուկներու, կանանց, տարեցիներու:

"Երբ գացինք Ցեղասպանութեան թանգարան, որ կառուցուած է յիշեցնելու համար, որ այս ժողովուրդը չի մոռնար, որ այս ժողովուրդը իր պատմութիւնն ու յիշողութիւնը անմահացուց զանազան ձեւերով՝ երգելով, արուեստով, վկայութիւններ հաւաքելով, փաստաթուղթերով, երբ գացինք եւ իրականութիւնը տեսանք, մեր աչքին առջեւ տեսանք ՏԱԱԵՇ-ը՝ փաստերով, ՏԱԱԵՇ-ը, որ այսօր մեր

աչքին առջեւ կը տեսնենք այստեղ, կար 1915-ին նոյնպէս՝ վիզեր կտրելով, մեր դիմաց տեսանք նկարներով, վաւերագրութիւններով, ֆիլմերով, տեսանք այն ինչ չէինք երեւակայել տեսնել՝ բացի թաթարներու ժամանակաշրջանէն:

"Վերադառնանք մեր այցին եւ պատմեմ հայ ժողովուրդի մասին, որ հակառակ այս բոլոր ողբերգութիւններուն, այսօր՝ 100 տարի ետք՝ կ'ըսէ ես կը հաշտուիմ քեզի հետ՝ պահանջելով ընդունիլ այդ ոճրագործութիւնը զոր իրականացուցիր, պէտք է հաշտուիս իրականութեան հետ, որպէսզի ես քայլ առնեմ, երազանքս իրականացնեմ, երկիրս կառուցեմ եւ բանամ փակ սահմաններս՝ աջ ու ձախ բոլոր երկիրներու հետ, որպէսզի ապագան հանգիստ ըլլայ, խաղաղ, բարեկամական եւ բարգաւաճ: Այս է ազգի մը մտածելակերպը, որ հակացած է իր անցեալը, որպէսզի կարենայ յառաջընթաց ապրիլ"- եզրափակեց Մարիամ Չաքի:



Ամանորի եւ Ս. Ծննդեան տօներուն բարեբաստիկ առիթներով կ'ողջունենք մեր հարազատներն ու բարեկամները, մաղթելով բոլորին յաջողութիւն:
Մեր շնորհակալութիւնները կը յայտնենք բոլոր անոնց, որոնք իրենց ներկայութեամբ մասնակից եղան մեր սու ին, ինչպէս նաեւ ծաղկեպսակներով, փոխան ծաղկեպսակի նուիրատուութիւններով, նամակներով, հեռապատճէններով եւ հեռաձայններով վշտակից եղան մեր սիրելի հօր՝
ԵՐՈՒԱՆԿ ՊԱՊԱՅՅԵԱՆԻՆ
մահուան տխուր առիթով

ՇՆՈՐՀԱԻՈՐ ՆՈՐ ՏԱՐԻ ԵՒ ՍՈՒՐԲ ԾՆՈՒՆԿ

ՏԵՐ ԵՒ ՏԻԿ. ԱՐԱ ԵՒ ՍՈՆԻԱ ՊԱՊԱՅՅԵԱՆՆԵՐ

ՄԱՍԻՍ - 2015

ՀԱՇՈՒԵՅԱՐԴԱՐ ԵՒ ՇՆՈՐՀԱԴՈՐ
ՆՈՐ ՏԱՐԻ ԵՒ Ս. ԾՆՈՒՆԴ
ԹՈՐԳՈՍ ՓՕՍԹԱԾԵԱՆ

Նոր Տարուան նախօրեակը կարեւոր առիթ մըն է հաշուեյարդարի:

Անցնող լման տարուան մը ընթացքին պատահած բոլոր իրադարձութիւններու սահանքն է որ կը կանգնի մեր առջեւ:

Տարուան վերջին երեկոն եւ Նոր Տարուան առաջին առաւօտը՝ այսինքն տարեմուտը, համաշխարհային առումով կարեւորագոյն տօնն է այս աշխարհի բոլոր երկիրներու ժողովուրդներու համար:

Քրիստոնեայ ժողովուրդներու կամ «Քրիստոնեայ Աշխարհի» համար նոյնքան կարեւորագոյն տօն մըն է «Տեւան Մերոյ» Յիսուս Քրիստոսի Ծննդեան Տօնը:

Ո՞րն է Յիսուս Քրիստոսի Ծննդեան Գիշոյ Օրը

Համաձայն Քրիստոնէական Պատմութեան աւանդութեան եւ համաձայն քրիստոնէութեան առաջին պատմագիր Եւսեփոսի, Ս. Մարիամ Աստուածածնի «Աւետումը» տեղի ունեցաւ Ապրիլ 7ին: Ինչ է աւետումը: Աւետումը հետեւեալն է: Աստուծոյ հրեշտակը Ապրիլ ամսու եօթին երեցաւ Մարիամ կոյսին եւ իրեն յայտնեց որ այդ օրն իսկ յղիացած է ինք եւ ուղիղ ինը ամիսներ ետք ծնունդ պիտի տայ Աստուածորդի Յիսուսի Քրիստոսի:

Համաձայն Եւսեփոս պատմագրի վկայութեան իրականօրէն ալ ուղիղ ինը ամիսներ ետք, Յունուար 6ին Յիսուս ծնաւ Բեթղեհէմի մասուրին մէջ:

Չենք ուզեր մանրամասնել Յիսուսի Ծննդեան հետ կապուած հրաշապատում դրուագները, ըստ որում երեք մոգեր Արեւելքէն եկան Բեթղեհէմ եւ ընծաներ մատուցին նորածին Յիսուս Մանուկին եւ թէ ինչպէս հրեշտակներ կ'երգէին «Փառք ի Բարձունս Աստուծոյ եւ յերկիր խաղաղութիւն» եւ աւետիս կու տային մարդոց որ «Յիսուս Ծնաւ Աշխարհի համար»:

Մտերը ուր ծնաւ Յիսուս «Անբան անասուններու ախոռ» մը չէր ինչպիսին են կովերու, ձիերու եւ հչերու ախոռները: Ընդհակառակը մասուրին մէջ որ

Յիսուս ծնաւ Բեթղեհէմի մասուրին մէջ որ մատաղատի գառնուկներուն ծննդատեղին էր՝ գոմ որ չետագային դարձաւ «սրբատեղի»: Հոն է որ կառուցուած է Յիսուս Քրիստոսի ծննդեան Ս. Տաճարը որ մինչեւ այսօր կանգուն կը մնայ եւ կը պատկանի Հայաստանեայց Առաքելական Ս. Եկեղեցոյ եւ Յոյն օրթոտոքս եկեղեցոյ:

Հոն այս Ս. Տաճարին մէջ մինչեւ այսօր ամէն առաւօտ պատարագ կը մատուցուի նախ հայ եւ յետոյ յոյն եկեղեցիներու հոգեւորականներու կողմէ: Հայաստանեայց եկեղեցոյ շարականագրքին մէջ կան շարք մը հոգեգրաւ շարականներ նուիրուած Յիսուսի ծննդեան: Յիշենք միայն կարեւորագոյնն ու առաջինը՝ «Խորհուրդ Մեծ»:

Խորհուրդ մեծ եւ սքանչելի Որ յայսմ աւուր յայտնեցաւ Հովիւմն Երգեմ ընդ հրեշտակս՝ Տան աւետիս աշխարհի...

Ծնաւ նոր արբան Ի Բեթղեհէմ քաղաքի, Որդիք մարդկան օրհնեցէք Զի վասն մեր մարմնացաւ Յաւաջիկայ 2015 տարուան համար մեր բարեմաղթանքներն են հետեւեալները:

1. Խաղաղութիւն լինի աշխարհի բոլոր երկիրներու մէջ:
 2. Հայաստանի ներկայ Քոչարեան-Սարգսեան իշխանութիւնները ընդմիշտ դադրին իրենց պաշտօնավարութենէն եւ կատարած կեղեքումներէն եւ հեռանան իրենց նստավայրէն:
 3. Հայ ժողովուրդի իղձն է որ Հայաստանի մէջ տեղի ունենայ արդար եւ ժողովրդավարական ընտրութիւն եւ կառավարութիւն:
 4. Արցախը իր ազատագրուած տարածքներով միանայ ներկայ Հայաստանին:
 5. Հայաստանէն դուրս մեկնող արտագաղթը ընդմիշտ դադրի եւ բոլոր արտագաղթող հայեր վերադառնան Հայրենիք:
- Փառք եւ բարօրութիւն Հայաստանին մեր հայրենիքը պահպանող հայրենաբնակ հայ ժողովուրդին:

ԱՄԱՆՈՐԵԱՆ ԽՈՅԵՐ
ՓԱՆՈՍ ՎԱՐԴԱՆԵԱՆ

Արի, քեզ հետ բեր սեր ու հաշտութիւն,
Ու հանգիստ քայլի խաղաղ աշխարհում,
Տոպրակներով բեր խաղալիք ու սէր
Ու ջերմ համբոյրներ որբերի համար...

Արի, միշտ արի, դու անգորի հայր՝
Եւ անգին մայրը ամբողջ աշխարհի,
Եւ նրանց սիրով խնդրի Աստծուն
Գուժ դնի, սրտին կրակ վառողի...

Արի, քեզ հետ բեր խրատներ բարի,
Լցրու նենգ ոգում չարագործների,
Կրակը չվառն չորս կողմն աշխարհի,
Արի, այս դաժան կրակը մարի...

Արի, դու արի, խաղաղ Նոր Տարի...
Յէգ բանաստեղծիս իղծը կատարի,
Կրկին քեզ հետ բեր խաղալիք ու սէր,
Ամբողջ աշխարհի սրտերը վառիր...

ԱՄԱՆՈՐԵԱՆ ԽՈՅ
Ռ. ԿՈՐԻԻՆ

Ահա ամանորն է գալիս,
Հնի հետ հրաժեշտ տանք,
Նորի հետ նորանանք,
Ժամանակի հետ առաջ գընանք:

Ահա ամանորն է գալիս,
Հայրենիքի հետ հայրանանք,
Ազգի հետ մէկ սիրտ դառնանք,
Պետութեան հետ հզօրանանք:

Ահա ամանորն է գալիս,
Իշխանութեան հետ ժողովրդանանք,
Մեծ պետութեանց հետ սերտանանք,
Մեր շահերի հետ ամրանանք:

Ահա ամանորն է գալիս,
Գեղեցկի հետ գեղեցկանանք,
Արուեստի հետ արուեստանանք,
Մեր մշակոյթի հետ հպարտանանք:

ՆՈՐ ՏԱՐԻ
ԱՒԵՏԻՍ ՆԱԶԱՐԵԱՆ

Նոր օր է գալիս,
Նոր կեանք մեզ տալիս,
Բերք, բարիք բերում,
Առողջ կեանք բաշխում...

Անուշ մանուկներ,
Նա ձեզ է փնտռում,
Սիրում է սրտանց
Յոյսեր ներշնչում...

Չիւն, անձրեւ բերում,
Կեանք տալիս հողին,

Ու պարարտ հողը
Մեզ բերք նուիրում...

Ողջոյն, Նոր Տարի,
Բեր մեր աշխարհին
Ծով խաղաղութիւն,
Մէր, եղբայրութիւն:

Մայր Հայաստանին
Միշտ ամուր պահիր,
Որ եռագոյնը
Յաւերժ ծածանի:

ԱՄԱՆՈՐ ՈՂՋՈՅՆ...
ՆԵՐՍԵՍ Տ. ՄԵՍՐՈՊԵԱՆ

Ողջոյն Ամանոր,
Որ տալիս ես մեզ
Յոյսեր նորանոր
Եւ աւետում ես,
Թէ մեր կեանքի մէջ
Սկսեց բացուել
Յուսատու մի էջ:
Նոր օր է այսօր,

Նոր կեանքի սկիզբ:
Նորոգուենք նորով,
Հաւատանք սրտով
Այն մեծ պատգամին
Որ մենք կանք, մենք կանք
Ու պիտի մնանք,
Թէ բազմապատկուենք,
Աճենք, շատանանք...



ՄԱՍԻՍ - 2015

ԲԱՐԻ ԵՐԹ ՇՈՒՇՈՒՄ ԿԱԶՄԱԿԵՐՈՒՄ ԱՍՍՈՒՆՔԻ ՀԱՄԱՐԱՅԿԱԿԱՆ ՓԱՌԱՏՕՆԻՆ ԹԱԳՈՒՅԻ ԱՐՁՈՒՄԱՆԵԱՆ

Մայիսի 10ին, 2014 լուս Անճե- լուսում կաշաքաւ համահայկական ասմունքի մրցոյթ-փառատօնը, նա- խաձեռնութեամբ եւ հովանաւո- րութեամբ Հիւսիսային Ամերիկա- յի Արեւմտեան Թեմի Ազգային Առաջնորդարանի, համագործակ- ցութեամբ Հ.Հ. Լուս Անճելոսի գլխա- ւոր հիւպատոսութեան եւ կազմա- կերպութեամբ «Աւան Շուշի Փլա- գա» հիւրանոցի տնօրէնութեան, Ազգային վարժարանների խնամա- կալ Մարմնի, «Ասպարէզ» օրա- թերթի եւ «Հորիզոն» պատկերաս- փիւռի ընկերութեան: Փառատօնին մասնակցում էին ոչ միայն ազգա- յին վարժարաններ, այլ նաեւ Հա- րաւային Գալիֆորնիայի բոլոր հայկական վարժարանները:

Լուս Անճելոսում եւ ապա պատ- մական Շուշիում կազմակերպուած ասմունքի համահայկական մրցոյթ փառատօնի որպէս գլխաւոր կազ- մակերպիչ ու հովանաւոր կ'ուզէի նշել մասնաւորապէս համեստ ու առաքինի մի անձնաւորութեան, հայրենիքի, լեզուի եւ մշակութի հանդէպ մեծ սիրով սոցորուած բարերար՝ մեծարգոյ Ալեք Բաղ- դասարեանի անունը: Յիրաւի միայն մեծագոյն սիրով գորութեամբ եւ գիտակից գոհաբերութեամբ կարե- լի է իրագործել այնպիսի լայնա- հուն ծրագիր, ինչպիսին ասմունքի համահայկական փառատօնն էր: Պրն. Ալեք Բաղդասարեանի երակներում անվերջ մոնէզացող արեան կանչի, ազգի, նորահաս սերնդի հանդէպ ունեցած անսահման նուիրուածու- թեան շնորհիւ համահայկական փա- ռատօնը իրականութիւն դարձաւ ըստ պատշաճի:

Լուս Անճելոսում այս փառա- տօնը կազմակերպելու պատասխա- նատուութիւնը ազգային վարչու- թեան կողմից ստանձնել էր ներկա- յիս ազգային վարչութեան փոխ ատենապետ Տօքթ. Տիգրան Բա- բիկեանը: Նա իր հերթին ստեղծեց յանձնախումբ որի կազմում ընդգրկուած էին «Ասպարէզ» թեր- թի թղթակցուհի, լրագրութեան ասպարէզի հմտութիւններին տի- րապետող հանրածանօթ լրագրու- հի, նաեւ գիտակ հեռուստահաղոր- դավարուհի Նանէ Աւագեանը եւ ազգային մշակոյթի ջատագով, հա- մայնքում իր նախաձեռնութիւն- ներով յայտնի անձնաւորութիւն Միհրան Թումաշեանը եւ Նանէ Աւագեանը եւ Միհրան Թումաշեա-

նը շօշափելի ներդրում ունեցան ասմունքի համահայկական փառա- տօնի կազմակերպման գործում:

Ես սիրով ընդունեցի հրաւերը իմ մասնակցութիւնը բերելու այս մրցոյթ-փառատօնին որպէս դա- տական կազմի (Ժիւրիի) անդամ: Ժիւրիի կազմում ինձ հետ միասին ընդգրկուած էին նաեւ ճանաչուած արուեստագետներ Գրիգոր Սաթամ- եանը, Շաքէ Թուխմանեանը եւ Գրիգոր Օգարեանը:

Մրցոյթի յաղթողները հնա- րաւորութիւն ունեցան մասնակցե- լու 2014 թ. Օգոստոսի 4-8 ԼՂՀ պատմական Շուշի քաղաքում կազ- մակերպուած ասմունքի համահայ- կական Յրդ փառատօնին, որին մասնակցում էին 7 երկրներ ԱՄՆ, Լիբանան, Սիրիա, Հայաստան, Վրաստան (Ջաւախք), Պարսկաս- տան եւ Արցախ:

Մրցոյթի խորագիրն էր «Իմ Հայաստան» որն անցկացուեց եր- կու փուլով՝ երկու տարիքային խմբերի համար:

Այսպիսով «Շուշի Աւան Փլա- գա» հիւրանոցի տնօրէնութեան ճի- ղերով եւ հովանաւորութեամբ զօ- րակցութեամբ Արցախի հանրապե- տութեան կրթութեան եւ գիտու- թեան նախարարութեան, Արցախի մշակոյթի եւ երիտասարդութեան հարցերի նախարարութեան եւ Հ.Հ. սփիւռքի նախարարութեան Շու- շիում իրականութիւն դարձաւ աս- մունքի համահայկական Յրդ փա- ռատօնը, որի գլխաւոր հովանա- ւորն էր «Ղարաբաղ Թելեքոմ»ը յանձնիս նրա գլխաւոր տնօրէն Ռալֆ Երիքեանը:

Այս շատ կարեւոր միջոցա- ռումբ առիթ ստեղծեց հայ երեխա- յին մէկ անգամ եւս ճանաչել իր ինքնութիւնը, գիտակից լինել պատ- կանելութեան եւ տէր ինքնութեան: Այս առիթով օտար արեւելքում ապ- րող հայ երեխան մեր մեծանուն բանաստեղծների բանաստեղծու- թիւններու միջոցով ապրեց հայի վեհապանձ ոգին, հայ մնայլու կամքն ու վճռականութիւնը:

Այն հնարաւորութիւն տուեց հայ երեխային մէկ անգամ եւս պեղելու մեր ոսկեղնիկ լեզուն Չա- րենցի հեզաձկուն ու Նայիրեան լեզուն Սեւակի «Եղիցի լոյս» եւ «Անլուելի Չանգակատուն» լեզուն, Միամանթոյի դիւցազնական եւ հե- րոսական լեզուն, Մեծարենցի եւ Տէրեանի քնքուշ ու քնարահոս

լեզուն որպէս Լարքի փոխանօրէ- նուհի 2015 թ. լարքում բացուելիք Յեղասպանութեան 100 ամեակին նուիրուած թանգարան-համալիրի առաքելութեամբ մեկնելու էի Հա- յաստան: Ես նախատեսուածից շուտ մեկնեցի Շուշի՝ ներկայ գտնուելու մրցոյթ փառատօնին ԱՄՆից փա- ռատօնին մասնակցեցին 6 ուսա- նողներ տարբեր հայկական վար- ժարաններից, որոնք էին Անի եւ Լիլի Սարաֆեանները, Սաթիկ Սե- րայտարեանը, Նանոր Տէր Պետրոս- եանը, Տարօն Պետրոսեանը: Նրանց առաջնորդում էր Սարաֆեան քոչ- րերի մայրը Մանիկ Մոնա Սահակ- եանը, որը պատշաճօրէն իրական- նացրեց իր ուսերին դրուած մեծ պատասխանատուութիւնը:

Մրցոյթին մասնակցեց նաեւ Լարքի իմ ուսանողներից 11 ամեայ Միքայէլ Փենիլեանը, որն իր տա- րիքային խմբում ԱՄՆում շահել էր առաջին մրցանակային տեղը: Հայաստան հասնելու յաջորդ օրը դեռ մօրս եղբայրներիս եւ իրենց ընտանիքների կարօտը սրտիս ու- ղեւորուեցին դէպի Արցախ: Ճանա- պարհին այցելեցինք Պ. Սեւակի տուն-թանգարան, ստանալու հա- մար մեծ բանաստեղի օրհնանքը հայ երեխաներին, մեր ոսկեղնիկ լեզուն գեղեցիկ եւ մաքուր հնչեց- նելու համար, այնքան քնքուշ ու սրտայոյզ, բայց միեւնոյն ժամա- նակ տոկուն ու աննկուն՝ հայոց դարաւոր լեռների ու կովկասեան հպարտ կտրիճի պէս:

Եւ ձեռքերս պարզեցի արձա- նի վրայ, խոնարհուեցի հրաշք բանաստեղծի մեծութեան առջեւ եւ երգուեցի որպէս իմ ժողովրդի մի փոքրիկ մասնիկ աչքի լոյսի պէս պահել ու պահպանել մեր հազարազանձ լեզուն ու ոչ մի գանձի, ոչ մի փառքի հետ շփոխել այն, որովհետեւ իսկական գանձը հենց ինքը լեզուն է, մեր մայրենին:

Այնուհետեւ շարունակում ենք ճանապարհը եւ հասնում մեր չքնաղ Նորավանքը եւ հիանում քանդա- կազործ Մոմիկի հրաշագործ մուր- ճին եւ մասնների արարչութեամբ: Որքան հզօր քարերի ու խաչքա- րերի պաշտամունք ունի մեր ժո- ղովուրդը:

Դարեր շարունակ հայ ժո- ղովուրդը քարին է յանձնել հայ հոգու պոեզիան: Մեր հանճարեղ վարպետների ձեռքերում քարը դարձել է կամար, նուռ ու ողկոյց:

Արարչագործ իմ ժողովուրդը քա- րից ոչ միայն հաց է քամել, քարին թեւ ու թռիչք տուել, այլեւ քարե- դէն երաժշտութիւն հիւսել, կառու- ցելով անառիկ վանքեր ու բերդեր, ամրոցներ ու քաղաքներ:

Աննկարագրելի բնութեան պատկերները ըմբոխշնելով, հիա- նալով Շուշեցարական բնութեամբ, պատմական յուշարձաններով, երկ- նահուպ լեռներով ու ձորերով հասանք Արցախ:

Սիրոս տրորում էր յուզ- մունքից, որովհետեւ ոտք էինք դրել այն հողի վրայ, մեր պատմա- կան հայրենիքի այն չքնաղ բեկորի վրայ, որը մեր նորօրեայ ազատա- մարտիկների անօրինակ սիրանք- ների եւ հայոց առիւծասիրտ գի- նուորների շնորհիւ ազատագրուեց 10-ամեակների գերութիւնից: Այդ յաղթանակը ստիպեց մեր դարա- ւոր ոտիսին հաշուի նստել մեր կամքի, մեր ազատ ապրելու իրա- ւունքի հետ:

Եւ ահա հասանք Շուշիի «Շուշի Փլագա» հիւրանոցը, որտեղ մեզ ընդունեցին հիւրանոցի աշխատա- կիցները սրտաբաց, ժպիտով եւ հային վայել հիւրընկալութեամբ: Այստեղ զգացում էր այն մեծ սէրն ու յարգանքը «Շուշի պլագա» հիւրանոցի բաժնետէրերից Տէր եւ Տիկ. Ալեք եւ Ալենուշ Բաղդասար- եանների նկատմամբ, որ տածում էր իւրաքանչիւր աշխատակից: Շնորհիւ նրանց համեստ, խոհեմ վերաբերմունքի ստեղծուած էր ըն- տանեկան ջերմ մթնոլոր, ամէն ինչ արուած էր սիրով, գուրգուրանքով եւ նուիրումով:

Ի դէպ նախապէս անձամբ չճանաչելով այս հիանալի գոյգին, ես ամբողջ ճանապարհին եւ 5 օրերի ընթացքում բացայայտեցի նրանց, որպէս տիպար հայեր, որոնք իրենց ողջ կեանքը ապրել են մեր ժողովրդի, մասնաւորապէս Ար- ցախցու ցաւերով եւ խանդավառ- ուել առաջադէմ քայլերով:

Վ. Փափագեանն ասել է. «Մար- դու հուրիւնը անմնացող ցոլա- նում է իր գործի մէջ: Գործի հաշուկշիւր ուղիղ համեմատական է սերունդներին թողած իր աւան- դին, ժառանգութեան չափին»:

Ապրելով հայրենիքից հեռու, Տէր եւ Տիկ. Բաղդասարեանների հետ է եղել մեր ժողովրդի հպար-

Շար.ը էջ 31



Ս.Գ.Հ.Կ. ՓԱՐԱՄԱԶ ՄԱՄՆԱՃԻՂԸ ԿԸ ՇՆՈՐՀԱՒՈՐԷ ԲՈԼՈՐ ԸՆԿԵՐ-ԸՆԿԵՐՈՒՀԻՆԵՐՈՒ ԵՒ ՀԱՄԱՅՆ ՀԱՅ ԺՈՂՈՎՈՒՐԴԻ ՆՈՐ ՏԱՐԻՆ ԵՒ Ս. ԾՆՈՒՆԴԸ

ՄԱՍԻՍ - 2015

ԲԱՐԻ ԵՐԹ ՇՈՒՇԻՈՒՄ ԿԱԶՄԱԿԵՐՈՒԱԾ ԱՍՍՈՒՆՔԻ ՀԱՄԱՐԱՅԿԱԿԱՆ ՓԱՌԱՏՕՆԻՆ

Շաբաթնակալուած էջ 30-էն

տուեթիւնը, հաւասան ու սէրը, որն էլ ուժ ու եռանդ է տուել իրագործելու նորանոր խիզախումներ: Հայրենիքը նրանց բջիջներէ հիմնական բաղադրութիւնն է, ապրելիքն ու մտածելակերպը:

Նրանք մեր ժողովրդի այն երանելիներէն են, որ շարունակում են եւ նոր հանգրուանի են հասցնում մեր անուանի բարերարների թողած գեղեցիկ ավանդները:

Տէր եւ Տիկ. Ալեք եւ Ալենուշ Բաղդասարեանները ապրում են գիտակից զոհաբերութեամբ, Մեծարենցի անանձնական երջանկութեամբ, բարութեամբ, խոր հաւատով, զգացմունքների ազնուութեամբ:

Զրուցում եմ Պրն. Բաղդասարեանի հետ եւ անվերջ զգում նրա մտահոգութիւնը Շուշիի, նրա ժողովրդի բարգաւաճման առումով: Շուշիում ապրող մարդկանց անվճար տրամադրել են մի տարածք, որտեղ մարդիկ հնարաւորութիւն ունեն վաճառելու իրենց բերքը...

Շուշիում նրանց ճանաչում են բոլորը, որովհետեւ նրանք կարեկից են այստեղ ապրող ընտանիքներին, հայ մանուկներին: Ինքս ականատես եղայ, թէ ինչպէս մասնագիտութեամբ ատամնաբույժ Ալենուշ Բաղդասարեան խաղալիքներ եւ մանկական այլ իրեր էր բաժանում արցախցի փոքրիկներին:

Անասման են տպաւորութիւններս այս գոյգի մասին, որոնց կենքը եղել է նուիրում մեր ժողովրդին, հայրենիքին եւ պատմական Արցախին:

Եւ ասա առաւօտեան արթնանում եմ Շուշիում եւ խորհում թէ որքան կենաց ու մահու մարտեր են մղուել նրանց լանջերին, լեռնանցքներում ու ստորոտներում: Որքան անմեղ ու մեղաւոր արիւն է թափուել նրանց վրայ:

Փառատօնի հանդիսաւոր բացումը կատարուեց Մուրբ Ղազանչեցոյ եկեղեցու հարեւանութեամբ գտնուող Խ. Աբովեանի անուան միջնակարգ դպրոցում:

Ինչ հպարտութիւն ինձ, այստեղ եւ ինձ առաջարկուեց լինել ժիւրիի կազմում, որում ընդգրկուած էին փրոֆ. Արծրուն Աւագեանը, բանասիրական ֆակուլտետի դեկան (ժիւրիի նախագահ) փրոֆ. Գուրգէն Մելիքեանը (Արե-

ւելագիտական ֆակուլտետի դեկան), փրոֆ. Սամուէլ Մուրատեանը՝ հայ գրականութեան ամպիրոնի վարիչ, Աղասի Թաղեւոսեանը՝ դերասան (Թատրոնի տնօրէն), դասական երգարուեստի մէջ իր ուրոյն տեղն ունեցող երգիչ՝ Գէորգ Հաճեանը:

Արցախի օրհներգից յետոյ յայտարարուեց ասմունքի համահայկական փառատօն-մրցոյթի հանդիսաւոր բացումը:

Ողջոյնի խօսքով հանդէս եկաւ «Շուշի Փլազա» հիւրանոցի գլխաւոր տնօրէն Սարգիս Գալստեանը: Ելոյթ ունեցաւ փառատօնի գլխաւոր կազմակերպիչներ եւ հովանաւոր Ալեք Բաղդասարեանը, յայտնեով իր ուրախութիւնն ու խոր հաւատը այն մասին, որ փառատօնը տարեցտարի կ'ընդլայնի իր սահմանները եւ կը դառնայ համահայկական գեղարուեստական արժէքների ուշադրութեան կեդրոն: Այնուհետեւ Սփիւռքի նախարարութեան ներկայացուցիչը ընթերցեց Հ.Հ. Սփիւռքի նախարարուհի Հրանտշ Յակոբեանի ողջոյնի խօսքը, ուղղուած փառատօնի մասնակիցներին, որում ասուած է «Մենք բոլորս հասկանում ենք, որ հայ ժողովրդի բոլոր հատուածների միասնականութիւնն է մեր ուժի գրաւակալը: Հայաստան-Արցախ-Սփիւռք եռամիասնութիւն այն հզօր ներուժն է որն ապահովելու է մեր անխափան երթը ժամանակի ծիրում: Ասմունքն առաջին անգամ ընդգրկուելով փառատօնում, նրան յաջորդում է եւս մէկ դերակատարութիւն, շնորհիւ հայ լեզուի, հայ խօսքի նպաստել հայապահպանութեանը: Ողջոյնի խօսքով հանդէս եկաւ նաեւ Խ. Աբովեանի դպրոցի տնօրէնուհին, մաղթելով բարի երթ մասնակիցներին:

Իրենց խօսքով հանդէս եկան փառատօնի կազմ կոմիտէի նախագահ՝ Արծրուն Աւագեանը եւ Գուրգէն Մելիքեանը:

Ի դէպ ես շատ ուրախ եմ որ փառատօնի 5 օրերի ընթացքում ես մօտիկից ծանօթացայ ու բարեկամացայ փրոֆ. Գուրգէն Մելիքեանի եւ իր հիանալի կնոջ՝ Տիկ. Լատրա Մելիքեանի ու քնքուշ դստեր Մերիի հետ: Ինձ համար հպարտութիւն էր ծանօթանալ նաեւ փրոֆ. Արծրուն Աւագեանի, փրոֆ. Սամուէլ Մուրատեանը, նաեւ Աղասի Թաղեւոսեանի հետ:

Պէտք է ասել որ մրցոյթի

բոլոր մասնակիցները լաւ պատրաստուած էին եւ միայն իրենց մասնակցութիւնը արդէն իսկ յարթնակ էր, որովհետեւ ունեցան շատ ձեռքբերումներ:

Այնքան գեղեցիկ եւ միաժամանակ յուզիչ էր մէկ բեմից լսել այդքան հայ բանաստեղծների քանքարներ, երբեմն դրանք կրկնում էին, բայց իւրաքանչիւրը ասուում էր իւրովի:

Նայում եմ եւ յիշում Հ. Սահեանի խօսքը. «Մեր բանաստեղծութիւնը շատ ինքնատիպ է, ոչ մէկի նման չէ: Մեր կարօտն ուրիշ է: Ամէն ժողովուրդ իր կարօտն ունի: Մեր կարօտը դառնում է անտունի, տաղ, շարական...»

Մրցոյթի երկրորդ փուլից յետոյ յայտարարուեցին յաղթողներ, առաջին, երկրորդ եւ երրորդ պատուաւոր տեղերում: Երրորդ պատուաւոր տեղ էր գրաւել նաեւ իմ ուսնաող Միքայէլ Փեննիլեանը, Լարքի «Թագուհի» ամառային ճամբարի սան: Այսպիսով ասմունքի համահայկական երրորդ մրցոյթ-փառատօնը գեղեցիկ իրականութիւն դարձաւ: Այն նաեւ հնարաւորութիւն տուեց աշխարհի 7 երկրներից հաւաքուած մասնակիցներին միմեանց հետ ծանօթանալու, կարծիքներ կիսելու եւ մտերմանալու համար:

Մրցոյթի մասնակիցները իրենց հետ շատ բան տարան: Անմոռաց յիշողութիւններ, նորաւոր բանաստեղծութիւններ սովորեալ ձգտումը, բանաստեղծութիւնը առաւել խորը հասկանալու եւ փոխանցելու վարպետութիւնը, ընկերային եւ եղբայրական սիրոյ ոգին, հայ լինելու հպարտութիւնը: Այս մասին ես իմ կարծիքս յայտնեցի Արցախի հեռուստատեսութեան համար նախատեսուած հարցազրոյցում:

Փառատօնից անմիջապէս յետոյ Շուշիում, «Շուշի պլազա» հիւրանոցի բակում ականատես եղայ եւ անձամբ մասնակիցը դարձայ հայ վեթերան գինուորներին սահման ճանապարհելու յուզիչ արարողութեանը:

Կարդացել էի գրքերում, թէ ինչպէս են հրաժեշտ տալիս հայ գինուորին, բայց տեսնել աչքերով եւ չլուզուել, անկարելի էր: Յուզմունքս տասնապատուեց երբ ինձ առաջարկուեց իմ խօսքով հանդէս գալ նրանց առջեւ:

Հաւաքուած էր հոն բազմու-

թիւն: Ճանապարհում էին վեթերան գինուորներին, որոնցից իւրաքանչիւրը մի ընտանիքի սիւն էր, օճախի կրակ: Նրանք սովորական մահկանացուներ չէին, որ վախեան մահից: Շատ լաւ գիտակցում էին իրենց կոչումը: Նայում եմ գինուորներին եւ մտածում, քանի օճախի ծուխ յանգեց, մինչեւ հողն ազատուեց: Եւ ինչպէս իմ խօսքում ասացի՝ մեր ժողովուրդը ապրել է ծանր մաքառումի դարեր եւ բազում զոհերի գնով փրկելով իրենց հասել է մինչեւ 21րդ դար:

Ովքեր ասես, մեր ժողովրդին կուլ տալու ախորժակ չեն ունեցել՝ ասորեստանցիները, բիւզանդացիները, հռոմէացիները, պարսիկները, թուրքերը, արաբները, մոնկոլները: Երբ համբերութեան բաժակն էր լցւում, հայը բռուցքուում էր, Սասունցի Դաւթի պէս դառնում էր ըմբոստ ու խիզախ եւ պաշտպանում հողը հայրենական:

Յիշեցի մեր գոհ դարձած մտաւորականներին, նաեւ այն մանուկին, որ դեռ լոյս աշխարհ չէկած սրախող եղաւ մօր արգանդում...

Խօսքս աւարտեցի Հրաչեա Յովհաննիսեանի «Պատուիրան» բանաստեղծութեամբ, որ պատգամում է յարութեան համար կռուով մահանալ:

Իր շատ գեղեցիկ եւ պատշաճ խօսքով հանդէս եկաւ նաեւ Ե.Պ.Ն. ամպիրի վարիչ Սամուէլ Մուրատեանը, որի խօսքը հայ գինուորի խիզախութեան մասին էր, որ մենք տարածքներ ունենք յետ բերելու, դեռ վրէժ ունենք պատմութիւնից լուծելու, կորցնելու իրաւունք չունենք այլեւս...

Յուզուած էինք բոլորս...

Վերջում ես եւս միացայ հայ վեթերան գինուորներին պարելու նրանց հետ հրաժեշտի շուրջ պարը չկարողանալով գապել արցունքներս: Պարում էի ու մտածում գալու է այն օրը, որ այս պարը Մասիս լեռան լանջին ենք պարելու: Դեռ գալու է հատուցման ժամանակը: Տէր Զօրի անապատի վրայ կանգնեցնելու աշխարհի ամենաբարձր յուշարձանը:

Եւ ասա գինուորները նստեցին աւտոբուսները եւ մենք հպարտութեամբ նաեւ յուզուած հրաժեշտ տուեցինք նրանց եւ արդէն կարօտը տեղ գտաւ իմ աչքերի ու

Շաբ.ը էջ 35



ՌՈՒՄ ՓԵՍԱՆ՝ Ի ԶԱՃՈՆ

(ՀԱՏՈՒԲԾ ՍԸ ԱՆՏԻՊ ԿԵՊԵՆ)
ՍԱՐԳԻՍ ՎԱՅԱԳՆ

Ժագոպ Լահնէր չգիմանալով կնոջ, Վիքթորիային թախանձանքներուն, որոշեց տասնըհինգ օր արձակուրդ վերցնելով, կինը բերել Հաճըն, ներկայ ըլլալու համար քրոջ, Ֆլորանսի հարսանեկան հանդիսութեան: Ինք ալ, վերջապէս պիտի ուզէր տեսնել սա «չքնադագեղ Հաճըն» ըսուածը, որուն գովքն ու կարօտը, ձեռք ձեռքի բռնած, չորս տարիներէ ի վեր, գեղգեղուեր ու հոլովուեր էին իր տան եւ շրջապատին մէջ: Ռուսական անսահման տափաստաններու արձակ հորիզոններուն վարժ այս սողան, ճամբու ամբողջ տեւողութեան, իսկապէս որ հիացաւ ի տես Տաւրոսեան լեռնաշղթայի գագաթներու սլացքներով եւ անարկու գահավիժումներով, սիրեց սեպ ժայռերէն փրփրաբաշ շառաչիւնով վար թաւալուող ջրերուն ջրվիժումը եւ մութ կանաչի տուող նոճիներուն նագանքով բացած սա կոկիկ եւ պչրուն հովանոցները: Ըսելիք չկար. ամէն ինչ նոր էր իրեն համար, վաչրա՛գ, ցնցո՛ղ, բայց նաեւ՝ վեհ ու ամեհի:

Այս բոլոր բաւականութեան վրայ եկաւ աւելնալու, նաեւ կարաւանապետ Հաճիին մասնալատուկ ուշադրութիւնն ու առանձնաշորհեալ վերաբերմունքը, իրեն, կարաւանի որպէս առաջին ռուս մարդուն շորհուած: Վերջապէ՛ս, «ռուս քեռիին» մէկ տիպարն ու ներկայացուցիչն էր, սա «Ժագոպ Պէյ»ը, եւ մանաւանդ՝ Հաճընի միակ ռուս փեսայն ըլլալու առանձնաշորհութիւնն ալ ունէր: Ուրիշ հարց որ, Հաճին իսկապէս ախորժեցաւ ժագոպին անմիջական եւ պարզօրէն համեստ անձնաւորութեանն ալ, մանաւանդ՝ անոր աղճատուած թրքերէնէն՝ որուն իւրապատուկ, նոր շեշտադրումն ու «հօ» հնչիւնին «խէ»-ի ձեւափոխումը, - «Հաճի»ն խաճիի վերափոխումը, - իր ծիծաղելիութեամբ իսկ շատ հաճելի թուեցաւ Հաճիի ունկերուն: Փոխադարձաբար ժագոպին համար, Հաճին, իր գունտ ու կլոր հասակով, իր փափախով, փառաւոր պեխերով, լայնածաւալ շալվարով եւ ուսադրած անխուսափելի մառգերով, որքան կը չիչեցնէր իրենց առասպելական թարաս Պուլպան սիրելի:

Ճամբու ընթացքին ձեւաւորուող այս բարեկամութենէն եւ մտերմութենէն մեծապէս գոհ մնաց

նաեւ Վիքթորիան: Հաճին, ժագոպին ընծայած իր յարգալից եւ ջերմ ընդունելութեամբ, փարատեր էր իր այն վախը, թէ ամուսինը, Ատանայէն Հաճըն չորս օր տեւող այս դժուարին ճամբորդութեան ընթացքին, որպէս օտարական եւ շրջապատին անծանօթ կրնար կղզիացած մնալով ահաւոր ճանձրանալ եւ դժգոհութիւնը իր վրայ թափել: Սակայն, Հաճին իր բարեացակամութենէն լայն բաժին հանեց նաեւ իրեն, իր տեւական հոգածութեան տակ առնելով զինք: Կ'երթար-կու գար, ան գոհունակութեամբ խնդալով կը հարցնէր.

- Աջկին, դուն այս պիչիմը ի մոյղը ուրկի՞ց գտոյց:
Վիքթորիա միշտ պչրանքով կը պատասխանէր.
- Աղօ՛, ես չգտօ, ի՛նք գտօվ ինձ:

Ամպագոռ կը խնդար Հաճին, շատ գոհ մնացած ըլլալով այդ պատասխանէն: Այդպիսով, կը կարծէր փրկուած ըլլար հաճընցիներուն արժանապատուութիւնն ալ:

Կար նաեւ ուրիշ հարց մըն ալ, որ առաջին օրէն գրաւած էր Հաճիին ուշադրութիւնը եւ սկսած չարչրկել անոր միտքը: Սա մասնալատուկօրէն վարձուած երկու ջորիներուն վրայ բեռցուած մետաղեայ ծանրանիստ սարքն էր, մոմ լաթով ու կարպետով լաւապէս ծրարուած՝ որոնց հանդէպ ժագոպին տեւական ուշադրութիւնը ակներեւ էր: Հաճին, կարծես գուշակած ըլլալով այս բեռան բնոյթը, ամէն անգամ անոնց քովէն անցնելուն, փառաւոր պեխերուն տակ գոհունակութեան լեցուն ժպիտ մը կ'ունենար եւ աչքերուն մէջ խորամանկ փայլ մը շողացնելով, կը շարժէր գլուխը: Գիշեր մը, նո՛յնիսկ, օգտուելով հանգրուանի մը հանգստեան կայքէն, եւ վատահ ըլլալով որ ուղեկիցները խոր քունի անցած էին, ան մօտեցաւ «մասնալատուկ» այդ ծրարումին եւ գզուշութեամբ բացաւ գայն. - Երկաթեայ երեք չափի ատամնաւոր անիւներ էին եւ գլանաձեւ ձողեր ու պտուտակներ: Անմիջապէս վերստին ծրարեց՝ ալ վստահ ըլլալով իր գուշակութեան ստուգութեան:

Յաջորդ առաւօտուն իսկ առիթը գտաւ ժագոպին հարց տալու: - Ժագոպ Պէյ, ան չէ եա, սա ջորիներուդ բեռը ի՞նչ է, որ

այսքան ծախս կը վատնես անոնց վրայ:

Ժագոպ արդէն նկատեր էր Հաճիին մասնաւոր ուշադրութիւնը ջորիներու բեռին նկատմամբ եւ ուզեց պահ մը խաղալ անոր հոգիին հետ:

- Ի՞նչ կը խորհիս որ ըլլայ խաճի:

- Ինչ գիտնամ ես... վտանգաւոր բան մը կ'երեւի ինձի... արդեօ՞ք... - վարանիլ ձեւացուց ան:

-Արդեօք ի՞նչ... -

- Ինչ գիտնամ ես... - ձայնին խորհրդաւոր շեշտ մը տալով եւ ցածցնելով,- միթրայոգ չէ՞... - շշնջաց ան, աչքերը խորամանկօրէն թարթելով:

-Միթրայոգ... սեպէնք թէ այդպէս է...պէտք ունի՞ս դուն միթրայոգի...

- Ես՝ ո՛չ: Բայց տղաքը ի հարկին պէտք կ'ունենան:

- Ովքե՞ր են այդ տղաքը: Չէ որ խաճընի մէջ ֆրանսական բանակ կայ որ ամէն սարքաւորում ունի:

-Բանակ չկա՛յ: Եղածը երեք հարիւր հոգինոց ճանտարմաներու գունդ մըն է, ան ալ կէսը հայ, կէսն ալ թուրք՝ միայն մառգերներով զինուած: Ֆրանսացիք այդպէ՛ս կ'ուզեն:

- Իսկ հայերը, գատէն զինուած ոյժ չունի՞ն:

- Հիմակ ու հիմա ո՛չ: Բայց գիտե՛մ թէ հնչակեանները, որպէս թէ գաղտնի՝ որոշ պատրաստութիւններ կը տեսնեն, իսկ դաշնակցական խումբ մըն ալ կայ, որ Արամ Կայծակին շուրջ, արդէն որպէս ճանտարմա զինուած, պէտք եղածին պէս ձեռքին գործը կ'ընէ: Ահա այս տղաքը կրնան պէտք ունենալ ձեր բերած միթրայոգին: Քանի՞ հատ են...

Հոս ա՛լ ժագոպ լրջացաւ: Հարցը կատակ չէր վերցնէր:

- Խաճի, ըսածներդ բաւական ծանրակշիռ կ'երեւին ինձի: Ֆրանսացիք չէ՞ն գիտեր թէ խաճընցիք բնաւ վստահութիւն չունին թուրքին վրայ: Կամ, ըսածիդ պէս, հայերդ պէտք է զինուին կատարելապէս եւ կամ ֆրանսացիք, իրենք ստանձնեն խաճընի ամբողջական պաշտպանութիւնը:

- Կ'ըսեն թէ բաւարար ոյժ չունին:

-Այն ատեն ինչո՞ւ ստիպեցին որ խաճընցիք վերադառնան:

-Չգիտեմ, ժագոպ պէյս, չգիտեմ... դուն լաւ որ այս միթրայոգները բերեր ես, բան մըն է գոնէ: Յաջորդ գալուդ ալ, եթէ կրնաս երկու հատ ալ բեր...

- Բայց խաճի՛, այս բերածներս միթրայոգ չեն՝, կնոջս ընտանիքին ջուրով դարձող սրոցարանին նոր սարքաւորումն է միայն, իսկ ես, ճիշդ է, մեխանիկ էնժենիէօր եմ, բայց միթրայոգ ի հետ ոչ մէկ գործ ու կապ ունիմ: Կը ցաւիմ, իսկապէս կը ցաւիմ:

Հաճին ապշահար ու պատրանաթափ՝ շուրջապէս պիչ պիչ կը նայէր մէկ մը ռուս մարդուն եւ մէկ մըն ալ մասնալատուկ այն ջորիներուն: Անշուշտ գէշ կատակ մըն էր ռուսին ըսածը. ինք, սեփական աչքերով տեսնելու ու տեսնելու ատամնաւոր շրջանակներն ու ձողերը: Իսկ երբ ժագոպ կրկնեց իր հաստատումը, Հաճին միայն կրցաւ գեր զարմացած, արձակել բաւական զարմանալի,

-Ես՞...-մը:

Նախ, հազիւ նշմարելի պաղութիւն մը ցուցաբերեց Հաճին: Խաղի՞ եկած էր, ինք որ, ինքզինք անսխալական կը կարծէր: Սակայն երբ ժագոպ Լահնէր ձեռքը իր ուսերուն վրայ դնելով, փաղաքշանքով սկսաւ խօսիլ հետը, եւ խոստացաւ Ատանա վերադարձին անպայման հետաքրքրուիլ այս հարցով եւ կարելին ընել օգնելու համար հաճընցիներուն՝ հալեցաւ Հաճիին վերապահութիւնը որոշ չափով: Սակայն յուսախաբութիւնը որոշ թողուց բեկուած մաս մը իր մէջ: Հաճին այնքան մտահոգ էր Հաճնոյ նոր գոյավիճակով: Իր արհեստին բերումով, իր անդադրում երթելու անարդէն սկսած էր նշմարել կասկածելի անձերու յայտնուին ու նոր տեսակի եռուզեռ մը, թրքական գիւղերուն եւ անցուղարձի իր ճամբաներուն մէջ: Քանի մը անգամ, փորձեր էր բացուիլ Պօղոս Պէյին, յայտնելով իր կասկածները, բայց Հրամանատարը, այնքան ինքնավստահ եւ անձնապաստան՝ պարզապէս խնդացեր էր իր «միտեր երեւակայութեան» վրայ:

Սակայն այլ տեսակի վերաբերմունք ունեցեր էր Արամ Կայծակը:

- Հաճի՛, դուն անհոգ մնա՛. ես անոնց մայրը կը լացնեմ : Դուն կը

Շար.բ էջ 35

**ՇՆՈՐՀԱՌՐ
ՆՈՐ ՏԱՐԻ
ԵՒ ՍՈՒՐԲ ԾՆՈՒՆԴ**

ՏԵՐ ԵՒ ՏԻԿ. ԳԱԲՐԻԷԼ ԵՒ ՄԱՐԻԱ ՄՈԼՈՅԵԱՆ

ՄԱՍԻՍ - 2015

ԾՆՈՒՆԴԻ ԵՒ ՏՕՆԱԿԱՆ ՕՐԵՐՈՒ ՅԵՏ ԿԱՊՈՒԱԾ ԶՈՔԵԲԱՆԱԿԱՆ 10 ՈՒՍՈՒՄԱՍԻՐՈՒԹԻՒՆՆԵՐ

1. Ուրախ սոնական օրեր: Ծննդեան սոնի միջոցով նպատակներն մէկն է ուրախութիւն տարածել ընտանեկան եւ ընկերային միջավայրերուն մէջ: Ուրախութեան եւ սոնական օրերու շրջագիծին մէջ կատարուած ուսումնասիրութիւններ ցոյց տուած են թէ այս շրջանին ծախսերու, գնումներու եւ նիւթական ակնկալութիւններու վրայ կեդրոնացումը կրնայ նուազեցնել ուրախութիւնը: Իսկ ընտանեկան հաւաքոյթները, ինչպէս նաեւ՝ կրօնական եւ հոգեւորական կեանքի փորձառութիւնները կը նպաստեն ուրախութեան:



2. Տուրմը: Տոնական օրերուն տուրմը ամէնէն շատ օգտագործող հիւրասիրութիւններն են մէկն է: Մարդիկ յաճախ տուրմ կը ստանան, որպէս նուէր: Հոգեբանական հետազոտութիւններ ցոյց տուած են թէ տուրմը կրնայ բարձրացնել երջանկութեան եւ գոհունակութեան հետ կապուած հորմոններու արտադրութեան քանակը: Արդեօք ո՞ր տեսակի տուրմը ամէնէն շատ օգտակար է հոգեբանական առողջութեան: Սովորական տուրմի, կաթով կամ սպիտակ տուրմի եւ լեղի տուրմի գծով կատարուած ուսումնասիրութիւններու արդիւնքները դժբախտաբար գիտական եզրակացութիւն չունին: Սակայն, ամէն պարագայի, գիտենք որ տուրմը օգտակար է առողջութեան՝ երբ սպառուի չափաւոր քանակութեամբ:

3. Նուէրներ: Նուէրներու փոխանակումը՝ կողակիցի, ընտանիքի անդամներու, բարեկամներու, ընկերներու եւ գործընկերներու միջեւ սովորական երեւոյթ է այս սոնական շրջանին: Սակայն ամէն մարդ չէ, որ կը ստանայ իրեն յարմար կամ իր նախասիրած նուէրը: Հետաքրքրական ուսումնասիրութեան մը շնորհիւ գիտնականներ յայտնաբերած են թէ վատ նուէրները կրնան բացասական ձեւով ազդել երկու անձերու՝ յատկապէս կողակիցներու միջեւ յարաբերութեան վրայ: Այս նիւթին հետ առնչուած այլ հոգեբանական ուսումնասիրութիւն մը պարզած է թէ վատ կամ անյարմար նուէր ստանալու պարագային՝ կրնան կը ձեւանան թէ գոհ են իրենց ստացած նուէրով, իսկ տղամարդիկը՝ անկեղծութեամբ կ'ատայայտուին այս մասին:

4. Դրամը՝ որպէս նուէր: Ուսումնասիրութիւններու համաձայն՝ դրամը մաս կը կազմէ ամէնէն վատ նուէրներու շարքին, որովհետեւ անիկա ոչ մէկ անուղղակի նամակ կը պարունակէ, ոչ ալ կը յստակացնէ յարաբերութեան բնոյթը եւ մտերմութեան չափը: Կարգ մը պարագաներուն, դրամը կրնայ սխալ թարգմանուիլ ստացողին կողմէ, մանաւանդ երբ նուէրողն ու ստացողը տարբեր ընկերատնտեսական մակարդակներու պատկանին: Հետեւաբար, նախընտրելի է դրամը նուէրել փոքրերուն, իսկ չափահասներուն համար գնել այլ նուէրներ:

5. Նաեւ նուէրել: Կարեւոր է ընդունիլ թէ Ծննդեան սոնը միայն ստանալու առիթ չէ: Այս սոնին առթիւ կարեւոր է նաեւ նուէրելը, որուն պատճառով յառաջացած հաճոյքը շատ աւելի մեծ է քան նուէր ստանալու: Որքան հաճելի է մեզի համար գնումներ կատարելը, նոյնքան, եթէ ոչ աւելի հաճելի է նաեւ մեր ընկերներուն եւ ընտանիքի անդամներուն նուէրներ գնելը:

6. Զարդարանքները: Ընկերային հոգեբանութեան ծիրին մէջ կատարուած հետազոտութիւնները ցոյց կու տան թէ բնակարանին դուրս եւ տան շուրջը գետեղուած զարդարանքները պատճառ կը դառնան որ մարդիկ ձեզ ըմբռնեն, որպէս ընկերային անձեր: Այս զարդարանքները այն տպաւորութիւնը կը ձգեն, որ դուք մաս կը կազմէք ընկերութեան:

7. Ծննդեան սոնի միջոցով եւ վաճառականութիւնը: Այս ամսուան ընթացքին ամէնուրեք կը տիրէ ծննդեան սոնի միջոցով: Շուկաներուն մէջ կը հնչեն Ծննդեան սոնի երգեր, խանութները զարդարուած կ'ըլլան լոյսերով եւ խաղալիքներով: Ըստ ուսումնասիրութիւններուն՝ այս բոլորը մարդիկ կը հրապուրեն

ԾՆՆԴԵԱՆ ՏՕՆԻ ԸՆԹԱՑՔԻՆ ՏԱՆ ԿԱՐՕՏԸ ՄԵՂՄԱՑՆԵԼՈՒ ՄԻՋՈՑՆԵՐ

Նոյնիսկ եթէ կը գտնուիք աշխարհի ամէնէն գեղեցիկ քաղաքին կեդրոնը, Ծննդեան օրերուն անկարելի է խուսափիլ տան կարօտէն: Ոմանց մօտ այս կարօտը այնքան մեղմ է, որ նոյնիսկ կարելի է նկատել: Սակայն ուրիշներու պարագային, մանաւանդ երբ անոնք երկար ժամանակ հեռու մնացած են իրենց ծննդավայրէն եւ ընտանիքէն, տան կարօտը բաւական շեշտուած կ'ըլլայ եւ կրնայ ազդել անոնց տրամադրութեան վրայ:

Բարեբախտաբար, տան կարօտը կարելի է մեղմացնել ինքնաշխատութեամբ: Հետեւեալ հինգ կէտերը կրնան նպաստել այս նպատակի իրագործման:

1. Նուսափիլ ինքզինք գոհի վերածել: Ճիշդ է, որ ընդհանրապէս մարդիկ սոնական օրերուն կը նախընտրեն միանալ իրենց ընտանիքին, սակայն բոլորին պարագային չէ որ կ'իրականանայ այս փափաքը: Բաւական տհաճ փորձառութեան կրնայ վերածուիլ այս երեւոյթը: Սակայն, կացութեան յաւելեալ ժխտական արժեւորումը կրնայ բարդացնել զգացումները: Կարեւոր է այս պարագային ընտանիքէ հեռու ըլլալով չմեղադրել այլ մարդիկ: Նման պարագաներու, անհատը պէտք է պատասխանատու զգայ իր որոշումներուն:

2. Նորութիւններ յայտնաբերել: Նոյնանման առօրեայէն խուսափելու, ինչպէս նաեւ կեդրոնացումը կարօտէն շեղելու համար կարելի է նոր վայրեր կամ նախասիրութիւններ յայտնաբերել:

3. Հարազատ ուտելիքներ պատրաստել եւ ուտել: Տոնական օրերուն լաւ գաղափար է օգտագործել մեծ մօր ճաշացուցակը եւ անոնց բաղադրութիւնները: Հարազատ ճաշերու համն ու բոյրը կը մեղմացնեն կարօտը: Աւելին՝ հարազատ ուտելիքներու սպառումը կրնայ նպաստել տրամադրութեան բարձրացման:

4. Նամակներ ուղարկել: Կարօտի ժամանակ մարդիկ անհրաժեշտութիւն կը զգան արտայայտելու իրենց զգացումները: Լաւ գաղափար է սոնական օրերու առթիւ հարազատներուն ուղարկել նամակներ եւ շնորհաւորանքներ, մանաւանդ որ զգացումները գրի առնելէ ետք մարդիկ կը ստանան հոգեկան հանգստութիւն եւ գոհունակութիւն: Այս նամակներուն պատասխանները եւս կը մեղմացնեն կարօտի զգացումը:

5. Արտայայտուիլ: Հզօր զգացումները կարելի է երկար ժամանակ թաքուն պահել: Եթէ կարիքը ունենաք արտայայտելու ձեր զգացումները կամ խօսելու անոնց մասին, անպայման հանդիպեցէք ձեր ընկերներուն: Զգացումները բաժնելը կը նուազեցնէ անոնց ժխտական ազդեցութիւնը:

խանութներէն ներս եւ կը բարձրացնեն վաճառման քանակը:

8. Ուտելիքները: Ուտելիքի հոգեբան (food psychologist)՝ Պրայան Ուանսինք կը բացատրէ թէ սոնական օրերուն խոհարարներ տարբեր թեքնիքներ կ'օգտագործեն գեղեցկացնելու համար ուտելիքներու տեսքը: Այս թեքնիքները նաեւ կ'ազդեն ուտելիքի համի ըմբռնումին վրայ: Գեղեցիկ տեսք ունեցող ուտելիքները ընդհանրապէս աւելի համեղ կը գնահատուին քան սովորական կերպով ներկայացուած ուտելիքները:

9. Ծննդեան սոնի ոգիի փնտռուք: Տոնական օրերու առթիւ բազմաթիւ գիրքեր, յօդուածներ, երգեր եւ ֆիլմեր կը հրատարկուին Ծննդեան ոգիի կամ Christmas Spirit-ի նիւթով: Սակայն, ի՞նչ է Ծննդեան ոգին կամ ի՞նչ կը հասկնան անկէ: 450 անհատներու մասնակցութեամբ ուսումնասիրութիւն մը պարզած է թէ Ծննդեան ոգին տարբեր ձեւով կը բացատրուի տարբեր մարդոց կողմէ, սակայն մեծ մասամբ անիկա կը հասկցուի որպէս մտերմութիւն, կրօնական սովորութիւններու փորձառութիւն եւ գնումներ:

10. Կաղանդ Պապա: Բազմաթիւ ուսումնասիրութիւններ փորձած են պարզել թէ ինչո՞ւ չափահասներ դարբերէ ի վեր կը շարունակեն Կաղանդ Պապայի առասպելը փոխանակել իրեն գաւակներուն: 318 ծնողներու մասնակցութեամբ կատարուած հետազոտութեան արդիւնքներուն շնորհիւ հոգեբաններ յայտնաբերած են թէ Կաղանդ Պապայի առասպելը փոքրերուն փոխանակելու ընթացքին չափահասները եւս նոյնքան հաճոյք կը ստանան Կաղանդ Պապայի հետ առնչուած ուրախութեանէն եւ անոնք դարձեալ կը վայելեն Կաղանդ Պապայի կախարդականութեան փորձառութիւնը:

ՆԱՅԻՐԻ ՇՈՐՃԵԱՆ

ՇՆՈՐՀԱՒՈՐ ՆՈՐ ՏԱՐԻ ԵՒ ՍՈՒՐԲ ԾՆՈՒՆԴ

ՏԵՐ ԵՒ ՏԻԿ. ԿԵՐԻ ԵՒ ՍՈՒՉԱՆՆԱ ՄԻՆԱՆԵԱՆ

ԱՍՍԻՍ - 2015

ԻՆՔՆԱԽԱՔԵՆՈՒԹԻՒՆԷ ԻՆՔՆԱԳԱՆԱԶՈՒԹԻՒՆ ԵՒ ԱՆԴԻՆ

Շարունակում էջ 5-էն

լով որ կ'իրականանայ Պարոյր Սեւակի խօսքը՝ «երբ չի մնում ելք ու ճար, խենթերն են գտնում հնար»: Ինչո՞ւ համար համատարած ինքնախաբեկութեամբ մեր ճակատագրի հետ խաղ կը խաղանք, փոխանակ համատարած դժգոհություններ ու ընդվզումով, եւ լուրջ ծրագրաւորումով, մեր ճակատագրին տէրը դառնալու:

Նոյեմբեր 22, 2014
XXXXXXXX

Ռաֆֆի

**Ինքնախաբեկութիւն
Ծանի՛ր գրեզ**

Ինքնախաբեկութիւն... դա մի շատ հասարակ բառ է, բայց նրա մէջ թաքնուած են մարդու բոլոր թշուառութիւնները: Տեսնում ես մէկը յիմար է, բայց կարծում է, թէ խելք ունի: Միւսը երկչոտ է, կարծում է, թէ առիւծի սիրտ ունի: Երրորդը ոչինչ չէ սովորել, բայց իրան հանճար է երեւակայում: Չորրորդը չարագործ մէկն է, բայց իրան առաքինութեան տիպար է համարում: Այս բոլորը առաջ է գալիս ինքնախաբեկութիւնից:

Ինքնախաբեկութիւնը մի աչք միայն ունի եւ նա ամէն բան լաւ կողմից է տեսնում. նրա միւս աչքը կոյր է սգեղութիւններ, այլանդակութիւններ եւ մոլորութիւններ տեսնելու համար: Եւ այս պատճառով այն թշուառականը, որ մի այդպիսի ողորմելի դրութեան մէջ է գտնուում, միշտ գոհ է իր վիճակից, որովհետեւ իր մէջ թերութիւններ չէ տեսնում: Եւ նրա համար նա միշտ անշարժ է մնում. ոչ մի ձգտում չէ պահանջ կեանքից չունի. իրան ամէն բանով լիացած է համարում:

Ինքնախաբեկութիւնը բարոյական ինքնասպանութիւն է. մի մեռելութիւն է, որի մէջ մարդկային

բոլոր կրքերը հանգիստ են...

Ինքնախաբեկութեան հակառակն է ինքնաճանաչութիւնը. նրա հայրը նախանձն է, իսկ մայրը՝ դժգոհութիւնը: Նա ոչինչ բանով բաւական չէ: Նա շատ բան ունի, բայց միշտ մտածում է, թէ սակաւ ունի: Նա միշտ դէպի վեր է նայում, աշխատում է բարձրանալ: Նա ըմբռնել է ընդհանուր մարդկային կատարելութիւնները. նա ծանօթ է բարձր եւ վսեմ գաղափարների հետ, եւ իրան համեմատելով կատարելագործուած ընդհանրութեան հետ, գտնում է շատ փոքր եւ փոքր...: Դրա համար միշտ դժգոհ է: Նա կրկնում է Սոկրատեսի հետ. «Ես միայն մի բան գիտեմ, այն է, որ ոչինչ գիտեմ»: Այդ խօսքի մէջն է ինքնաճանաչութեան բոլոր վսեմութիւնը:

Երանելի է այն մարդը, որ այսպէս է գգում: Այստեղից է առաջ գալիս տոկուն աշխատութիւնը, դա է ոգեւորում մարդուն դէպի անդադար առաջադիմութիւն. դա է ծնում հանճարները, արհեստը, գիտութիւնը եւ աշխարհի բարօրութիւնը:

Դժգոհութիւնը իր վիճակից՝ մի ազնիւ գրգիռ է, որ տանում է դէպի նրա բարեօրոճումը:

Որպիսի բնաւորութիւններ յայտնուում են անհատների մէջ, նոյնպիսիք եւ յայտնուում են ամբողջ ժողովուրդները եւ ազգերի մէջ: Որովհետեւ բոլորը կազմուած է մասերից. ինչ որ մասերն են, այն եւ բոլորն է:

Կան ազգեր, որ շատ գոհ են իրանց վիճակից, կարծում են, թէ ամէն բան ունեն եւ իրանց թերութիւնները չեն տեսնում: Կան նաեւ ազգեր, որքան առաջ են գնում, որքան արդիւնաբերում են, որքան կատարելագործուում են, ա՛նքան դժգոհ են...

ԻՇԽԱՆՈՒՅԻ ԴԻԱՆԱ

Շարունակում էջ 13-էն

որն էլ միզուցէ նախօրօք կազմակերպուած վթարն էր՝ փրկելու համար թագաւորական ընտանիքի պատիւը...:

Եթէ Դիանան չմահանար, համոզուած ենք, որ նա կը լինէր Մայր թերեզայի ազնիւ գործը շարունակող ամենանուիրուած անձերից մէկը:

Դիանայի խոկումներից.

1. Օգնել կարիքաւոր մարդկանց կարեւոր մասն է կազմում իմ ճակատագրի:
2. Իւրաքանչիւր մարդ պէտք է արժեքաւորուի: Իւրաքանչիւր մարդ ունի պոտենցիալ ինչ որ բան տալու, աջակցելու:
3. Ես ուզում եմ, որ մարդիկ մտածեն իմ մասին, ինչպէս որեւէ մէկի, ով հոգում է իրենց մասին:
4. Ներսիս ձայն ասաց. «Դու չես կարող թագուհի լինել, բայց դու մեծ դեր ունես կեանքում»:
5. Ես ուզում եմ լինել մարդկանց սրտի թագուհին, բայց ես ինձ չեմ տեսնում այս երկրի թագուհու դերում: Ես չեմ կարծում, որ շատ մարդիկ կ'ուզեն, որ ես դառնամ թագուհի:
6. Ես մտածում եմ, որ աշխարհում մարդկանց տանջող ամենամեծ հիւանդութիւնը չսիրուելու զգացմունքն է: Ես գիտեմ, որ ես կարող

եմ տալ սէր մէկ րոպէի, կէս ժամուայ, մէկ օրուայ, մէկ ամսուայ համար: Ես կարող եմ տալ ու ես շատ երջանիկ եմ անել այդ եւ ուզում եմ անել այդ:

Ստացածս նամակը.

Իշխանուհի Դիանա Բժիշկ Լեւոն Թոփոզեան Իլիմոյսի համալսարանի պրոֆեսոր

Մեկն բոլորս վշտացած եմք իշխանուհի Դիանայի մահով: Ստորեւ բերում է որոշ փաստացի տեղեկութիւններ մահի մասին:

Մի քանի տարի առաջ իշխանուհի Դիանայի մասին գրուածքներից ես եզրակացրեցի, թերեւս ազգայնամոլութեամբ, նրա հայկական արմատների մասին: Թէկուզ եւ նա ընդամենը 1/64-ով է հայ (ինչպէս ցոյց է տրուած ստորեւ), կարծես թէ նա օժտուած է հայ կնոջ ուժեղ յատկանիշներից շատերով: Այդպիսով, նրա գաւակները, եւ հաւանաբար Անգլիայի ապագայ թագուհու, օրինում կը լինեն հայկական գեներով:

Իշխանուհի Դիանայի հեռաւոր նախնիներից է Էլիզա Բեւարքը՝ Հնդկաստանից մի հայուհի: Մի քանի տարի առաջ, իշխանուհի Դիանայի մահից յետոյ, նրա հայկական տանը տարօրինակ տպւթով գրութիւններ գտնուեցին, եւ պարզուեց, որ դրանք Էլիզայի գրած հայե-

ԱՐԱԲԱԿԱՆ ԱՇԽԱՐՀ - 2014

Շարունակում էջ 8-էն

դժուարանայ:

Կը կարծուի թէ սուրիական տագնապը կրնայ մասամբ լուծուիլ եթէ ԱՄՆի եւ Իրանի միջեւ հիւլէական ոյժի գործածութեան մասին մտաւոր ապագային տեղի ունենալիք բանակցութիւնները յաջող եզրակացութեան մը յանգին: Մինչ այդ երկրի անապահով վիճակը կը շարունակուի: Իսկ Ռուսաստան կը ծրագրէ Մոսկուայի մէջ կայացնել խորհրդակցական ժողով մը Սուրիոյ վարչակարգային ոյժերու եւ ընդդիմադիրներու միջեւ:

ԻՐԱԲ

Շուրջ 35 միլիոն բնակիչ ունեցող Իրաքի քաղաքացիական կռիւները մասամբ դադրած ըլլալով հանդերձ, երկրէն ներս կը տիրէ ծայր աստիճանի անապահով վիճակ: Իսկ իսլամական պետութիւն հաստատելու երազանքէն տարուած ՏԱԷՇ (ISIS) ծայրայեղական գինեալ կազմակերպութիւնը օր ըստ օր է իր աւերները կը գործէ երկրէն ներս, սարսափի այլիքները ստեղծելով ամենուրեք:

Այս ահաւոր իրավիճակի դիմաց եւ իրենց ազգային շահերէն տարուած բրիտանացիներ եւ արեւմտեան այլ երկրիւններ կը ծրագրեն մարդուժ դրկել դէպի Իրաք, մարզելու համար իրաքեան բանակը: Այլապէս ՏԱԷՇ պիտի շարունակէ իր աւերները գործել եւ ահաւոր վիճակ ստեղծել երկրէն ներս:

Իր հերթին ամերիկեան օդուժն ալ սկսած է ուժեղանալ տաէշական գինեալներու կեդրոնները եւ անօդաչու սաւառակներով տեղեկատուութիւններ քաղել անոնց շարժումներուն մասին:

ԱՄՆի նախագահ Պարաք Օպաման եւս համաձայն գտնուեցաւ կրկնապատկել եւ ի հարկին աւելցնել ամերիկեան բանակայիններու թիւը, նպատակ ունենալով մարզել Իրաքի բանակը: Իսկ արեւմտեան ԱՄՆի դաշնակից երկիր շուտով պիտի դրկել 1500 զինուորները:

Իրաքի մէջ տեղահանուած գաղթականները անցնող տարուան ընթացքին միայն Միացեալ Ազգերու Գաղթականներու Օժանդակ Մարմ-

նի կողմէ ստացան 202 միլիոն տոլարի մարդասիրական օգնութիւն, ձմրան եղանակին պատասպարաններ ապահովելու համար:

Գալով Իրաքի հիւսիսը գտնուող Քիւրտիստանի ինքնավար պետութեան անոնք եւս կը պատրաստուին ինքնապաշտպանական կռիւներ մղելու ՏԱԷՇի հաւանական յարձակումներուն դէմ: Աւելի քան չորս միլիոն բնակիչ ունեցող Իրաքի Քիւրտիստանը ունի համեմատաբար զօրաւոր պաշտպանական բանակ եւ մօտէն կը գործակցի Իրաքի սիւնիներու հետ:

ՊԱՂԵՍՏԻՆ

Պաղեստինը դիմակալող տասնեակ տարիներու հականահարցը 1967ի պատերազմի սկզբնաւորութիւն եղած սահմաններով անկախ պետութեան ճանաչումն է: Այս հարցի լուծման արգելք հանդիսացող գաւառի խոչընդոտը իսրայէլն է, որ ցարդ ապօրինի հողատարածքները գրաւելով ժողովրդային բնակարաններու կառուցումով կը զբախի: Այս գործընթացին մէջ ան միշտ ալ անտեսած է ՄԱԿի որոշումներն ու ԱՄՆի թելադրանքները: Այսու հանդերձ բարի կամքի տէր երկիրներու կողմէ Պաղեստինի անկախ պետութիւնն սկսած է պաշտօնապէս ճանաչուած են թարկուիլ: Շուէտի կողմէ եղած ճանաչումէն ետք այժմ նոյնանման որոշումներ առնելու մասին կը մտածեն Ֆրանսան, Իտալիան, Սպանիան եւ Եւրոմիութեան անդամ կարգ մը այլ երկիրներ: Անոնք բաղձալի կը գտնեն որ այս առնչութեամբ երկկողմանի խաղաղութեան բանակցութիւններ տեղի ունենան իսրայէլի եւ Պաղեստինի պետութեան միջեւ: Նշենք նաեւ որ Եւրոպական Միութեան խորհրդարանը, իր մեծամասնութեամբ համամիտ է որ ճանաչումի դրական քայլ մը առնուի:

Նշենք նաեւ որ ամրան Կազախի վրայ եղած ահաւոր յարձակումներուն պատճառը շրջանը մեծ վնասներու ենթարկուած է ստեղծել ընակարանային եւ ապրուստի մեծ տագնապ: Բազմահազար անօթեւան բնակիչներ հակառակ իրենց դժուարին օրերուն, տակաւին յոյս ունին ապրելու բարօր կեանք մը, որուն համար կ'ապաւինին միջազգային ընտանիքին:

ընդ գրութիւններ են ուղղուած իր գաւակներին ու թոռներին: Իշխանուհի Դիանայի տոհմաձուր հետեւեալ տեւսն ունի. Էլիզա Բեւարքը ամուսնացել է շոտլանդացի վանառական Թէոդոր Ֆորբսի հետ, նրանց զուստ Գեորգի Մոսկուայի Գրքերի Գործարարական Սոցիալական Կոմիտեի հետ (Արքեպիս Բաղադից), նրանց զուստ Ալեքսանդր Գեորգի Մոսկուայի Գրքերի Կոմիտեի հետ, նրանց զուստ Ռուբ

Սիլվիա Գրիլը՝ Լեդի Դիանայի տատր, ամուսնացել է Լորդ Ֆերմոյի հետ, եւ նրանց զուստը Ֆրենսիս Ռուբ Բուրկէ Ռոչը ամուսնացել է Լեդի Դիանայի հոր՝ Սիմոնի 8-րդ Կոմսի հետ:

Արժանայիշատակ է նաեւ այն, որ Էլիզա Բեւարքը կոչուել է նաեւ տիկ. Ֆորբսեան հայկական ազգանունների բնորոշ վերջաւորութեամբ: Հայկական եւ շոտլանդական (կելտական) գեները իշխանուհի Դիանային դարձրել են բացառիկ:

ՎԱՐՉՈՒ ՄՐԱՅ
ՓԱՍՏԻՆԱՅԻ ՄԷՋ (200 ՅՈԳԻ ՅԱՄԱՐ)
ԱՄԵՆ ՏԵՍԱԿ ԱՌԻԹՆԵՐՈՒ ՅԱՄԱՐ
1060 N. ALLEN AVE. PASADENA CA 91104
ՄԱՆՐԱՄԱՍՆՈՒԹԻՒՆՆԵՐ՝
ՅԵՈԱԶԱՅՆԵԼ (626) 797-7680

ՄԱՍԻՍ - 2015

ԲԱՐԻ ԵՐԹ ՇՈՒՇԻՈՒՄ ԿԱԶՄԱԿԵՐՈՒԱԾ ԱՍՍՈՒՆՔԻ ԴԱՄԱՐԱՅՎԱԿԱՆ ՓԱՌԱՏՕՆԻՆ

Շարունակում է 31-էն

հայեացքի մէջ... Որքան էլ փորձում էի ժպտալ ու անհոգ երեւալ, միեւնոյն է աչքերը հոգու հայելին են:

Այստեղ ծանօթացայ մի որդեկորոյս մօր, որն ասում էր, հարկ եղած դէպքում, մենք էլ կը գնանք կռուելու, ոչ մի թիզ հող ետ չենք տայ...

Որդեկորոյս մօր բեկբեկուող ձայնում հպարտ վճռականութիւն կար, իմ հայեացքում՝ ակնածանք ու հիացմունք: Այդ պահին ես միայն աղօթում էի, որ խաղաղ երկիրք լինէր որ ոչ մի հայ մօր սրտում զաւակի կորուստը փլատակներ չտայ:

Այո, գրեթէ 100 ամեայ ընդմիջումից յետոյ, ճակատագրի ընձեռած անկախութիւնը մեզ սեփական բանակ ունենալու հնարաւորութիւնը տուեց:

Կարճ ժամանակում մենք կարողացանք ոչ միայն կազմակերպուած բանակ ունենալ, այլև մեր դարաւոր ոստիին ցոյց տալ մեր բազկի ու գէնքի ուժը, նրան դուրս չարտելով մեր հինաւուրց հայրենիքի չքնաղ բեկորից՝ ազատագրուած Արցախից:

Ամունքի համահայկական փառատօնի մասնակիցների համար կազմակերպուած էր մի շարք միջոցառումների շարք՝ կերպարուեստի թանգարանի շէնքում՝ դասական երաժշտութեան համերգ, որին ներկայ էր նաև ԼՂՀ-ի Մշակույթի նախարարուհին, տեսանք մեր չքնաղ Գանձասարը՝ իր երկնահոգ լեռներով ու կիրճերով, յուշարձան

կոթող, «Մենք ենք, մեր Լեռները», որը շատերին յայտնի է որպէս «Պապիկ-Տատիկ» յուշարձան, որը տեղադրուել է 1967ին: Յուշարձան կոթողի քանդակագործն է Հ.Հ. Ժողովրդական նկարիչ Սարգիս Բաղդասարեանը, ճարտարապետն է Եուրի Յակոբեանը: Այն խորհրդանշում է արցախեան հողի եւ Ժողովրդի արմատների միջեւ արիւնակցական կապը եւ լեռների նման ամուր ու հաստատ դարաբաղցի պայտիկին ու մամիկին:

Տեսանք նաև «Զոնտիկների» (հովանոցներ) կոչուող հրաշք տեսարժան վայրը, որին հասնելու եւ վերադառնալու ճանապարհը տեւեց շուրջ 4 ժամ քայլելով, բարձրաբերձ լեռների ու ձորերի եզերքով:

Եղանք նաև Ստեփանակերտում, որի հրապարակում ողջ ժողովուրդը ազգագրական պարերի դոփիւններով շուրջպար էր պարում: Իւրաքանչիւր դոփիւն մէկ անգամ եւս հաստատում էր մեր անպարտելիութեան մասին:

Հրաժեշտի գիշերը «Շուշի Պլագա» հիւրանոցի բակում կազմակերպուած էր խարոյկ, որի շուրջը հնչում էին հայրենասիրական երգեր, երգիչներ՝ Տիգրան Մկրտչեանի եւ Գէորգ Հաճեանի կատարմամբ:

Ի դէպ Գէորգ Հաճեանը մեզ հետ էր ողջ ճանապարհորդութեան ընթացքում իր հայրենաշունչ երգերով ու խօսքերով: Նա պատասխանատուն էր նաև Լիբանանից եւ Սիրիայից ժամանած մասնակից պատանիների:

Կրակի շուրջը ասմունքում

էին ցանկացողները: Ամէն կողմ երգ ու երաժշտութիւն էր, պար եւ ուրախութիւն:

Այս անմոռանալի ճամբորդութիւնը աւարտուեց Տաթեւ վանքի նաև աշխարհի ամէնից երկար ճոպանուղիի եւ Զօրաց քարերի անհուն տպաւորութեամբ:

Ռոքուել Գենթին ասել է.

«Ակամայից զարմանում ես, որ աշխարհի այնպիսի մի անկիւնում կարելի է հանդիպել այնպիսի յուշարձանների եւ այնպիսի մարդկանց, որոնք կարող էին լինել ամբողջ աշխարհի գարդն ու հպարտութիւնը:

Այո՛, չի սխալում ամերիկացի գրողն ու նկարիչը: Իմ երկիրն ու Ժողովրդին ճանաչողները չեն կարող չհիանալ մեր ճարտարապետութեան վեհութեամբ ու պատմական յուշարձանների հարստութեամբ, մարդկանց բարութեամբ ու անմիջականութեամբ:

Շուշիից վերադառնալուց յետոյ ինձ հաճելի անակնկալ մատուցուեց Հ.Հ. Սփիւռքի նախարարութեան կողմից: Ինձ շնորհուեց Սփիւռքի նախարարութեան «Մայրենի դէպքան» ոսկէ մետալը, որը յանձնուեց հանդիսաւոր արարողութեամբ Սփիւռքի նախարարուհի Հրանուշ Յակոբեանի կողմից: Ներկայ էին մտաւորականներ, արուեստագէտներ, որոնց մէջ էին նաև Հ.Հ. Ժողովրդական արտիստուհի դերասանուհի Վարդուհի Վարդեբեանը, Երեւանի պետ. Համալսարանի արեւելագիտական ֆակուլտետի դեկան՝ ակադեմիկոս Գուրգէն Մելիքեանը, Հայրենակցական Միութիւնների նախագահ՝ Ժողջֆ Աւետիսեանը, նաև եղբայրներս՝ Սարգիս եւ Վազգէն Գրբոյեաններ եւ նրանց ընտանիքները եւ բազմաթիւ այլ անձեր:

ները եւ բազմաթիւ այլ անձեր: Յանձնման արարողութիւնից յետոյ իր խօսքն ասաց ինձ շատ մտերիմ դերասանուհի, հայ բեմի թագուհի Վարդուհի Վարդեբեանը, որից յետոյ ես արտայայտուեցի, պարտաւորուելով շարունակել իմ առաքելութիւնը մայրենի լեզուի անադարտ պահպանման գործում, շարունակել սիրելի դարձնել մեր մայր լեզուն օտար ափերում ապրող հայ երեխաների համար, որպէս հայկեան նետի սարսափազու շառաչ, Նարեկացու մշտամորմոք աղօթք, այն լեզուն, որը հայ ժողովրդի հետ դարերի դաժան փորձութիւնների երկար ճանապարհ է անցել, փորձութեան պահին օլիմպիական ջահի նման բոցկլտացել է մեր ժողովրդի ճանապարհին եւ բազում «ամպրոպաշունչ գիշերներին», արհաւիրքների ու սարսափների միջով ուղեկցել է մինչեւ լուսաւոր ափեր:

Այո, իմ առաքելութիւնն է Լարքի ուսանողներին եւ մասնաւորապէս իմ հայերէն լեզուի եւ գրականութեան դասարանի ուսանողներին սովորեցնել՝ հնչեցնել մեր լեզուն քաղցր ու սրտաբուխ, յաղթական ու սէզ, ինչպէս իր կրող հայ ժողովուրդը: Սովորեցնել նրանց, հաւատարիմ մնալ մեր նախնիների աւանդույթներին եւ մաքուր ու անադարտ աւանդել յետագայ սերունդներին:

Եւ այս ուրբ առաքելութեանը կը նպաստի աւանդույթ դարձած ասմունքի համահայկական մրցույթ փառատօնը, որը զալիք տարիներին կ'ընդգրկի աշխարհով մէկ տարածուած աւելի ու աւելի հայ պատանիներ ու պարմանուհիներ:

Բարի երթ ասմունքի համահայկական փառատօնին...

ՌՈՒՄ ՓԵՍԱՆ՝ Ի ԶԱՃԸՆ

Շարունակում է 32-էն

կարծե՞ս որ ես եւ տղաքս քնացեր ենք. ապահով եղի՛ր, ուշի ուշով կը հետեւինք անոնց եւ երբ ժամանակը գայ անոնց կեչմիշը կը թաղենք:

-Արա՛մ, ես վրում, այդ ժամանակը ե՞րբ պիտի գայ, - հարց տուեր էր Հաճին գինաթափ եղած:

- Կու գայ՝ երբ բաւական գէնք ձեռք անցընենք. ֆրանսացիք միշտ կը խոստանան բաց չեմ գիտեր ինչու կը ձգձգեն: Սա մեր Պօղոս Պէյն ալ թոյլ մարդ է, ֆրանսացիներուն հըլ հնազանդ կամակատարը, պահանջել չի գիտեր, ստացած հրամանը կը գործադրէ միայն, իր խելքովը հայուն եւ թուրքին միջեւ անաչառութեան հաւասարակշռութիւն պիտի պահէ: Հաճի, դուն ինձի նայէ. սա ամէն գալուղ չե՞ս կրնար գողածածուկ ձեռով մեզի քանի մը բեռ գէնք ու գինամթերք բերել: Կը խոստանամ անպայման պէտք եղած գումարները քեզի ապահովել:

- Մտածեմ, - կմկմացեր էր Հաճին, ձեռով մը խոսափիլ փորձելով:

Բայց Արամ վճռական՝ իր օձիքը բաց չթողուց:

Օր մըն ալ ան մօտեցաւ դարձեալ եւ իր ափին սահեցուց քսակ մը:

- Յիսուս հնչուն ոսկի կայ հոն... ա՛լ պէտք եղածը կարգադրէ դուն... կը սպասենք:

Այդպէ՛ս, կարճ ու կտրուկ՝ ոչ մէկ առարկութիւն վերցնող շեշտով:

Հաճին լա՛ւ կը ճանչնար Արամին բնաւորութիւնը. հակաճառութիւն չէր սիրեր բնաւ եւ յիշաչար

էր: Հակառակ պարագային, կրնար արգելակումներ չառաջացնել իր կարաւաններու հեզասահ ընթացքին դէմ: Որքան զղջաց անոր սրտակցօրէն իր բացուելուն համար: Ա՛լ, բացի հնազանդելէ ուրիշ ճար չունէր: Պահ մը ուսու ժագօպին բեռին «յայտնագործում»ով ան կարծեր էր գտած ըլլալ էլքը, սակայն սղոցարանի սարքի վերածուելով, այդ ալ չէր օգնած եւ Հաճին վերադարձեր էր նոյն մտատանջութեան: Ինք ուրկի՞ց գէնք ճարէր... Բնաւ պիտի չուզեր իր տարիներով վաստկած վտահոլութեան համբաւը վտանգել յաչս ֆրանսացիներուն եւ Պօղոս Պէյնին: Միւս կողմին ալ խիղճը հանդիսատէ էր. իսկպէս որ Հաճին անպահանջ էր. թուրքերը ակնբերեօրէն դժգոհ էին եւ բաներ մը պատրաստելու վրայ էին, իսկ ֆրանսացիք, երկերեսանի դիւանագիտութիւն կը խաղային: Զէնքը մահու կենաց խնդիր էր: Հաճին ունէր այդ գիտակցութիւնը: Ինկեր էր երկու կրակի միջեւ:

Արդէն հասեր էին Գէյկեմուհի կամուրջը, ուրկից կ'երեւէր Հաճրնի ամբողջական ամփիթատորոնաձեւ տեսարանը: Եւ Հաճին անաչաչ չվրիպեցաւ ժագօպ Պէյնին ալլալլած կերպարանքը: Ափ ի բերան մնացած, ան կը դիտէր պարզուող տեսարանը, որ Հաճին համար ոչինչ ունէր զարմանալի:

- Ա՞յս է մի, ձեր այնքան գոված խաճըն ըստածը... - կը բացագանչէր ժագօպ, պիշ պիշ նայելով Հաճինին: Կարծես բացատրութիւն կը պահանջէր անկից իր յուսախաբուութեան համար:

ՆՈՐ ՏԱՐՈՒԱՅ ԲԱՐԻ ԵՐԹԻ ԽՐԱԽՃԱՆՔ

Շարունակում է 27-էն

եղեւ, անմեղ գոհերի յուշարձան խոյացաւ ոստանին նայող բլուրին, աշխարհի հետ մրցող արդիւնաբերական հսկաների ծնունդ եղեւ, շէնացաւ երկիրը, անմշակ հող չմնաց: Մի խումբ անծանօթ ու ապիկար մարդիկ սխալ ընկալեցին «անկախութիւնը», փլեցին երկրի տնտեսութիւնը, տիրեցին հայու եօթանասուն տարիների «արա-

- Ի՞նչ է, ժագօպ Պէյ, եթէ ոչ Փարի՞զ մը կարծեցիր մեր Հաճընը...-

- Ո՛չ, ո՛չ, - կմկմաց ժագօպ...- գոնէ Սիսի կամ Ատանայի պէս ըլլար տափարակ, դաշտի վրայ... շարժելու, շնչելու տեղ ունենար... ինչպէ՞ս կ'ապրիք հոս ուս-ուսի ելած, կռնակ-կռնակի... թուա՞ք քաղաք... աղջի, Վիքթորիա՛... այս

րումը», երկրին անյարիր տնտեսակարգ կիրառկեցին, շատ-շատ «Հայ»-եր փախան երկրից, այդպէս «բա՛ն» կը լինի, ափսոս եղեւ...:

Արմին-հայերի Ամանոր աստուծոյ «Նոր Տարուայ» տօնակատարութիւնը, Արմին-հայերի հեթանոս նախնիների Նաւասարդեան տօների խրախճանքի անթեղուած յուշերի կրակների հրավառութիւնը չէ՞ր արդեօք...:

ո՞ւր բերիր գիս...

Բայց Վիքթորիան անհետացեր էր արդէն: Ան արդէն կամուրջին վրայ, միացեր էր իր քոչրերուն եւ եղբոր եւ չորսով գրկընդխառնուած կը խնդային ու կ'արտասուէին ուրախութեան արցունքներով եւ բացագանչութիւններով::

Ռուս մարդը ինչպէ՞ս հասկնար հայու յորդանոս կարօտն անգսպելի:

OFFICE SPACE FOR RENT IN PASADENA
ՎԱՐՁՈՒ ԳՐԱՍԵՆԵԱԿՆԵՐ
1060 North Allen Ave Pasadena, CA 91104
Գրասենեակները վերանորոգուած եւ յարմար վարձքերով
Յետաքրքրուողներէն հեռաձայնել՝ (626) 398-0506



**ՇՆՈՐՀԱՒՈՐ
ՆՈՐ ՏԱՐԻ ԵՒ
ՍՈՒՐԲ ԾՆՈՒՆԳ**

**Տէր եւ Տիկից
Վազգէն եւ Հայկօ Գալթաֆնեան**

**կը շնորհաւորեն համայն Հայութեան
եւ Ա.Դ.Հ.Կ.ի անդամ անդամուհիներու**

**Նոր Տարին եւ Սբ. Ծնունդը
Մաղթելով Քաջառողջութիւն եւ**

**Ցեղասպանութեան
100-Ամեակի սեմին՝**

**Հայ ժողովուրդի
բոլոր Ծրագիրներու Իրականացում**